全国百佳图书出版单位
时代出版传媒股份有限公司
安徽人民出版社

Հրատարակությունն իրագործվել է
Անհոյի ժողովրդական հրատարակչատան/ՉԺՀ/
թույլտվությամբ և աջակցությամբ:

Ոգի-Նաիրի
Vogi-Nairi

孙维新, 朱旭

中国精粹--世界遗产卷
/中文版本/

Sun Weixin, Zhu Xu

Highlights of China - Chinese World Heritages

/Armenian version/

Translator - Kristine Balayan

Stepanakert 2018

ՍՅՈՒԸՆ ՈՒԵՅՍԻՆ, ՃՈՒ ՍՅՈՒՆ

ՉԻՆԱՍՏԱՆԻ ՅՈՒՐԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Չինաստանի համաշխարհային ժառանգությունը

Թարգմանիչ՝
Քրիստինե ԲԱԼԱՅԱՆ

Ստեփանակերտ 2018

ՀՏԴ 94: 008
ԳՄԴ 63.3+71
ՈՒ 245

«Գեղarm» հանդեսի մատենաշար

Ուեյսին Սյուրն, Սյուն Ճու
ՈՒ 245 **Չինաստանի յուրահատկությունները: Չինաստանի համաշխարհային ժառանգությունը:** Թարգմ. անգլերենից՝ Ք. Բալայան: Ստեփանակերտ, «Ոգի-Նաիրի» հրատ., 2018, 100 էջ:

Չինաստանը չափազանց հարուստ է պատմա-մշակութային հուշավայրերով ու բնատեսարաններով, նաև՝ ոչնյութական արժեքներով, որոնց մի զգալի մասը ներառված է Համաշխարհային մշակութային ժառանգության ցանկում: Գիրքը նվիրված է այդ գեղատեսիլ ու զարմանահրաշ վայրերին՝ ծառայելով իբրեւ ուղեցույց այցելուների եւ այցեհրավերի դեր խաղալով մոտ ու հեռավոր հետաքրքրասերների համար:

ISBN 978-9939-1-0801-8

ՀՏԴ 94: 008
ԳՄԴ 63.3+71

B&R Book Program

© Anhui People's Publishing House
Գրքի հեղինակային իրավունքը պատկանում է
Անհոյի ժողովրդական հրատարակչատանը (ՉԺՀ)

© «Ոգի-Նաիրի»/թարգմանության համար, 2018/

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Բնական հարուստ ռեսուրսներ ունեցող երկրներից մեկը՝ Չինաստանն, ունի մեծ տարածք: Այն հայտնի է նաև իր բազմաթիվ գեղատեսիլ ու պատմական վայրերով, որոնցից որոշներն ամրագրված են Համաշխարհային ժառանգության ցանկում և հանդիսանում են չին ժողովրդի հպարտությունը:

1986 թվականին Չինաստանի կառավարությունը ՄԱԿ-ի Կրթության, գիտության ու մշակույթի կազմակերպության (ՅՈՒՆԵՍԿՕ) հատուկ գործակալությանն է դիմում պատմական որոշ վայրեր ու բնատեսարաններ համաշխարհային ժառանգություն համարելու առաջարկով: Այժմ քսաներեք պատմական հուշարձան-տեղավայր ու բնատեսարան համալրում են Համաշխարհային մշակութային ժառանգությունը:

1. Համաշխարհային մշակութային ժառանգությունից են՝ Մեծ պատը, Մին և Ցին դինաստիաների Կայսերական պալատը, Սինանթրոպոսը Չժոուկոուդյանում, Ցին դինաստիայի առաջին կայսեր դամբարանը թրծակավե բանակով, Մոգաոյի քարանձավային տաճարները Դունհուանգ քաղաքում (ընդունվել է 1987թ.), Կայսերական գերդաստանի ամառանոցը հարակից տաճարներով, Կոնֆուցիոսների սրբավայրերը Ցյուֆույ քաղաքում (Կոնֆուցիոսի ընտանեական կալվածք, տաճար ու գերեզման), հնագույն շինությունները Ուդանշան լեռներում, Պոտալա պալատական համալիրը Լհասայում (1994թ.), Էմեիշան լեռը Լեշան քաղաքում (1996թ.), հնագույն քաղաքներ Լիցզյանը, Պինյաոն, դասական չինական այգիները Սուչժոու քաղաքում (1997թ.), Պեկինի Ամառային պալատն ու Երկնային տաճարը (1998թ.), Դացզուի ժայռաքանդակները (1999թ.), Ցինչենշան լեռն ուԴուցզյանյան ոռոգման համակարգը, Լունմեն բուդդայական անձավային տաճարը, Մին և Ցին դինաստիաների կայսերական գերեզմանները, Սիդի և Հոնցուն անտիկ գյուղերը (2000թ.), Յունգան քարայրները (2001թ.), Կայսերական քաղաքն ու Կոգուրյոյի դամբարանների համալիրը (2004թ.), Մակաո քաղաքի պատմական կենտրոնը (2005թ.), Ցինսյուն՝ Շան կայսրության մայրաքաղաքը (2006թ.), Կաիպին և Դյաոլոու գյուղերը (2007թ.), Տուլոու կավե տները Ֆուցզյան նահանգում (2008թ.), Ուտաի լեռը (2009թ.), Դենֆենի պատմական հուշարձանները (2010թ.), Արեւմտյան Սիհու լիճն ու Հանչժոուի մշակութային լանդշաֆտը (2011թ.), Շանդու պատմական քաղաքն (2012թ.) ու Հունհե Հանի բրնձե սանդղավանդները (2013թ.):

2. Համաշխարհային բնական ժառանգություններից են՝ Ուլինյուան գիտապատմական վայրը, Ցզյուչժաիհոու ազգային պարկը, Հուանլուն բնական հանգստավայրը (1992թ.), Երեք զուգահեռ գետերի գեղատեսիլ տարածքները (2003թ.), Պանդաների բնակավայրերը Սիչուանում (2006թ.), Հարավային Չինաստանի կարստային գոյացությունները (2007թ.), Սանցինշան լեռը (2008թ.), Դանսիա պատմական տարածքը (2010թ.), Չենդզյան բնական հանգստավայրը (2012թ.), Տյանշան լեռնաշղթան (2013թ.):

3. Համաշխարհային մշակութային և բնական ժառանգություններից են՝ Տաիշան լեռը (1987թ.), Հուանշան լեռ-արգելոցը (1990թ.), Էմեիշան լեռը (1996 թ.), Ուիշան լեռները (1999թ.):

Այս բոլոր բնական հանգստավայրերն ու մշակութային հուշարձանները զբոսաշրջիկների համար աննկարագրելի տեսարժան վայրեր են: Դրանք պատկանում են ինչպես չինական ազգին, այնպես էլ՝ ողջ մարդկությանը:

4. Ոչնյութական ժառանգություններից են՝ Մյաոների գուգը, Ցուոչյուենի ճոխ հանգավորումը, Առյուծի պարը, Քուեն օպերան, Ար-րեն ճյուանը, Ուցիաո ակրոբատիկան, Շաոլին մարտական արվեստը, Տիբեթյան թանքան, ձիու պոչամազով ասեղնագործությունը, Ցինգդըշեն խեցեգործական արհեստագործությունը, Սյուան թղթի պատրաստման տեխնիկան, ավանդական չինական ախտորոշումն ու ասեղնաբուժությունն և Գարնանային փառատոնը:

ՄԱՍ 1. ՀՐԱՇԱԼԻ ՄՇԱԿՈՒՅԹ

Համաշխարհային մշակութային ժառանգությունը Չինաստանում

1. Կայսերական պալատը

Համաշխարհային մշակութային ժառանգության ցանկում Պեկինի՝ Մին եւ Ցին դինաստիաների Կայսերական պալատը՝ որպես համաշխարհային մշակութային ժառանգություն, համեմատաբար ավելի վաղ է գրանցվել: Կայսերական պալատը կոչվում է նաև Արգելված քաղաք, որտեղ ապրում էին Մին և Ցին դինաստիաների կայսրերը: Այն ունի ավելի քան 590 տարվա պատմություն և գտնվում է Պեկին քաղաքի կենտրոնում՝ քաղաք՝ քաղաքի ներսում: Շինությունն ունի դեղնագույն, ապակեպատ ծածկ: Իր շուրջը ձգվող կապույտ ջրուղիով ու կարմրապատ պարսպով այն տարանջատվում է բնակչությունից:

Կայսերական պալատի շինարարությունը սկսվել է Մին դինաստիայի Յոնգլ կայսրի կառավարության չորրորդ տարում (1406թ.) և ավարտվել է տասնչորս տարի անց: Ընդհանուր տարածքը կազմում է 720.000 մ^2, ունի 9999 ու կես սենյակ: 3400մ երկարություն ունեցող պալատական պարիսպը ձգվում է պալատից 52մ հեռավորության վրա: Պալատը Մին դինաստիայի տասներկու ու Ցին դինաստիայի տաս կայսրերի օթևանն էր:

Այն այժմ համարվում է աշխարհի ամենախոշոր ու ամենահին ճարտարապետական համալիրը:

Պալատը կառուցված է չինական ավանդական ճարտարապետության ոճով: Պաշտոնական գործերի համար նախատեսված դահլիճները գտնվում են առջևի մասում, ննջասենյակները՝ ետևում, ձախ կողմում գտնվում են նախնիների դամբարանները, իսկ աջ կողմում՝ զոհաբերության տաճարը: Բոլոր դահլիճներն ու սենյակները տեղավորված են կենտրոնական մասում՝ խիստ սիմետրիկ սկզբունքով: «Երկնային մաքրության» դարպասը բաժանում է պալատը: Նրա առջև գտնվում են «Գերագույն ու կենտրոնական ներդաշնակության» սրահները, կենտրոնում՝ «Ներդաշնակության պահպանման» սրահը, իսկ երկու թևերում՝ «Մտավոր զարգացման» ու «Բարձրագույն զինվորականության» սրահները: Այս սրահներում կայսրերը փառահեղ արարողություններ էին կազմակերպում, հարցազրույցներ էին վարում նախարարների հետ ու հրահանգներ տալիս: «Երկնային մաքրության» դարպասի ետևում տեղակայված են վեց արևելյան ու վեց արևմտյան պալատները. և՛ արևելյան, և՛ արևմտյան պալատները նախատեսված էին կայսրերի ու նրանց ընտանիքների առօրյա կյանքի համար:

Արգելված քաղաքի ընդհանուր շինությունը նախատեսված էր կառուցել Երկնային տաճարի նախագծով. «Բարձրագույն ներդաշնակության» դահլիճը (կայսերական գահի դահլիճ), որը գտնվում է բարձր, սպիտակ մարմարե պատվանդանի վրա, խորհրդանշում է կայսրի վեհությունը: «Երկնային մաքրության» ու «Երկրային խաղաղության» սրահները խորհրդանշում են արևն ու լուսինը: Արևելյան ու արևմտյան տասներկու պալատները խորհրդանշում են տասներկու աստղերը: Դրանց ետևում գտնվող սենյակներն ու սրահները խորհրդանշում են շրջապատող համաստեղությունները, իսկ Ոսկե ջրերը՝ Երկնային գետը:

Արգելված քաղաքի գերակայությունը ներկայացված է նաև թվերով: Բոլոր սենյակներն ու սրահները, որոնք օգտագործվում էին անմիջապես կայսրերի կողմից, կազմված են ինը բաժանմունքից ու հինգ միջնորմից: Հին Չինաստանում «ինը» համարվում էր Երկրի վրա ամենաբարձր թիվը, իսկ «ինը-հինգ» համատեղությունը ներկայացնում էր միապետի գերակայությունը: Կայսերական պալատում շատ կառույցների դասավորվածությունն ու ձևավորումը նախագծվում էին ըստ «ինը և հինգ» թվերի:

Չինական ավանդական պատկերացմամբ՝ կայսրը Երկնային վիշապի մարմնացումն է, իսկ վիշապը բացառիկ օրինակ էր, որով ներկայացվում էր կայսրը: Այսպիսով, կայսերական պալատում բոլոր շինվածքների, կահույքի, իրերի ու ձեռքի աշխատանքների վրա կատարում էին վիշապի ու փյունիկի (կայսրն ու թագուհին) զարդանախշեր: Կայսրը կրում էր վիշա-

պի տեսք հաղորդող հագուստ եւ նստում վիշապաձև աթոռի վրա: Նույնիսկ կայսրության կնիքի վրա վիշապ էր փորագրված: Հաշվելով, որ յուրաքանչյուր տանիքի վրա տեղադրված էր վեց գլխանի վիշապ, կայսերական պալատում բոլոր դահլիճների ու սենյակների տանիքների վրա կային վաթսուն հազար վիշապանախշեր: Դրանց ավելացնելով կայսրի կողմից օգտագործվող այլ զարդարանքների ու իրերի վրա առկա վիշապանախշերը, այսպիսով՝ պալատում կային մոտ մեկ միլիոն վիշապատեսք նախշեր:

2. Պեկինի Ամառային պալատը

Ամառային պալատը, որը գտնվում է Պեկին քաղաքի արևմտյան մասում, լավագույն դասական այգին է Չինաստանում և ամենահայտնի այգիներից մեկն աշխարհում: Այն 1998թ. ընդգրկվել է ՅՈՒՆԵՍԿՕ-ի Համաշխարհային ժառանգության ցանկի մեջ:

Սկզբում այն կառուցվել է որպես ժամանակավոր պալատային պարտեզ՝ Ցին դինաստիայի Ցինլոն կայսրի կառավարման տասնհինգերորդ տարում(1750թ.): Ամառային պալատը կառուցելու համար կայսրը հավաքել է երկրում գտնվող ամենահմուտ աշխատողներին: Քսիանֆենգ կայսրի կառավարման տասներորդ տարում (1860թ.) բրիտանա-ֆրանսիական դաշնակից զորքերը հրդեհեցին այն: Խուանցյու կայսեր թագավորության 14-րդ տարում (1888թ.), Ցի Սի կայսրուհու հրամանով այն վերակառուցվել է և վերանվանվել Ամառային պալատ՝ օգտագործելով չինական նավատորմի ընդլայնման համար հատկացված ողջ գումարը:



Ամառային պալատը զբաղեցնում է մոտ 2.900.000 մ^2 տարածք: Պալատի առջև փռվում է Քունենմին լճի գեղեցիկ տեսարանը, կողքին Երկարակեցության բլուրն է: Արևմտյան բլուրներն ու Գարնանային բլուրն աչքի են ընկնում ավելի քան 3.000 պուրակային ճարտարապետության կառույցներով, որոնք ներդաշնակորեն ձուլվելով բնական տեսարանին՝ ստեղ-

ծում են յուրահատուկ չինական այգի: Այգին բաժանված է երեք մասի. երկու մասերը պալատական սրահներն են՝ Երկարակեցության «Բարեկեցություն» սրահը, որտեղ տեղակայված են վարչական տարածքն ու «Յու-Յան»(նեֆրիտե ծփանք) սրահը և Երկարակեցության «Երջանկություն» սրահը, որոնք հանդիսանում են կայսերական ընտանիքի կեցավայր: Երրորդ մասը Երկարակեցության բլրի ու Քուենմին լճի բնական տարածքն է:

Երկարակեցության բլրի ստորոտին գտնվող ճարտարապետական համալիրը ամառային պալատի սերուցքն է: Առանցքային շինություններից աչքի ընկնող «Յուն սիանսեն»(ամպերը փարատող տաճար), «Ֆուսյանթին»(Բուդդայի անուշահոտ տաճար) և «Շիխուեյ հայ շըն միաո»(Իմաստության ծով) տաճարները տեղակայված են «Իմին սը» տաճարի(արտագաղթի տաճար), «Ուըծիատալո»(Պենտագոնի սրահ) և «Ժենգուին դե յուն թին»(թանկարժեք ամպի սրահ) սրահների շուրջը: Բլուրների վրա թիկնած այս տաճարներն ու սրահները գերիշխում են բոլոր մյուս տեսարժան վայրերի վրա: 41մ բարձրություն և 20մ քարե հիմք ունեցող Բուդդայի անուշահոտ տաճարը Ամառային պալատի խորհրդանիշն է: «Յուն սիանսեն» տաճարի շուրջ կենտրոնացված պալատական սենյակներում Ցի Սի կայսրուհին շնորհավորանքներ էր ստանում պաշտոնյաների կողմից իր ծննդյան օրվա առթիվ: Սերտորեն կապված լինելով Չինաստանի պատմության հետ՝ Ամառային պալատը մի շարք կարևոր պատմական իրադարձությունների օրրան է: Պալատի հյուսիս-արևելյան կողմում գտնվող այգիների այգին՝ Խըսի սիյուեն (առաքինության ու ներդաշնակության այգի), կատարյալ է դառնում իր տաղավարներով, միջանցքներով, կամուրջներով, ծառերով, ծաղիկներով ու վտակներով:

Ամառային պալատը, չինական կանաչապատ այգիների հազարամյա պատմության մեջ, նմանը չունեցող մի կոթող է:

3. Երկնային տաճարը

Երկնային տաճարը չինական ճարտարապետության ամենամեծ զոհասեղանն ունեցող կառույցն է, որը 1998թ. ՅՈՒՆԵՍԿՕ-ի կողմից գրանցվել է որպես Համաշխարհային մշակութային ժառանգություն: Պեկին քաղաքի հարավում գտնվող համալիրի շինարարությունը սկսվել է Մին դինաստիայի Յունլե կայսեր թագավորության 18-րդ տարում (1420թ.)՝ որպես կայսերական պալատ: Մոտ 2.700.000մ^2 տարածք զբաղեցնող այդ վայրում Մին և Ցին դինաստիաների կայսրերը զոհաբերության արարողություններ էին կատարում՝ երկրպագելով Երկնքի ու Երկրի աստվածներին և աղոթե-

լով բերքառատ տարի ունենալու համար:

Հետևելով չինական «կլոր Երկինք ու քառակուսի Երկիր» գաղափարին՝ Երկնային տաճարի պատը հյուսիսային մասում կլորավուն է, իսկ հարավային մասում՝ քառակուսի: Տաճարի նախագիծը, կառուցվածքն ու ձևավորումը չինական ճարտարապետության ու շինարարության նվաճումներից է: Դա, իրոք, անգնահատելի համաշխարհային ժառանգություն է: Կառույցը բաժանված է Ներքին և Արտաքին տաճարների: Ներքին տաճարի հարավային մասում գտնվում են Կլոր զոհասեղանն ու Կայսերական դամբարանը, հյուսիսային մասում՝ Բերքի աղոթարանը, Երկնքի աղոթարանն ու Բերքի աղոթարանի դարպասները:

Բերքի աղոթարանը, որտեղ կայսրը աղոթում էր առատ բերք ստանալու համար, կլորիկ, 32մ տրամագծով ու 38մ բարձրությամբ, եռաշարք քիվերով ու կապույտ կղմինդրե տանիքով կառույց է: Այդ ամբողջ ծանրությունը իրենց վրա են կրում «նանմու» (կարմրափայտ) ծառատեսակի փայտից պատրաստված 28 խորհրդանշական հսկա սյուները: Կենտրոնական 4 սյուները կոչվում են Երկնային հաղորդակցման սյուներ, որոնք խորհրդանշում են տարվա չորս եղանակները: 12 միջանկյալ ոսկեգույն սյուները խորհրդանշում են 12 ամիսները: Արտաքին 12 օժանդակ սյուները խորհրդանշում են օրվա 12 զույգ ժամերը: Արտաքին ու միջանկյալ 24 սյուները միասին խորհրդանշում են ավանդական չինական օրացույցով արևային համակարգի 24 պայմանաշրջանները: Իսկ աղոթարանի բոլոր 28 սյուները միասին խորհրդանշում են 28 համաստեղությունները: 28 սյուները, արտաքին տաճարի 8 վերին սյուների հետ միասին, խորհրդան-

շում են պատերազմի 36 հզոր աստվածներին: Ծայրամասում գտնվող սյունը, որը կոչվում է Կայծակի աստծո սյուն, խորհրդանշում է կայսերական ինքնիշխանությունն Երկրի վրա:

Կլոր զոհասեղանը եռաքիվ քարե շինվածք է, որտեղ կայսրերը զոհաբերություններ էին մատուցում ձմեռային արևադարձին: Եվ ցանկապատի ճաղերը, և երեք հարկաշարքերի աստիճանների քանակը ինքնի բազմապատիկներ են, որոնք խորհրդանշում էին կայսրության գերակայությունը: Եթե մեկը կանգնի ու նույնիսկ ցածր ձայնով խոսի վերին սանդղավանդի կենտրոնում գտնվող կլոր քարե սալիկի վրա, ձայնային ալիքի անդրադարձման սկզբունքի ճշգրիտ կիրառման շնորհիվ, ձայնն ավելի ուժեղ ու հնչեղ կհնչի՝ արարողության ժամանակ ստեղծելով խորհրդավոր մթնոլորտ:

4. Մեծ պատը

Մեծ պատը չինական ազգի խորհրդանիշն է: Նրա գալարուն ճանապարհի երկարությունը կազմում է 6.700 կմ և հաճախ կոչվում է «Տաս հազար լի երկարությամբ Մեծ պատ»: Ճարտարապետության պատմության մեջ համարվում է հազվագյուտ, «ճիշտ ռազմական պաշտպանություն ու-

նեցող» նախագիծ: 1987թ. այն ընդգրկվել է ՅՈՒՆԵՍԿՕ-ի Համաշխարհային մշակութային ժառանգության ցանկի մեջ:

Շինարարական աշխատանքները տևել են ավելի քան երկու հազար տարի: Շինարարությունը սկսվել է Ք.ա. յոթերորդ դարում, երբ, մինչև Մին դինաստիայի ի հայտ գալը, Չու թագավորությունում կառուցվեց «քառակուսի քաղաքը»: Շինարարությանը մասնակցել են ավելի քան քսան թագավորություններ ու դինաստիաներ: Ցին, Հան և Մին դինաստիաների կառավարման տարիներին յուրաքանչյուր կայսր պատի երկարությունն ավելացրեց ավելի քան 500 կմ-ով: Բոլոր թագավորությունների ու դինաստիաների ներդրած ուժերի արդյունքում կառույցի երկարությունը հասավ մոտավորապես 7.000 կիլոմետրի: 1մ լայնությամբ և 5մ բարձրությամբ պատի կառուցման համար օգտագործված քարով ու կավով կարելի է ամբողջ աշխարհը մեկ անգամից ավել պատնեշել:

Մեծ պատը թանգարան է բաց երկնքի տակ՝ հսկայական մարմնով թիկնած լեռնագագաթներին, ասես լեռնային զիգզագաձև ճանապարհի ուրվագիծ լինի: Այն նման է հզոր վիշապի և խորհրդանշում է չին ժողովրդի անդուլ ջանքերը:

Մեծ պատը կազմված է նաև հարյուրավոր կիրճերից ու ամրոցներից, որոնք օժտված են արվեստի անսահման թովչանքով: Մի՞թե ճարտարապետության պատմության մեջ դա աշխարհի հրաշալիք չէ: Պեկինի մոտ գտնվող պատի «Բադալին» հատվածը շատ ամուր է և լավ պահպանված. զբոսաշրջիկների համար այն ամենահարմար վայրն է: Ձմռանը, երբ «Բադալինը» պատված է լինում ձյունով, կախարդում է իր առնական հմայքով՝ լեռները պարում են հանց արծաթե օձեր, իսկ սարահարթերը սլանում են ինչպես անագե փղեր: Մեծ պատը «Բադալինից» ձգվում է այլ ուղղություններով՝ դեպի Ծինշանլին, Մութիենյու, Սիմաթա, Գուպեյքաու Խուանխուաչը, Ճիյոնգուը կիրճ, Շանհայկուեն ու Ծյայուկուը կիրճեր: Բարձունքից բացվում է մի հրաշալի տեսարան՝ երկար արծաթե մանյակ կապույտ աստղի պարանոցին:

Գանսու նահանգի արևմտյան սահմանին գտնվող Դունհուանգ քաղաքը Դեղին գետ տանող միջանցքի դարպասն է: Գետը նման է «Մետաքսի ճանապարհի» վրա ընկած շողշողուն մարգարտի: Դունհուանգ քաղաքում գտնվող Մոգաոյի քարանձավային տաճարները ևս 1987թ. գրանցվել են ՅՈՒՆԵՍԿՕ-ի Համաշխարհային մշակութային ժառանգության ցանկում:

5. Մոգաոյի քարանձավային տաճարները

Մոգաոյի քարանձավային տաճարները, որոնք կոչվում են նաև Բուդդայի հազարավոր քարանձավներ, հինգ շերտով փորված լինելով Մինշան լեռան արևմտյան զառիվերում, 1.600 մ երկարությամբ ձգվում են հյուսիսից հարավ: Նրա շինարարությունը սկսվել է Ցին դինաստիայի կայսր Ցինյուենի թագավորության երկրորդ տարում (366թ.): 492 քարանձավային տաճարները պատկանում էին 16 դինաստիաների, որոնցից 32-ը՝ Հյուսիսային և Արևմտյան Վեյ դինաստիաներին, 110-ը՝ Սույ դինաստիային, 247-ը՝ Թան դինաստիային, 36-ը՝ Հինգ դինաստիաներին, 45-ը՝ Սուն դինաստիային, 8-ը՝ Յուան դինաստիային: Խոշոր որմնանկարներով, 2.415 գունավոր քանդակներով, Թան դինաստիային պատկանող 5 փայտե կառույցներով և ավելի քան 50.000 գեղագրության ու նկարչության նմուշներով և մշակութային այլ ստեղծվածքներով հարուստ քարանձավային տաճարները հին չինական արվեստի գանձարան են:

Տաճարներում, հիմնականում, կավե քանդակներ ու որմնանկարներ են: Ամենափոքրը Բուդդայի արձանն է՝ ընդամենը 10 սմ: Կան Բուդդայի միայնակ ու խմբային արձաններ: Խմբային արձաններում Բուդդայի արձանը գտնվում է կենտրոնում՝ շրջապատված պահապան աշակերտների՝ Բոդհիսատտվասի, Դիվարաջասի և Հերկուլյանի արձաններով: Դրանք հիմնականում անտիկ ժամանակաշրջանի գործեր են, իսկ բարձրաքանդակ, հարթաքանդակ և խորաքանդակ պատկերաձևերը ի հայտ են եկել ավելի ուշ: Դանհուան քարանձավում առանձնահատուկ տեղ են զբաղեցնում քանդակագործության ու գեղանկարչության միաձուլումից ստեղծված աշխատանքները: Հատկապես աչքի են ընկնում նրբագեղ զարդապատկերները: Քարանձավին յուրահատուկ գեղեցկություն հաղորդող այդ գործերով կարելի է զարդարել 2մ բարձրությամբ ու 25 կմ երկարությամբ

պատկերասրահ: Որմնանկարները արտացոլում են տվյալ ժամանակաշրջանի կյանքն ու աշխատանքը, մշակույթը(երաժշտություն, պար ու ակրոբատիկա), հագն ու կապը՝ դրանք ներկայացնելով վառ երանգներով ու նրբաճաշակ ոճով: Այդ հատընտիր պատկերներով ու քանդակներով կարելի է ուսումնասիրել մթ. 4-14 դարերի չինական հասարակությունը և չինարտասահմանյան փոխմշակութային կապերը:

6. Ցին դինաստիայի առաջին կայսեր դամբարանն ու թրծակավե բանակը

Ցին դինաստիայի առաջին դամբարանը՝ թրծակավե բանակով, Չինաստանի պատմության մեջ արձանագրված առաջին դամբարանն է՝ կառուցված կայսեր համար: Այն ՅՈՒՆԵՍԿՕ-ի Համաշխարհային մշակութային ժառանգության ցանկում ներառվել է 1987թ.:

Դամբարանը հայտնաբերել են Շենսի գավառի մայրաքաղաք Լինթոնի մոտ գտնվող Լինշան լեռան հյուսիսային ստորոտում: Ինչպես նշված է «Պատմաբանների գրառումների» մեջ, Ցին դինաստիայի առաջին կայսր Ցին Ժենը այնքան էր հիացած լեռան հարավային մասում գտնվող նեֆրիտի հսկայական պաշարով, որ հրամայել է իր մարմինը հողին հանձնել հենց այդտեղ: Ք.ա. 246թ., գահ բարձրանալուց անմիջապես հետո, Ցին

Ժենը հանդիսավորապես սկսեց իր դամբարանի շինարարությունը: Ք.ա. 221թ., քանի որ նա նվաճել էր մյուս բոլոր վեց թագավորությունները, 700.000 գերիներով, ըստ նախագծի, սկսեց շինարարությունը, որը, սակայն, ավարտված չէր, երբ նա մահացավ Ք.ա. 210թ.: Դամբարանի շինարարությունն ընդհանուր առմամբ տևեց երեսունհինգ տարի:

Դամբարանն իր չափսերով եզակի է ամբողջ աշխարհում: 2.200 տարի քամուց ու անձրևներից վնասված 166մ բարձրությամբ դամբարանն այսօր դեռ 76մ բարձրությամբ բլրի նման վեր է խոյանում: Նրա շուրջ ձգվող պատի գլխավոր դարպասը բացվում է դեպի արևմուտք՝ ի տարբերություն չինական մյուս գերեզմանատների, որոնք նայում են դեպի հյուսիս կամ հարավ; Դա ցույց է տալիս Ցին թագավորության առաջին կայսեր ինքնիշխանությունը թագավորության արևմուտքում և արևելյան վեց թագավորությունների վրա:

Դամբարանն ու նրան կից հորերը բոլոր չորս կողմերով ձգվում են 7,5 կմ հեռավորության վրա, իսկ ընդհանուր տարածքը կազմում է 56 կմ^2: Միայն 8 կմ^2 տարածք զբաղեցնող գերեզմանը բաժանվում է երկու ուղղանկյուն մասերի՝ 6.242մ պարագծով Արտաքին քաղաքի և 2.525մ պարագծով Ներքին քաղաքի: Դագաղը դրված է Ներքին քաղաքի հարավարևմտյան մասում:

Առաջին կայսեր օթևանը գտնվում է դամբարանի հետևի մասում: Արևմտյան մասում՝ Ներքին և Արտաքին քաղաքների միջև գտնվում են ձիերի 17 և ընտիր կենդանիների 17 գերեզմանոցային հորեր, 14 կավե արձանիկներ: Կենտրոնական մասում թաղված են փայտե ու պղնձե կառքեր: Դամբարանի հյուսիսային մասում ևս կան գերեզմանափոսեր ու յոթ սենյակներ, որտեղից արահետը տանում է ուղիղ դեպի գերեզմանոց: Արևելյան մասում նույնպես կան գերեզմանոց տանող երեք արահետ: Դամբարանից դուրս՝ գերեզմանոցային տարածքներում հայտնաբերվել են թրծակավե ռազմիկների երեք գերեզմանահորեր, երեք ախոռի հորեր, 17 սպանված ձիերի ու 17 գերիների շիրիմներ: Ստորգետնյա պալատը խորհրդանշում է Ցիենյան շքեղ քաղաքը՝ «այստեղ սնդիկը ծորում էր՝ ինչպես գետերն ու ծովերը»: Նրա վերևի մասը նման էր երկնքին, ստորին մասը՝ երկրին: Այն լուսավորված էր ձեռագործ նավթային լապտերներով, որոնք պատրաստված էին այնպես, որ երկար ժամանակ չհանգչեն: Այնտեղ կային արժեքավոր իրեր ու թանկարժեք զարդեր: Պալատը սպառազինված էր մեխանիկական նետ ու աղեղով՝ գողությունը կանխելու համար: Ք.ա. 209թ., երբ Ցին թագավորության առաջին կայսրի դիակը թաղվեց դամբարանում, երկրորդ կայսր Հու Հեյը հրամայեց նրա հետ մեկտեղ ողջ թաղել առաջին կայսրի՝ ժառանգ չունեցող բոլոր հարճերին ու այն

բոլոր արհեստավորներին, ովքեր ներգրավված էին դամբարանի շինարարության աշխատանքներում: Սա չափազանց դաժան արարք էր:

Թրծակավե զինվորները՝ որպես կայազոր, տեղակայված են դամբարանի արևելյան դարպասի առջև: Զինվորները դասավորված են եռաշարք՝ արևմտյան և արևելյան կողմերի երկայնքով՝ ‹‹品›› ձևով: Առաջին շարքում հետևազորն է, երկրորդ շարքում՝ հեծելազորը, մարտակառքերը, հետևակն ու աղեղնավորները: Երրորդ շարքում գտնվում են հրամանատարները, ովքեր կառավարում են զորքը: Այդ երեք շարքում ընդգրկված են ավելի քան 7000 մարտիկ, 100 կառք, 400-ից ավելի ձիեր ու հազարավոր զենքեր:

Առաջին 11 շարքերում, որոնք ուղղված են դեպի արևելք, կարելի է տեսնել 38 զորասյունով կանգնած ռազմիկներ՝ նետ ու աղեղով, նիզակներով զինված: Յուրաքանչյուր զորասյուն ունի նաև 6 մարտակառք: Առջևում, երեք շարքով դասավորված են զինվորական համազգեստով, նետ ու աղեղով զինված առաջապահ ջոկատը՝ ազդեցիկ դեմքերով մարտիկները: Մյուս երեք շարքերի զորասյան զինվորները՝ դեմքով դեպի հարավ, հյուսիս, արևմուտք, համարվում են թիկունքային պաշտպաններ: Ամբողջ դասավորվածությունը Ցին դինաստիայի բանակի դասավորվածություն է, որի ռազմական կարևոր նշանակությունը հատուկ ընդգծված է պատմության մեջ:

Զինվորներն ու ձիերը պատրաստված են մարդկանց ու ձիերի իրական չափերով: Զինվորներն ունեն 1,8մ հասակ, ազդեցիկ դեմքերով՝ նրանք թողնում են կենդանի մարդու տպավորություն: Իսկ դեմքի տարբեր արտահայտությունները, կեցվածքն ու սպառազինությունը ներկայացնում են նրանց տարիքը, փորձառությունը, զինվորական դիրքն ու պաշտոնը: Ձիերը նույնպես իրական տեսք ու չափս ունեն. նրանք ամրակազմ են՝ վեր ցցված ականջներով ու առաջ նայող աչքերով: Նրանց արտաքին տեսքը քանդակված է համաչափորեն: Գերազանց վարպետությամբ ու գեղարվեստական նվաճումներով ցույց է տրվում Ցին ժողովրդի հիանալի ձիավարությունը: Հայտնաբերված զենքերն առավել զարմանահրաշ են, քրոմապատված բրոնզե սրերը նույնիսկ մինչ այժմ փայլուն ու սուր են: Նրբագեղ ծածկոցով, գեղեցիկ քանդակված պատուհաններով, ոսկյա ու արծաթյա ցանցահյուսազարդ թամքով ապշեցուցիչ մարտակառքերը կազմված են չորս ձիուց ու մեկ կառապանից: Իրական չափսերով պատրաստված պղնձե կառքերը ցույց են տալիս ձուլման ու մոնտաժման տեխնիկային՝ տվյալ ժամանակի վարպետների լիակատար տիրապետումը Ցին դինաստիայում:

7. Սինանթրոպոսը Չժոուկոուդյանում

Պեկինյան մարդու բրածոյի հայտնագործումը, անշուշտ, մեծ ներդրում է մարդկության էվոլյուցիայի հետազոտությունների մեջ: Այն տեղամասը, որտեղ դա գտնվում էր, ներառվել է Համաշխարհային մշակութային ժառանգության մեջ 1987թ.:

Տեղամասը գտնվում է Պեկինի՝ Ֆանգշան շրջանի Չժոուկոուդյան գյուղի արևմտյան բլրի ստորոտում: 1920-ական թվականներին, չինացի հնագետները պեղումներ կատարելու ժամանակ այստեղ հայտնաբերեցին ավելի քան 600 հազար տարի առաջ ապրած կապկանման մարդու գանգ: Այդ կապկանման մարդուն անվանեցին Պեկինյան մարդ: Ավելի ուշ այս տարածքում հայտնաբերվեցին նաև քարե գործիքներ ու կրակ ստանալու համար օգտագործված հարմարանքներ: Ըստ հնագիտական հետազոտությունների՝ Պեկինի մարդը, այսինքն՝ նախամարդը, ապրել է մոտ 690.000 տարի առաջ, քարե դարում: Նա ապրում էր քարանձավներում և հիմնականում զբաղվում էր որսորդությամբ: Նախամարդը կարողացել է պատրաստել ու օգտագործել կոշտ քարե գործիքներ, սովորել է կրակ ստանալ՝ տաքանալու և ինչ-որ բան եփելու համար: Հայտնաբերվել են ինքնաշեն սրածայր գործիք, ինչպես նաև տարբեր ոսկրե գործիքներ: Այս ամենը ցուցադրված է տեղում կառուցված թանգարանում, որտեղ դիտարժան են նաև աշխարհում հազվադեպ հանդիպող կենդանիների բրածոներն ու ոսկորները:

8. Կայսերական գերդաստանի ամառանոցը հարակից տաճարներով

Որպես Համաշխարհային մշակութային ժառանգություն՝ այս ամառանոցը պատմության մեջ է մտել1994թ.:

Ամառանոցը, որը հայտնի է նաև որպես Չենդեի ժամանակավոր պալատ կամ Ռեխեի ժամանակավոր պալատ, գտնվում է Չենդե քաղաքի հյուսիսում: Այստեղ իրենց ամառային հանգիստն անց էին կացնում Ցին դինաստիայի կայսրերը և, միաժամանակ, քննարկում պետական գործեր: Շինարարությունը սկսվել է Քանսի կայսեր կառավարման 42-րդ տարում (1703թ.) և ավարտվել Ցիենլոն կայսեր թագավորության 57-րդ տարում (1792թ.): Այն ունի 5.640.000 մ^2 ընդհանուր մակերես, որից մոտ 100.000 մ^2 օգտագործված է պալատի համար: Ընդհանուր տարածքում կան ավելի քան 110 կառույց, 184 տեսարժան վայր, ընդ որում՝ նրանցից 36-ը մակագրված են Քանսի և Ցիենլոն կայսրերի կողմից: Զիգզագաձև ցանկապատն ունի 16 կմ երկարություն: Այս ամառանոցն ամենամեծ կայսերական պալատն է Չինաստանում:

Ամառային պալատը կառուցված է հասարակ, գյուղական ոճով, նրա գեղեցկության առավելությունը բնական լանդշաֆտն է՝ Յանցզի գետի ու երկրի հյուսիսային սահմանի համադրությամբ: Ամառանոցը ցանկապատող պատը շարված է տեղի բնական կարմիր քարից: Կենտրոնում գտնվող քառանկյունի, սպիտակ կիրով ծեփված կառույցը նման է հյուսիսային շրջանում ապրող հասարակ քաղաքացիների ամառանոցներին, ի տարբերություն Պեկինի պերճաշուք կայսերական պալատների: Այն կազմված է երկու մասից՝ պալատական և բնատեսարանային: Պալատական մասը բաղկացած է չորս ենթակառույցներից՝ հիմնական սրահ, «Սոճի կռունկ կառույց», «Սոճի քամի հովիտ», արևելյան սրահ: Բնատեսարանային մասն ընդգրկում է երեք տարածք՝ լճային, հարթավայրային ու

լեռնային: Լճային տարածքում գտնվում են կղզյակներ ու ավազային ծանծաղուտներ: Այդ տեսարանին շքեղություն է հաղորդում Յանցզի գետը: Այս տարածաշրջանի հյուսիս-արևելյան անկյունում միշտ տիրում է հայտնի Ռեխենյան գարունը, արևմտյան մասով ձգվում է մոնղոլական ոճով ձևավորած տափաստանը, իսկ արևելյան մասը զբաղեցնում են խիտ աճեցված դարավոր ծառերը. տարածքը նման է «Հսկա Ցինղան շղթա» անտառագոտուն:

1713-1780 թթ. ընկած ժամանակահատվածում, Քանսի և Ցիենլոն կայսրերի կառավարման տարիներին կառուցված «Ուք արտաքին տաճար» անունով հայտնի համալիրը ցրված է Ամառանոցի արևելյան ու հյուսիսային բլուրների ստորոտներով մեկ: Գլխավոր տաճարներ են համարվում «Երջանկության», «Խաղաղության» ու «Մայտրեյա Երջանկության ու Երկարակեցության» շինությունները: «Երջանկության» տաճարի ճարտարապետության գլուխգործոցը «Այգաբացի լույս» սրահն է իր բազմաթիվ քիվերով ու դամբարանով, որը հիշեցնում է Պեկինի «Բերքի աղոթարանը»: «Խաղաղություն» տաճարի գլխավոր սրահը «Մահայանան» է, որտեղ գտնվում է աշխարհի ամենամեծ փայտե՝ հազար ձեռք ու հազար աչք ունեցող (գթության աստվածուհի) Բուդդայի արձանը, որն ունի 23,51մ բարձրություն ու 110տ զանգված: «Մայտրեյա Երջանկության ու Երկարակեցության» տաճարը այն կառույցն է, որտեղ վեցերորդ բուդդայական քահանան Սուրբգրային քարոզներ էր կարդում: Տաճարի գլուխգործոցը «Իմաստություն» վեհափառ սրահն է: Տանիքի չորս ծայրերից յուրաքանչյուրի վրա տեղադրված են վիշապի երկու ոսկեգույն քանդակներ: Այս տարածքում գտնվում է նաև Սամանտահաբրա տաճարը, որն ընդօրինակված է Լհասայում գտնվող Պոտալա պալատական համալիրում: Ուք արտաքին տաճարների գեղարվեստական առանձնահատկությունները ներկայացնում են չինական տաճարային ճարտարապետության ուրույն ոճը, որն աչքի է ընկնում շքեղ բազմազանությամբ:

9. Կոնֆուցիոսի ընտանեկան կալվածքը, տաճարն ու գերեզմանը

Ցյուիֆու քաղաքը՝ Լու թագավորության հյուսիս-արևելքում գտնվող Շանդուն նահանգի մայրաքաղաքը, կոնֆուցիականության հիմնադիր, մանկավարժ ու գաղափարախոս Կոնֆուցիոսի բնօրրանն է:

Ցյուիֆու քաղաքում գտնվող Կոնֆուցիոսի ընտանեկան կալվածքը, տաճարն ու գերեզմանը, որոնք հայտնի են «Կոնֆուցիական եռյակ ճարտարապետություն» անունով, աշխարհահռչակ մշակութային ժառանգություն են:

Կոնֆուցիոսի առանձնատունը, որը հայտնի է նաև որպես «Իմաստունների առանձնատուն», երկար ժամանակ եղել է Կոնֆուցիոսի ժառանգների նստավայրը (յուրաքանչյուր սերնդի անդրանիկ որդու և ավագ թոռան):

Առանձնատունը զբաղեցնում է 160.000 մ^2 տարածք, ունի 463 սենյակ ու 9 սրահ, որոնք տեղակայված են երեք ուղղությամբ՝ արևելք, արևմուտք ու միջանկյալ: Միջանկյալ ուղղության վրա գտնվում են գրասենյակը, բնակավայրն ու այգին, որոնք ճարտարապետական մեծ արժեք են ներկայացնում: Կոնֆուցիոսի առանձնատանը պահպանվում են 1534-1948 թթ.՝ 9000-ից ավելի փաստաթղթեր ու բազմաթիվ պատմական-մշակութային մասունքներ: Այստեղ պահպանվել են նաև հազարավոր հագուստներ, գլխի զարդարանքներ, կոշիկներ, պաշտոնյաների թիկնոցներ, արքունիքում՝ պաշտոնյաների կողմից գրի առնված օրագրեր և այլն, որոնք շատ կարևոր էին Չինաստանում հագուստի զարգացման հարցով զբաղվողների համար:

Տաճարում կազմակերպվում էին զոհաբերության ծեսեր՝ Կոնֆուցիոսի երկրպագության համար: Տաճարը վերանորոգվել ու վերակառուցվել է բոլոր դինաստիաների կայսրերի կողմից, ընդհուպ մինչև արևմտյան Հան

դինաստիան: Ուստի, այն դարձել է մի հսկայական անտիկ ճարտարապետական համալիր 2.218.000 մ^2 տարածքով: Հյուսիսից հարավ 1.120մ երկարության վրա գտնվում են 9 պալատ, որոնք տեղակայված են երեք ուղղություններով՝ աջ, ձախ, կենտրոնական՝ ընդգրկելով ընդհանուր առմամբ 466 սենյակ ու սրահ: Տաճարը շրջապատված է փոքրիկ աշտարակներ ունեցող պարսպով: Այգում աճում են հսկայական քանակությամբ սոճիներ ու նոճիներ: Կենտրոնական ուղու վրա են գտնվում գլխավոր կառույցները՝ Քուեյվեն սրահը, Տասներեք կայսերական հուշատախտակների տաղավարը, Ծիրանի զոհասեղանը, Դաչընգ, Քնի ու Սուրբ նշխարների սրահները, որոնցից ամենահայտնին Դաչընգ սրահն է: Դա այն է, որտեղ անց էին կացվում Կոնֆուցիոսին նվիրված պաշտամունքային զոհաբերությունները:

Տաճարում գտնվում են Հան դինաստիայի թողած գրառումներ, որոնք փորագրված են քարի վրա: Այդպիսի գրառումներ մեծ քանակությամբ պահպանվել են միայն այստեղ: Հան դինաստիային պատկանող գեղագրության ու քարե քանդակների սենյակում ցուցադրված են ավելի քան 100 այդպիսի աշխատանք: «Նեֆրիտե ծիածան» սրահում ցուցադրված են տարբեր գեղանկարչական ձեռագրերի 584 նմուշ, որոնք մեզ են հասել Չին և Թան դինաստիաներից: Դա գեղանկարչական արվեստի հազվագյուտ հավաքածու է Չինաստանում:

Կոնֆուցիոսի գերեզմանը, որը կոչվում է նաև Մեծագույն իմաստունի գերեզման, գտնվում է Ցյուֆու քաղաքից 1,5 կմ դեպի հյուսիս: Այն բացառիկ գերեզմանատուն է Կոնֆուցիոսի ու նրա ժառանգորդների համար: 1.998.000 մ^2 տարածք զբաղեցնող գերեզմանոցը շրջապատված է ավելի քան 7 կմ երկարությամբ անտառային գոտով, որտեղ վեր են խոյանում շուրջ 20 000 հինավուրց ծառեր: Անտառի խորքում գտնվում են տարբեր ժամանակներում կառուցված կառույցներ, դամբարաններ, տաղավար-

ներ, փորագրված գրառումներ ու այլ քարե քանդակներ: Չուշուե կամրջի մոտ գտնվում է Արևելյան Ջոու դինաստիային պատկանող գերեզմանատունը՝ Կոնֆուցիոսի ընտանիքի երեք սերունդների՝ Կոնֆուցիոսի, թագավոր Լիի ու թագավոր Ժիի շիրիմներով: Կոնֆուցիոսի՝ 6,20 մ բարձրությամբ ու 88 մ պարագծով գերեզմանատնից դեպի հարավ-արևելք գտնվում են երեք տաղավար, որտեղ կարելի է կանգ առնել ու հանգստանալ ճամփորդության ժամանակ: Դրանցից մեկը պատկանում էր Սուն դինաստիայի ճըն կայսրին, մյուս երկուսը՝ Ցին դինաստիայի Քանսի ու Ցիենլոն կայսրերին:

10. Ուդանշան լեռների հնագույն շինությունները

Ուդանշան լեռների հնագույն շինությունները ՅՈՒՆԵՍԿՕ-ի Համաշխարհային մշակութային ժառանգության ցանկում են հայտնվել 1994թ.:



«Գերագույն ներդաշնակություն» կոչվող Ուդանշան լեռների գեղեցկությունը կարող ես վայելել Հուբեյ գավառի հյուսիս-արևմուտքում գտնվող Դանծիանքաու քաղաքում: Հռչակավոր դաոսական լեռների հետևում բացվում է Շեննոնծիա անտառի հրաշալի տեսարանը, առջևում՝ Դանծյանքաու քաղաքի ջրամբարը: Քաղաքը հայտնի է նաև բռնցքամարտի արվեստով: Ուդանշան լեռների հնագույն շինությունները զբաղեցնում են 4 000 կմ պարագծով տարածք, որն ընդգրկում է 72 լեռնագագաթ, 36 ժայռ, 24 վտակ, 9 աղբյուր, 8 դաոսական պալատ ու 2 դաոսական տաճար: Գագաթնակետը, որ կոչվում է «Երկնային հենարան» կամ «Երկինք հասնող սյուն», գտնվում է ծովի մակարդակից 1.612մ բարձրության վրա: «Հինգ հզոր լեռներն» իրենց շքեղությամբ, խրոխտ կեցվածքով, արտասովոր ու վայելչագեղ բնապատկերով Չինաստանի յուրահատուկ տեսարժան վայրերից են: Այստեղ

պահպանվել են պատմական հազարավոր մասունքներ Յուան ու Մին դինաստիաներից և մի շարք տպավորիչ կառույցներ: Ընդհանուր նախագիծն աչքի է ընկնում առանձին ու խմբային կառույցների համադրությամբ և միջտարածքային համաչափությամբ: Այդ անտիկ շինություններից երկուսը՝ Ոսկե դահլիճն ու Մանուշակագույն ամպի պալատը, համարվում են ազգային մշակույթի բանալին:

Մանուշակագույն ամպի պալատը կառուցվել է Երկնային հենարան գագաթնակետից դեպի հյուսիս-արևելք գտնվող Ծածանվող դրոշ լեռնագագաթի ստորոտում: Մին դինաստիայի Յունլե կայսեր կառավարության 11-րդ տարում (1413թ.) կառուցված այդ պալատը բավականին լավ է պահպանվել: Այն եռաշերտ սանդղավանդի վրա գտնվող հինգ առանձին մասերի բաժանված պալատ է, որին ճոխություն են հաղորդում կանաչապատ կղմինդրե տանիքը, կարմիր ներկած պատերը, բազմաքանակ քիվերը, իննեզր կտուրը, դեկորատիվ կամարներն ու վահանակները, ծաղիկների ու թռչունների պատկերները, գույնզգույն զարդանկարներն ու ութ *տրիգրամ* նկարները: Կանաչ ու ոսկեգույն գույների համադրությունը մեծաշուք տեսք են տալիս 5,54մ բարձրությամբ, 5,8մ լայնությամբ, 4,2մ խորությամբ կառույցին: Անտիկ չինական բարձրակարգ վարպետները դաոսյան ճարտարապետության կարկառուն ներկայացուցիչներից են:

11. Պոտալա պալատական համալիրը Լհասայում



Կարմիր լեռան վրա գտնվող Պոտալա պալատական համալիրը ծովի մակարդակից բարձր է 3.700մ: Այն ՅՈՒՆԵՍԿՕ-ի Համաշխարհային մշա-

կութային ժառանգության ցանկում է 1994թ.-ից:

Յոթերորդ դարում, Տիբեթի իշխան Սունցանգանբուն ամուսնանալով Թան կայսրության արքայադուստր Վենչենի հետ, Կարմիր սարի վրա կառուցում է 999 սենյակ ունեցող մի պալատ, որը զբաղեցնում է 130.000 մ^2 մակերես, իսկ պալատական համալիրի ընդհանուր մակերեսը կազմում է 410.000 մ^2: Տիբեթյան լավագույն ճարտարապետական այս համալիրը բաղկացած է Սպիտակ ու Կարմիր պալատներից: 115,7մ բարձրությամբ հիմնական սրահն ունի 13 հարկ: Տանիքը ծածկված է ոսկեփայլ պղնձե սալիկներով: Պոտալա պալատական համալիրը Լհասայում համարվում է հովտի վեհափառ պալատը: Պալատի նախագծման ու կառուցման ժամանակ հաշվի է առնվել արևի լույսով ողողված լինելու պայմանը: Հիմքը ընդարձակ է ու ամուր՝ կառուցված թունելներով ու օդանցքներով: Սենյակներն ու սրահները պատրաստված են ամուր սյուների ու հենարանների վրա: Հատակն ու տանիքը ծածկված են ամուր հողատեսակի շերտով: Սրահների ու ննջասենյակների առաստաղների վրա տեղադրված են ապակեպատ լուսամուտներ՝ թարմ օդ ու արևի լույս ստանալու համար: Սյուների ու չորսուների վրա փորագրված են տարբեր զարդապատկերներ: Պատերին դրոշմված են գունավոր որմնանկարներ: Որմնանկարչությունը այդ ժամանակաշրջանի ամենատարածված արվեստն էր Տիբեթում: Որմնանկարներ կարելի է տեսնել փայտե ու կերամիկական իրերի վրա: Պոտալա պալատում որմնանկարները զբաղեցնում են 2.500 մ^2 տարածք:

Համալիրում կան երկաթ, բրոնզ, ոսկի, արծաթ, պղինձ և այլ մետաղներ, ինչպես նաև՝ մետաղե ձուլվածքներ, որոնք պատրաստված են Տիբեթում: Սաղավարտների, զենք ու զրահների, արհեստական կաշվի, ձեռագործ կտորեղենի հետ միասին այստեղ պահպանվել են նաև տարբեր դինաստիաների կայսրերին պատկանող փաստաթղթեր, ոսկեգիր վկայագրեր, կնիքներ, լիազորագրեր, ճենապակյա իրեր, զմրուխտ ու նեֆրիտ քարերով զարդեր:

12. Հնագույն քաղաք Պինյաոն

Ձոու դինաստիայի հիմնադրած Շանսի նահանգի Պինյաո քաղաքը համարվել է Համաշխարհային մշակութային ժառանգություն 1997թ.:

Վաղ ժամանակաշրջանից մեզ հասած այդ հրաշագեղ քաղաքը շրջապատված է 6.4 կմ երկարությամբ պարսպով, որը համարվում է ոչ միայն Շանսի նահանգի, այլև ամբողջ Չինաստանի ամենաերկար պարիսպը: 12մ բարձրությամբ և 5մ հաստությամբ քառակուսաձև պատը կառուցվել

է Մին դինաստիայի կառավարման տարիներին: Պատը շարված է աղյուսով, ընդ որում՝ վերևի շերտը ջրադիմացկուն աղյուսով է և լցոնված է հողով: Պարսպի վրա կան ատամնաձև կտրվածքով ոլորքներ, որտեղից պատերազմների ժամանակ գնդակոծում էին թշնամուն: Պարսպի դրսի կողմից 4մ խորությամբ խրամատ է փորված: Այն ունի վեց դարպասաշեմ՝ երկուսը արևելքի կողմից, երկուսը՝ արևմուտքի, մեկը՝ հյուսիսի, մյուսը՝ հարավի կողմից: Յուրաքանչյուր դարպասաշեմ ունի արտաքին ու ներքին սկահակաձև դարպասներ: Կրիաձև լինելու պատճառով քաղաքն ունի «կրիա» մականունը: Հյուսիսային ու հարավային դարպասամուտքերից մեկը համարվում է պոչը, մյուսը՝ գլուխը, իսկ արևելյան ու արևմտյան չորս դարպասամուտքերը՝ չորս ոտքերը: Հարավային մուտքում կան երկու ջրհոր, որոնք համարվում են կրիայի աչքերը: Արևելյան ու արևմտյան մուտքերը ձգվում են դեպի «գլուխն» այնպես, ասես կրիան առաջ է շարժվում:

Վեց դարպասամուտքերից վեր են խոյանում վեց աշտարակ, չորս անկյուններում ևս կառուցված են 7մ բարձրությամբ չորս աշտարակ, իսկ 50մ հեռավորության վրա՝ հարթակներ («ձիու դեմք» մականունով): Այսպես, քաղաքի ընդհանուր պարսպի վրա կան 72 աշտարակ՝ 3000 ատամնաձև կտրվածք-ոլորքներով: Այդ պատը մեծ դեր է ունեցել պատերազմների ու ջրհեղեղների ժամանակ: Պատից ներս իրենց նախնական տեսքով պահպանվել են վարչական գրասենյակները, շուկաներ, փողոցներ ու բնակավայրեր: Պատերն արժեքավոր տեղեկատվության աղբյուր են Մին դինաստիայի մասին հետազոտական աշխատանքների համար:

13. Լուշան լեռը

Լուշան լեռը գրանցվել է ՅՈՒՆԵՍԿՕ-ի Երկակի համաշխարհային բնական ժառանգության ցանկում 1996 թ.: Այն գտնվում է Ցզյանսի նահանգի

Ցզյուժյան քաղաքի հարավում, Պոյան լճի մոտ: 300 կմ^2 տարածք զբաղեցնող, ծովի մակարդակից 1.474մ բարձրության վրա գտնվող, Հսկա Հանյան գագաթով լեռնաշղթան Չինաստանի ամենահայտնի լեռներից մեկն է: Փոփոխական ամպերի մեջ մխրճվող նրբագեղ գագաթներով, թովիչ աղբյուրներով ու ջրվեժներով, հին պատմական մասունքներով հարուստ այդ վայրը հրապուրում է ամենքին:

Լուշան լեռնաշղթան պարուրված է աննկարագրելի տեսարժան վայրերով, որոնցից են՝ հինգ սրբազան լեռնագագաթները, եռաշերտ ջրվեժը, Հանփո լեռը, Լու Լի ու Ռու Ցին լճերը, մեծ ու փոքր Թիենչի լճերը, Ցինսյո հովիտը, Բուդդայի քարանձավը, Դոնգլին տաճարը, Սպիտակ եղջերուի վարժարանը (Սպիտակ եղջերուի քարանձավ-ակադեմիան), Լուշանի բուսաբանական այգին ու թանգարանը:

Լուշան լեռնաշղթայի հարավային մասում գտնվող բարձրաբերձ ու սլացիկ հինգ լեռնագագաթներն ասես հինգ սրբեր են՝ ուս ուսի տված, որտեղից էլ ստացել են իրենց՝ Հինգ սրբեր անվանումը: 1.211մ բարձրություն ունեցող Հանփո լեռը գտնվում է Հինգ սրբեր ու Ցյուցի լեռների միջև: Հանփո լեռը հարավային ճակատով ուղղված է դեպի Պոյան լիճն այնպես, կարծես այն պատրաստվում է կլանել լճի ողջ ջուրը: Պոյան լճի անկառավարելի հոսանքում լողում են հազարավոր նավեր, իսկ Հանփո լեռան գա-

գաթին կարելի է դիմավորել աննկարագրելի արևածագը: 300մ բարձրությամբ եռաշերտ ջրվեժը ժայռերին թափվում է «Հինգ սրբեր»-ի արևելյան մասից, որն արևի տակ հազարավոր երանգներ է ստանում: Եռաշերտ է կոչվում եռաշերտ դասավորվածություն ունեցող ժայռերին թափվելու պատճառով: Բուդդայի սրբավայր համարվող Դոնգլին տաճարը տեղակայված է լեռնաշղթայի հյուսիս-արևմտյան մասում, իսկ հնագույն շրջանի բարձրագույն հաստատություններից մեկը՝ Սպիտակ եղջերու վարժարանը՝ Հինգ սրբեր լեռների հովտում: Թան դինաստիայից սերված չինացի բանաստեղծ Լի Բոն ժամանակ առ ժամանակ ապրում էր այս տարածքում և զվարճանքի համար այստեղ ընտելացրել էր սպիտակ եղջերուներ: Այս դեպքից հետո նա ստացել է պարոն Սպիտակ եղջերու մականունը, իսկ այն հաստատությունը, որտեղ նա կրթություն է ստացել, կոչվել է Սպիտակ եղջերուի քարանձավ: Թան դինաստիայի կառավարման ժամանակ ժողովուրդն այն վերակառուցել ու դարձրել է չինական մշակութային կենտրոն: Հետագայում, Սուն դինաստիայի ղեկավարման ժամանակ այն դարձել է ակադեմիա: Շենքը վերակառուցվել ու ենթարկվել է կապիտալ վերանորոգման Ցին դինաստիայի Դաոգուան կայսեր կողմից: Մեծ ու փոքր Թիենչի լճերը հրապուրում են իրենց գեղաշուք տեսարանով, և կլոր տարին չեն պակասում նրանց ջրերը: Մեծ Թիենչի լիճն իր առջև բացում է արևամուտի հրաշալի տեսարան՝ հորիզոնական կազմելով հեռավոր Յանցզի գետի հետ: Փոքր Թիենչի լճից երևում է Պոյան լճի գողտրիկ բնապատկերը: Լուշանի թանգարանը գտնվում է Լու Լի լճի ափից դեպի հյուսիս ձգվող անտառում: Թանգարանում ներկայացված են Թան և Սուն դինաստիաների ժամանակ օգտագործված ձեռագրեր, տարբեր դինաստիաներից պահպանված բրոնզե խեցեղեն, Մին և Ցին դինաստիաների նկարիչների աշխատանքներ: Լուշանի արևելյան հովտում է գտնվում բուսաբանական այգին: Ցովի մակարդակից 1000-1300մ բարձրության վրա գտնվող այգին կառուցվել է 1934թ.: Երեք քառակուսի կիլոմետր զբաղեցնող տարածքում կան 3400 տեսակի հայրենի ու օտարերկրյա բույսեր, ընդհանուր առմամբ՝ ավելի քան 100.000 անուն բույս:

14. Լիցզյան անտիկ քաղաքը

Լիցզյան անտիկ քաղաքը ՅՈՒՆԵՍԿՕ-ի Համաշխարհային մշակութային ժառանգության ցանկում է 1997 թվականից: Այն կոչվում է նաև Դայան, գտնվում է Յունան նահանգով հոսող Լիցզյան Հու Լի գետի ափին: Երկար պատմություն ունեցող հնագույն քաղաքը բնակեցված էր հիմնականում նասի ազգության մարդկանցով: «Արևելյան Վենետիկ» մականունն ունե-

ցող այս քաղաքը պատմության մեջ ունի այնպիսի մրցակիցներ, ինչպիսիք են Հունաստանի Աթենքը, Ֆրանսիայի Փարիզը, Իտալիայի պիցցան ու Վենետիկը:

Մին դինաստիայի ժամանակաշրջանում հազարից ավելի ընտանիքներ էին ապրում այս քաղաքում: Ժամանակին ժառանգաբար փոխանցված քաղաքապետի պաշտոնը ստանձնել էր Մուն, ով իր ընտանիքով ապրում էր նրբագեղ ու հոյակապ մեծ առանձնատան մեջ: Առյուծ սարից դեպի Փիղ ու Ոսկե ծիածան սարերը ձգվող տեղանքին չեն հասնում արևմտյան ու հյուսիսային քամիները: Նեֆրիտ աղբյուրն ունի երեք ակունք, որոնք հոսում են քաղաքով ու տեղի բոլոր բնակիչներին ապահովում ջրով: Քանի որ ջուրը հոսում է քաղաքի միջով, գրեթե բոլոր տների առջև կային ուռենիներ: Բնակիչները գործածում էին այսպիսի մի ասացվածք. «Խմիր առաջին ակունքից, բանջարեղենը լվա երկրորդ ակունքում, իսկ շորերը՝ երրորդ»: Հարավ-արևելյան մասով ձգվում են պտղատու դաշտերը, որտեղ թափառում են արևելյան տաք քամիները:

Քանի որ քաղաքը շատ հին էր, միայն Դա Բաո Ցի ու Լաի Հե Դա Ցիաո պալատներում, Լիու Լի ու Դա Բաո սրահներում են պահպանվել աննախադեպ որմնանկարներ, որոնք պատկերել են քաղաքապետ Մուի կողմից քաղաք հրավիրված հան, տիբեթյան ու նասի ազգության նկարիչները: Ընդհանուր առմամբ պահպանվել են 55 որմնանկար, որոնք զբաղեցնում են 139.22 մ^2 տարածք: Ամենամեծ որմնանկարն ունի 2,7 մ բարձրություն, 4,48 մ լայնություն և պարունակում է 600 պատկեր: Որմնանկարների մեծամասնությունը կրոնական թեմայով է՝ նկարված մանրակրկիտ ու վառ գույներով: Դրանք չինական արվեստի արժեքավոր գանձեր են:

15. Սուչժոուի դասական չինական այգիները

Սուչժոուն հայտնի է որպես ջրերի արևմտյան հայրենիք և գտնվում է Յանցզի գետի դելտայի հարավում. արևելքում հարակից է Թայխու լճին, արևմուտքում՝ Շանհայ քաղաքին, որտեղ Պեկինի Ցինխան մեծ ջրանցքի ջրերն ու Սուչժոու գետի ջրերը միախառնվում են: Սուչժոուի դասական

այգիները ներառվել են ՅՈՒՆԵՍԿՕ-ի Համաշխարհային ժառանգության ցանկում 1997թ.: Ավելի քան 200 այգիներ ամբողջությամբ ներկայացնում են չինական հարավային այգիների յուրահատուկ ոճը՝ ներառելով Սուն, Յուան, Մին և Ցին դինաստիաների այգիների տարբեր ոճեր: Մեծ ալիք տաղավարը, Առյուծի պուրակ այգին, Խոնարհ կառավարչի այգին ու Հավիտենական այգին Սուչժոուի ամենամեծ այգիներն են, որոնք առանձին-առանձին ներկայացնում են Սուն, Յուան, Մին և Ցին դինաստիաների յուրատիպ ոճի այգիները:

16. Դացզուի ժայռաքանդակները

Չունցին քաղաքում գտնվող «Դացզուի ժայռաքանդակներ» անվանումը հավաքական եզրույթ է Դացզուի շրջանը գրավիչ տեսարժան վայր դարձնող քարանձավային քանդակների համար, որտեղ 75 քանդակային աշխատանքի մեջ ներառված են ավելի քան 50.000 արձան

ու 100.000-ից ավելի բառ-արձանագրություն: Դարերի միջով անցած այս բազմաքանակ ու բազմազան քանդակներն ունեն յուրատեսակ էթնիկական հատկանիշներ և պատմական, գիտական ու մշակութային բարձր արժեքայնություն: Դրանք անտիկ ժամանակաշրջանից մեզ հասած ամենաակնառու քարանձավային արվեստի նմուշներից են, և թե՛ հայրենիքում, թե՛ արտասահմանում հայտնի են որպես համարժեքը չունեցող գանձեր:

17. Ցինչենշան լեռն ու Դուցզյանյան ոռոգման համակարգը

Ցինչենշան լեռը, որը Համաշխարհային մշակութային ժառանգության ցանկի մեջ է մտել ի շնորհիվ Դուցզյանյան ոռոգման համակարգի, գտնվում է Սիչուան նահանգի Դուցզյան քաղաքի հարավ-արևմտյան մասում: Այս վայրը համարվում է դաոսականության ծննդավայրը Չինաստանում և հռչակված է որպես դաոսականների Հինգերորդ քարանձավ: «Հավերժ կանաչ» մականունով սարն ունի 36 լեռնագագաթ, 8 մեծ ու 72 փոքր քարանձավներ: Շնորհիվ իր բազմաթիվ մշակութային մասունքների ու պատմական վայրերի, այն կարելի է համարել որպես դաոսիզմի թանգարան:

Սիչուան նահանգի Դուցզյան քաղաքի արևմտյան մասում գտնվող Դուցզյանյան ոռոգման համակարգի նախագիծը համարվում է եզակի ու ամենաարդյունավետ ինժեներական ծրագիրը հարավ-արևմտյան Չինաստանում: Ոռոգման համակարգը կառուցվել է Ցին թագավորության՝ Սիչուան նահանգի կառավարիչ Լի Բինգի ու նրա որդիների կողմից, Չինաստանում նահանգների համար ընթացող պատերազմական ժամանակաշրջանում: Այն վաղ ժամանակաշրջանից հասած միակ մեծ ոռոգման համակարգն է առանց ամբարտակի, և չինական տեխնոլոգիական ասպարեզում այն դիտվում է նաև որպես ջրաղաց: Ռոտորները գլխավոր դեր են կատարում ոռոգման համակարգում և ծառայում են որպես հիմնական

ենթակառուցվածք: Դրանք կազմված են «Ձկնաբերան» /Fish Mouth Levee/ ամբարտակից, «Շշի պարանոց» /Bottle-Neck Channel/ ջրատար առուներից և «Թռչող ավազ» /Flying Sand Weir/ փոքրածավալ ջրապատվարից: «Շշի պարանոց» ջրատար առուն պատմության մեջ հայտնի է Ոսկե դարպաս անունով, որովհետև այն կիրճ է, որտեղից ջրերը տարածվում են դեպի արևմուտք: Դրա մասին ժողովուրդն ասում է՝ «Դա գետերի անցագրային կետն է սարերի միջով», և համարվում է Գուենյան մարզի 10 ամենագեղեցիկ տեսարժան վայրերից մեկը: «Թռչող ավազ» ջրապատվարը գտնվում է ոռոգման համակարգի կենտրոնում և կոյուղու դեր է կատարում, այն կասեցնում է ջրհեղեղներն ու հեռացնում տիղմը: Այս համակարգը անփոխարինելի գործառույթ է կատարում և ոռոգում է ավելի քան 15.000 մ^2 գյուղատնտեսական նշանակության հողատարածք:

18. Լունմեն բուդդայական անձավային տաճարը

Չինաստանի չորս ամենամեծ քարանձավներից են Հենան նահանգի Լոյան քաղաքում գտնվող Լունմենի անձավները, որոնք տեղորոշված են այսօրվա Լոյան քաղաքից 6 կմ դեպի հարավ: Սյանշան և Լունմեն լեռների միջև գտնվող տարածքը, որտեղով հոսում է նաև Ի գետը, Թան դինաստիայի թագավորության ժամանակ վերանվանվել ու կոչվել է «Ի Ցյուէ», այսինքն՝ Հավերժական Լունմեն /կամ՝ Ի գետի դարպաս/: Տարածքը շրջապատված լինելով ժայռերով ու ձորերով՝ ինքնըստինքյան է դառնում քարայր: Թան դինաստիայի հռչակավոր պոետ Բայ Ցյույին Լունմենը համարել է Լոյանի ամենագեղեցիկ բնապատկեր ունեցող վայրը, վայր, որտեղ հնագույն շրջանի վարպետները կարողացել են քարերը դարձնել քանդակներ, որոնք հետագայում համարվել են երկնքից տրված պարգև: Հյուսիսային Վեյ դինաստիայի Սյաուուեն կայսրի կառավարման ժամանակներից սկսած՝ այս անձավային հա-

մալիրում հաջորդաբար պեղումներ էին կատարվել արևելյան և արևմտյան Վեյ դինաստիաների, Հյուսիսային Ցի, Սույ, Թան դինաստիաների, Հինգ դինաստիաների և Սուն դինաստիայի կառավարման ընթացքում: Պեղումների արդյունքում՝ 1 կմ շառավղով տարածքում հայտնաբերվել են 2.345 քարանձավ, ավելի քան 100.000 բուդդայական քանդակ, 2.800-ից ավելի ստելաներ /ուղղանկյունաձև սալաքարի վրա հուշագրություն/ ու մակագրություններ: Լունմենի 20 ամենավառ մակագրությունները Հյուսիսային դինաստիայի գեղագրության լավագույն նմուշներն են: Թան դինաստիայի պետքարտուղար Չու Սույյանի թողած «Ի Ցյուէի բուդդայական մակագրությունները» համարվում են գեղագրության գագաթնակետը: Լունմենի քարանձավներում առկա բուդդայական մակագրությունների արվեստը արտացոլում է այդ դարաշրջանի քաղաքական, տնտեսական ու մշակութային կյանքը: Այստեղ հրաշալի կերպով պահպանված են կրոնների, կերպարվեստի, ճարտարապետության, գեղագրության, երաժշտության, հանդերձանքի ու բժշկության հետ կապված շատ առարկաներ: Հյուսիսային Վեյ դինաստիայի կառավարման ժամանակաշրջանում հայտնաբերված՝ Գույան, Միջին Բինյան, Լոտոս ու Շիկու տաճարի քարանձավները առավել բարձր արժեք ունեցան հետազոտությունների համար: Երբ հյուսիսային Վեյ դինաստիայի մայրաքաղաքը տեղափոխվեց Լոյան, Գույան քարանձավում տեղ գտան թագավորական իշխանավորների ու պաշտոնյաների բազմաթիվ քանդակներ: Արդյունքում՝ Լունմենի անձավային համալիրը դարձավ մի իսկական քարե թանգարան:

19. Մին և Ցին դինաստիաների կայսերական գերեզմանները

Համաշխարհային մշակութային ժառանգության ցանկում հայտնի՝ Մին և Ցին դինաստիաների կայսերական գերեզմանների շարքում են Հեբեյ նահանգում գտնվող՝ Ցին դինաստիայի կայսրերի դամբարանը, որը կոչվում է Սիվին, կայսրուհի Դոնլինի դամբարանը, Մին դինաստիայի Սինլին դամբարանը, Ցզյանսու նահանգի Սիաոլին դամբարանը, Պեկինի Մին դինաստիայի գերեզմանոցներն ու Լիաոնին նահանգի Շընծինի երեք գերեզմանատները:

Սինլին թանգարանը, որտեղ հուղարկավորված են Ծյածին կայսեր հայրը՝ Չու Յոուանն ու նրա մայրը՝ կայսրուհի Շընճանը, գտնվում է Հուբեյ նահանգի Ճոնսիան քաղաքից 7,5 կմ դեպի հյուսիս-արևելք ընկած Չյունդը լեռան վրա: Գերեզմանը կառուցվել է Ճընգդը կայսեր կառավարության 14-րդ տարում (1519 թ.): Այս երկու թանգարանների ընդհանուր տարածքում կան ավելի քան 30 խոշոր համալիրներ: Շատ հուշարձան-

ներ տեղադրված են որպես տվյալ գերեզմանի սեփականատիրոջ մահարձան կամ որևէ կարևոր բան հավերժացնելու համար. օրինակ՝ Չյունդը լեռան ստելա, Հրամանագրի ստելա, Չիուց իջնելու ստելա, հուշարձաններ՝ Արտաքին լճակ, Նոր կարմիր դարպաս, Հին կարմիր դարպաս, Հուբեյի կառույց, Ուանի սյուն, Աստղի դարպաս, Ցյոչուի արքունական գետ, Մին դինաստիայի Ներքին ջրամբար, Լոնգմենի դարպաս, Գետնադամբարանի դարպաս, Երկվորյակ սյուների դարպաս, Ֆան քաղաք, Մին թագավորության կառույցներ, Առջևի ու Ետևի գանձերի քաղաքներ և այլն: Լեռներով ու գետերով շրջապատված այդ վայրը, կարծես թե՝ Աստված նախագծել է, իսկ սրբերն էլ կառուցել են: Համատեղելով ճարտարապետության ու այգեգործության արվեստները՝ չին ժողովուրդը կատարել է հսկայական ու աննախադեպ աշխատանք: Եզակի գեղեցկությամբ ութ բնատեսարանների մեջ մտնում են Յաո պատշգամբն ու Գանձերի երկու քաղաքները, Ստելա տաղավարը, Երկվորյակ վիշապների նախշով որմնանկարը, Խուայլյուո և Նեյլյուո քաղաքները, Ցյոչուի Արքունական գետը, Մին դինաստիայի Ներքին ու Արտաքին ջրամբարները, Սուրբ վիշապաձև արահետը, Նոր կարմիր ու Հին կարմիր դարպասները:

Լեռներով շրջապատված՝ Մին դինաստիայի կայսրուհի Դոնլինի թանգարանը գտնվում է Մալան կիրճում՝ Հեբեյ նահանգի Ցունխուա քաղաքից 30 կմ դեպի հյուսիս-արևմուտք: Ճաոսի ու Հուիլին առանձնացված թանգարաններից բացի, մյուս բոլոր գերեզմանատները կենտրոնացված են Շունճի կայսեր Սիաոլին թանգարանի կողքին: Դամբարանի տարածքը սկսվում է Ցինկան բլրից և ավարտվում Չանգրուեյ լեռան ստորոտում կառուցված Մին թագավորության շինությունների մոտ: Մի քանի հարակից կառույցներ, ինչպիսիք են Շիփայի դարպասը, Դափայի շինությունը, Քարե կերպարներն ու Քարե կենդանիները, Վիշապի ու Փյունիկի դարպասը, Յոթնակամար կամուրջն ու Հնգակամար կամուրջը, դաոսականության ստելաների տաղավարը և այլ կառույցներ, գտնվում են Սուրբ պա-

տանու արահետի շուրջ՝ 12մ լայնության վրա՝ կազմելով 15⁰-ի կորություն: Այդ առանցքի արևելյան մասում գտնվում է Սիաոդոն դամբարանը, որտեղ թաղված է Սիաոխուեյ կայսրուհին ու Շունճի կայսեր 28 հարճերը, Ծինլին գետնադամբարանը, որտեղ թաղված են Քանգսի կայսեր 48 հարճերը, Ծինլին դամբարանը, որտեղ թաղված է Քանգսի կայսրը իր չորս կայսրուհիներով ու մեկ հարճով և Ծինշուան գետնադամբարանը, որտեղ թաղված են Քանգսի կայսեր երկու հարճերը: Առանցքի արևմտյան մասում գտնվում է Հյուլին դամբարանը, որտեղ թաղված է Ցիենլոն կայսրը իր կայսրուհիներով ու երեք հարճերով, և Հյուլին գետնադամբարանը, որտեղ թաղված են Ցիենլոն կայսեր 36 հարճերը: Դինդոն դամբարանը պատկանում է երկու կայսրերի մայրերին՝ Ցիանին ու Ցիսիին: Մյուս գերեզմանատները, այդ թվում նաև Դին գետնադամբարանը, որտեղ թաղված են Սիենֆոն կայսեր 15 հարճերը և Դինլին դամբարանը, որտեղ ամփոփված են Սիենֆոն կայսրի ու Սիաոդը կայսրուհու մարմինները, գտնվում են Ծինկան բլրին դեմ առ դեմ: Այստեղ կարելի է տեղ հասնել ուղիղ ճանապարհով. այն սկսվում է Սիաոլին դամբարանից ձգվող գլխավոր փողոցից, և այցելուների համար ապահովված է տեղորոշման ցանցով:

Յոննին լեռան վրա կառուցված՝ Ցին դինաստիային պատկանող Սիվին դամբարանը գտնվում է Հեբեյ նահանգի Ի վարչաշրջանից 15 կմ դեպի արևմուտք, դիմահայաց՝ Ծընխուա քաղաքում գտնվող Դոնլինի դամբարանին: Այստեղ են դամբանված Յոնգճընը, Ծիյային, Դաոգուան, Գուանցի կայսրերն ու նրանց հարճերը, ուստրերն ու դուստրերը, նրանց զարմիկները, ընդհանուր հաշվով՝ 76 մարդ: 14 գերեզմանատներով Յոնգֆու տաճարն ու նրա հարակից պալատները կառուցված են Ցին դինաստիային բնորոշ ճարտարապետական ոճով:

Մին դինաստիային պատկանող Սիվին դամբարանը, որտեղ թաղված են Մին դինաստիայի առաջին կայսր Ճյու Յուենճյանն ու նրա կինը՝ կայսրուհի Մաաշին, գտնվում է Նանկին քաղաքի Ջըծին լեռնաշղթայի հարավային մասում՝ Դուլոնգֆու բլրի Ուանճու կատարին: Ի հիշատակ Սյաոծը կայսրի, նրա մահանալուց հետո դամբարանը կոչվել է Սիաոլին: Սա Չինաստանի ամենամեծ կայսերական դամբարանն ու Նանկին քաղաքի ամենամեծ գերեզմանատունն է: Լինելով Մին թագավորության թիվ 1 դամբարանը Չինաստանում, այն ներկայացնում է ճարտարապետության ու քարե փորագրության բնագավառում ձեռք բերված բարձր արժեքներն ու մեծ ազդեցություն է թողել 500-ամյա Մին և Ցին դինաստիաների կայսերական դամբարանների շինարարության վրա: Պեկինում, Հուբեյում, Լիաոնինում, Հեբեյում գտնվող բոլոր կայսերական դամբարանները կառուցված են Նանկինի Սիաոլին դամբարանի ճարտարապետության ոճով: Այն

առանձնահատուկ տեղ է զբաղեցնում բոլոր դամբարանների մեջ և ստացել է Մին և Ցին դինաստիաների թիվ 1 կայսերական դամբարան անվանումը:

Մին դինաստիային պատկանող 13 կայսրերի գերեզմանատները գտնվում են Ցիենշոու լեռան վրա, որը և այդ դամբարանային համալիրի անունն է դարձել, Պեկինը Մին թագավորության մայրաքաղաքը դառնալուց հետո: Այն զբաղեցնում է լեռան գրեթե ամբողջ տարածքը, եզրերից բացի՝ ձևավորելով բազմաֆունկցիոնալ, լայնամասշտաբ և շքեղաշուք դամբարանային համալիր: Դա նաև Մին դինաստիայի դամբարաններից ամենալավ պահպանված ու աշխարհի ամենամեծ դամբարանային համալիրն է: Դրանք են՝ Չընծյու կայսեր Չանլին դամբարանը, Ռիենծոն կայսեր Սիենլին դամբարանը, Չուենծոն կայսեր Ծինլին դամբարանը, Հինգծոն կայսեր Հյուլին դամբարանը, Սիենծոն կայսեր Մաոլին դամբարանը, Սյաոծոն կայսեր Պոչամբար դամբարանը, Ուուծոն կայսեր Գանլին դամբարանը, Շիծոն կայսեր Յոննլին դամբարանը, Մուծոն կայսեր Ճաոլին դամբարանը, Շենծոն կայսեր Դինլին դամբարանը, Գուանծոն կայսեր Ցինլին դամբարանը, Սիծոն կայսեր Դելին դամբարանը և Իծոն կայսեր Սիլին դամբարանը:

Շենծինի երեք գերեզմանատները, որոնք կոչվում են նաև Հյուսիս-արևելյան երեք գերեզմաններ, Ցին դինաստիայի նախնիներին պատկանող դամբարաններ են և գտնվում են Լիաոնին նահանգում: Յուրաքանչյուր դամաբարան ունի իր ոճը, և թեկուզ փոքրածավալ է, այստեղ առկա է ծիսակատարության համար անհրաժեշտ ամեն ինչ: Շինարարները կրոնը, հավատքն ու սովորույթները համադրել են Չինաստանի աշխարհագրական դիրքի, շրջակա բնական պայմանների հետ՝ տեղանքի ընտրության ու դամբարանների նախագծման ժամանակ: Շենծինի երեք գերեզմանատները Ցին դինաստիային պատկանող Սիվին և Դոնլին դամբարանների հետ միասին ներկայացնում են Ցին հարստության կայսերական դամբարանների կատարյալ համակարգն ու այդ դարաշրջանի համառոտ պատմությունը:

20. Սիդի և Հոնցուն անտիկ գյուղերը

Անհոյ նահանգի Սիդի և Հոնցուն անտիկ գյուղերը հարավային Անհոյի հին բնակավայրերի լավագույն օրինակներն են: Նրանք հայտնի են իրենց Աքադիյա հովվերգական բնատեսարանով, լավ պահպանված գյուղերով, Անհոյ նահանգին յուրահատուկ՝ հնագույն ոճի բնակավայրերով, հարուստ պատմությամբ ու բազմագունեղ մշակույթով: Սիդի գյուղը կառուց-

վել է Հյուսիսային Սուն դինաստիայի կառավարման ժամանակ և բնակեցվել էր Հու ցեղի ընտանիքներով: Նավի տեսք ունեցող գյուղը շրջապատված է սարերով, որտեղից բխող երկու վտակները հոսում են գյուղի միջով: Մին և Ցին դինաստիաներից մնացած ու մինչ այսօր պահպանված 124 բնակավայրերն ու 3 տոհմական սրահները, այդ թվում՝ Լինցուին պալատը, Ցիսիփուի կառույցը, Ռուիյու բակը, Թաոլի այգին, Արևելյան ու Արևմտյան այգիները, Դաֆու պաշտոնական առանձնատունը, Ծինղայ և Լիյֆու տոհմական սրահները, Ցինգյուն պալատը, Ենֆու տոհմական սրահը և շատ ուրիշ այլ բնակավայրեր, իրենց հոյակապ այգիներով, զարդարված շեմքերով ու մարմարյա պատուհաններով, ծաղիկների ու կենդանիների ընտիր քարե քանդակներով, դրամայից կամ օպերայից վերցված՝ աղյուսի վրա քանդակված տեսարան-չարդախներով, խորիմաստ փայտե քանդակներով և կարկառուն գեղանկարներով ու որմնանկարներով՝ ներկայացնում են անտիկ Անհոյի ինքնատիպ գոյությունն ու էությունը:

Հոնցուն գյուղը կառուցվել է Հարավային Սուն դինաստիայի կառավարման ժամանակ և բնակեցվել էր ուան ցեղով: Պարուրված լինելով կարմրագույն ամպերով ու խոնավ օդով՝ գյուղն իր կախարդիչ բնությամբ, ասես կտավի վրա արված գեղանկարչության գլուխգործոց լինի, այդ պատճառով այն արժանացել է «Գյուղ չինական նկարչության մեջ» տիտղոսին: Մին և Ցին դինաստիաների 140 բնակավայր այսօր էլ կատարյալ տեսք ունեն, որոնց մեջ աչքի է ընկնում Չընճի տոհմական սրահը՝ թիվ 1 անտիկ բնակատեղին հարավային Անհոյում:

21. Յունգան քարայրները

Շանսի նահանգի Դաթոն քաղաքի Յունգան քարայրները գտնվում են Ուուճոու լեռան հարավային մասում և 1 կմ ձգվում են արևելքից արևմուտք: Առ այսօր պահպանված 45 քարանձավներն իրենց 252 մեծ ու

փոքր քարայրներով, ավելի քան 51.000 քարե քանդակներով՝ ընգրկվում են Չինաստանի ամենամեծ քարանձավների՝ Դունհուանգ քաղաքի Մոգաոյի, Լոույան քաղաքի Լունմենի, Տյանշույ քաղաքի Մայտիշան քարանձավների շարքերը, և աշխարհում երեք ամենահայտնի քարե քանդակների հավաքածու ունեցող քարանձավներից մեկն է համարվում՝ Հնդկաստանի Աջանտա և Աֆղանստանի Բամիանական քարանձավների հետ: Վաղագույն շրջանի Թանյաոի հինգ քարայրները պեղվել են հյուսիսային Վեյ դինաստիայի ժամանակ նշանավոր վանականի՝ Թանյաոի կողմից, ում գործունեությունն էլ հիմք հանդիսացավ Յունգան քարանձավային արվեստի բացահայտմանը: Գեր դեմքով, մեծ քթով ու խոր աչքերով, ուղիղ ուսերով կառուցված Բուդդայի հզոր ու ազդեցիկ քարե արձանը երեք ժամանակներում էլ (ներկա, անցյալ, ապառնի) վեհափառ է: Միջին ժամանակաշրջանի քանդակագործության զանազան թեմաների մեջ ընդգծված են հատկապես Շաքյամունի ու Մայտրեյա Բուդդաները, հանրահռչակ Պրաբհութարաթնա ու Շաքյամունի Բուդդաները՝ ուս ուսի նստած, ներկայացված են պահապան դևերը, յոթերորդ երկինքն ու բուդդայական ուխտագնացները և բովանդակում են բուդդայականության տեսությունն ու Վիմալակիրտիի պատմությունը: Այդ կիսանդրիները անպայման ունեն գեր դեմք ու թիկնոց: Նոր կերպարների ու թեմաների ընտրության ժամանակ քանդակագործները մեծ ուշադրություն էին դարձնում դևերի ու նրանց ձևավորման վրա՝ ստեղծելով վեհ կեցվածքով պատկերներ: Քարայրների ստեղծման արվեստն ու միջին դարերում տարածված քանդակագործության տարածված թեմաները տեղայնացվեցին չինական մշակույթի կողմից: Հետագայում ստեղծված դամբարանների մեծամասնությունը միջին և փոքր չափսերի են՝ կառուցված մի բլրի վրա: Այստեղ հաճախ կարելի է հանդիպել եզակի քարայրների, քան բազմաթիվ քարայրների համադրու-

թյան: Պրաբհութարաթնա ու Շաքյամունի Բուդդաների արձանների կառուցումը տարածված էր նաև հետագա դարաշրջաններում. Շաքյամունի Բուդդային ցածր տեղերում էին քանդակում, իսկ Մայտրեյա Բուդդային՝ բարձր: Ցույց տալու համար նրանց վայելչագեղ կեցվածքը, հյուսիսային Վեյ դինաստիայում անդրիները քանդակում էին բարակ դեմքով, երկար պարանոցով, նեղ ուսերով ու խոնարհված դիրքով: Այս քարանձավների ձևավորումը չինական ճարտարապետության մեջ աչքի է ընկնում յուրահատուկ ոճով, որը ցույց է տալիս բուդդայականության տարածումը Չինաստանում:

22. Կայսերական քաղաքն ու Կոգուրյոյի դամբարանային համալիրը

Կայսերական քաղաքն ու Կոգուրյոյի դամբարանային համալիրը գտնվում են Ջիլին նահանգի Ճիան և Լյաոնին նահանգի Խուանրեն վարչատարածքային շրջաններում, դրանք ներառում են նաև Վունի և Ուանդու լեռնային քաղաքները, Գուոնեյ քաղաքը, 12 արքունական մահարձանները, 26 ազնվական դամբարանները, Գուանքայթու ստելան և ընդհանուր գերեզմանի գերեզմանաթմբերից մեկը: Գոգուրեոն (Ք.ա.37թ - Ք.հ.668թ) Հյուսիսային Չինաստանում էթնիկական փոքրամասնություն կազմող ամենաազդեցիկ գերիշխանություններից մեկն էր և կարևոր դեր էր կատարում հյուսիս-արևելյան Ասիայի պատմական զարգացումների մեջ: Ճիան և Խուանրեն քաղաքները վաղ միջնադարում Գոգուրեոյի քաղաքական, մշակութային և տնտեսական կենտրոններն էին, որտեղ գտնվում են Համաշխարհային մշակութային ժառանգություն համարվող Գոգուրեոյի շինությունները: Կայսերական են համարվում Վունի, Ուանդու լեռնային քաղաքներն ու Գուոնեյ քաղաքը: Գոգուրեոյի իշխանության կողմից ընտրված առաջին մայրաքաղաք Վունում հայտնաբերված կարևոր ճարտարապետական բազմաթիվ

շինությունները, առօրյա կյանքից մնացած իրերի ու ռազմական սպառազինությունների նմուշները վկայում են արգասավոր մշակույթի մասին: Հարթավայրում կառուցված Գուոնեյ ու լեռան վրա տեղակայված Ուանդու (նախկինում հայտնի էր որպես Վինա ապառաժե ամրոց) քաղաքները համարվում էին երկրորդ մայրաքաղաքներ: Գուոնեյն այն հին մայրաքաղաքներից մեկն է, որի շուրջը ձգվող քարե պատն այնպես է պահպանվել, որ մարդիկ այսօր էլ կարողանում են տեսնել նրա շինարարական ոճը: Ուանդու լեռնային քաղաքի նախագիծը ստիպել է ճարտարապետին օգտագործել իր ողջ հնարամտությունը լեռնային տարածքի դժվարությունները հաղթահարելու համար: Գուոնեյ և Ուանդու քաղաքների միջև ընկած հարթավայրում գտնվում է 7000 շիրիմ, որը հյուսիս-արևելյան Ասիայի ամենամեծ գերեզմանոցային համալիրն է: Այստեղ գտնվում են նաև Գոգուրեոյի իշխանությանը պատկանող 10 կայսերական դամբարաններ, ներառյալ՝ ընդհանուր գերեզմանոցն ու Գուանքայթու դամբարանը, որոնք իրենց յուրահատուկ կառուցապատման ձևով ու որմնանկարչությամբ խորհրդանշում են կայսերական ու ազնվական ընտանիքները՝ ցույց տալով գոգուրեոյական արվեստի ու բարձրակարգ ճարտարագիտության ձեռքբերումները: Գուանքայթու դամբարանում տեղ գտած՝ ստելայի վրա առկա քարե մակագրությունը Գոգուրեոյի ամենաերկար փաստաթուղթն է, որը պահպանվել է մինչ օրս:

23. Մակաո քաղաքի պատմական կենտրոնը

Մակաո պատմական կենտրոնը թաղամաս է՝ բաղկացած հրապարակներից ու փողոցներից: Կենտրոնի հանրային հրապարակներից են՝ Ա-Մա տաճարի, Լիլաուի, Սբ. Օգոստինոսի, Սենադոյի, Իգրեժա դա Սեի, Սբ. Դոմինիկ եկեղեցու, Սբ. Պողոս եկեղեցու ավերակների, Քեմոես քարայրի հրապարակները և այլն: Ավելի քան 20 պատմական կառույց կատարյալ են

դարձնում կենտրոնը. դրանք են՝ Ա-Մա տաճարը, Մուրիշյան բարաքները, Մանդարինի տունը, Սբ. Լորենս եկեղեցին, Սբ. Հովսեփ ճեմարանն ու եկեղեցին, Դոն Պեդրո Գ թատրոնը, պրն Ռոբերտ Հո Տունգի գրադարանը, Սբ. Օգոստինոս եկեղեցին, Լիլ Սենադոյի կառույցը, Քուան Թայի տաճարը, Գթության Սբ. տունը, Իգրեժա դա Սե մայր տաճարը, Լոու Քանի առանձնատունը, Սբ. Դոմինիկ եկեղեցին, Սբ. Պողոս եկեղեցու ավերակները, Նա Չա տաճարը, հատված հին քաղաքի պատերից, Մեծ ամրոցը, Սբ. Էնթոնի եկեղեցին, Քասա այգին, Բողոքականների հին գերեզմանոցը, Գիա ամրոցը և այլն: Մակաո պատմական կենտրոնի բնակիչները տարբեր երկրներից են՝ Պորտուգալիայից, Իսպանիայից, Նիդեռլանդներից, Մեծ Բրիտանիայից, Ֆրանսիայից, Իտալիայից, Ամերիկայի Միացյալ Նահանգներից, Ճապոնիայից, Շվեդիայից, Հնդկաստանից, Մալայզիայից, Ֆիլիպիններից, Կորեայից և Աֆրիկայից: Ունենալով տարբեր մշակույթ, տարբեր արհեստներ ու տարբեր ավանդույթներ՝ նրանք կառուցել են տներ, եկեղեցիներ, ամրոցներ, գերեզմաններ, ճանապարհներ, կազմակերպելով գունագեղ ու բազմազան մշակութային միջոցառումներ: Նրանք առաջիններից են, ովքեր նորամուծություն են կատարել Չինաստանում, օրինակ, Սուրբ Պողոս քոլեջը առաջին արևմտյան ոճի համալսարանն է, Ս. Ռաֆայելի անվան հիվանդանոցն առաջին արևմտյան կարգի հիվանդանոցն է, Սբ. Պողոս քոլեջին կից տպարանը առաջին տպագրատունն է, որը տպագրելու համար օգտագործել է արևմտյան մետաղական թիթեղներ և տպագրել լատիներեն գործեր Չինաստանում:

24. Յինսյուն՝ Շան կայսրության մայրաքաղաքը

Յինսյուն գտնվում է Հենան նահանգի Հինդու շրջանում: Յինսյուն Համաշխարհային մշակութային ժառանգություն է իր կայսերական գերեզմանատներով, պատմական վայրերով, պալատներով ու տաճարներով և Խուան գետի հյուսիսային ափին գտնվող Շան քաղաքի պահպանված մասով: Մատենագրական ճշտությամբ՝ սրանք Շան դինաստիայի վերջին քաղաքի մնացորդներն են, որոնք ուսումնասիրվել են հնագետների կողմից այստեղ պեղված ոսկորների հիման վրա: Յինսյուի պեղումները 100 ամենանշանավոր հնագիտական հայտնագործություններից են 1900-ական թվականների Չինաստանում: Երկրի ակադեմիական ինստիտուտի կողմից 1928թ. իրականացված պեղումների արդյունքում հայտնաբերվեցին 110 տեսարժան վայր՝ Շան թագավորության պալատների ու տաճարների մնացուկներ, 12 կայսերական գերեզմանատուն, Խուան գետի հյուսիսային ափին գտնվող Շան քաղաքի ավերակներ, 2500 զոհաբերության

հորեր, ընտանեկան գերեզմանոցներ, արհեստանոցներ, մի շարք հնություններ՝ բրոնզե իրեր, նեֆրիտ, խեցեղեն, կմախքի ոսկորներ անտիկ ժամանակաշրջանից և այլն: Յինսյուի միջոցով կարելի է պատկերացում կազմել 3300 տարի առաջ գոյատևած Շան դինաստիայի քաղաքների մասին: Պալատների ու տաճարների մեծ մասը պատրաստվում էին բարձր ու ամուր սյուների վրա, որոնք խոր մխրճված էին հողի մեջ, իսկ որպես շինանյութ օգտագործվում էին լյոս ու փայտ: Հիմքը ցոկոլապատվում էր, հենասյուները պատրաստվում էին փայտից, տանիքները ծածկվում էին ծղոտով: Անտիկ դարաշրջանում նորաոճ չինական պալատների դիզայնը հոյակապ էր՝ հասարակ, բայց վայելչագեղ և ներկայացնում էր վաղ արքունական ճարտարապետության նորարարական ձեռքբերումները: Կայսերական գերեզմանոցի ավերակները դամբարաններ էին, որտեղ թաղված էին ընտանիքի անդամներ, այնտեղ կային նաև սուրբ վայրեր զոհաբերության համար: Այս դամբարանները կարելի է դիտել որպես կայսերական դամբարանների նախատիպ, և համարվում էր ամենավաղ ու ամենալավ պահպանված դամբարանային համալիրը: Երկնային բարձունքից երևում է, որ Շան քաղաքը քառակուսաձեւ է և հիմնական մասը ընկած է Խուան գետի հյուսիսային ափին, որը Յինսյուի հյուսիս-արևելյան հատվածն է կազմում: Գիտնականները Շան քաղաքն անվանում էին «Խուան գետի հյուսիսային ափին գտնվող քաղաք»: Դա առանցքի շուրջ կենտրոնացված՝ հին դարաշրջանի քաղաքի նախագծի օրինակ է: Շան քաղաքի առաջին պալատի ավերակները հայտնաբերվել են առանցքից հարավ ընկած տարածքում, իսկ *սըխըյուեն* կառուցման ոճից ենթադրվում է, որ այդ ոճը սկիզբ է առել Շան քաղաքից:



25. Կաիպին քաղաքի Դյաոլոու բազմահարկ ամրոցներն ու գյուղերը

Դյաոլոու բազմահարկ ամրոցներն ու գյուղերը գտնվում են Գուանդուն նահանգի Ծյանմեն վարչատարածքի Կաիպին քաղաքում: Դյաոլոու բազմահարկ ամրոցները լայն տարածում ունեն քաղաքներում ու գյուղերում՝ 10 կմ ձգվելով Շեյքաոյից Բայխը, Թանքաոյից՝ Չիշուե և Սիենգան քաղաքները: Դրանց ճարտարապետական ոճը բազմազան է. այն ներառում է ավանդական չինական Յինգշան ու ճապոնական Ցյուենշան ոճերից մինչև եվրոպական ու հռոմեական գոթական ոճերը: Դյաոլոուի դռներն ու պատուհանները շատ փոքր են և պատրաստված են պողպատից: Ձեղնահարկերն ունեն հրակնատներ, որոնք ուղղանկյուն են կամ T-աձև: Դյաոլոուի որոշ ձեղնահարկերի չորս անկյուններում կան դուրս ցցված «ծիծեռնակի բներ»: Դյաոլոուի տիպի ամրոցները հաճախ սպառազինված էին հրազենով, թնդանոթներով, լուսարձակներով, ազդանշանային համակարգով, քարե ու բրոնզե զանգերով: Ըստ կառուցման համար օգտագործված շինանյութերի՝ Դյաոլոու ամրոցները բաժանվում են չորս տեսակի: Առաջին. Ռոյշի տեսակի համար օգտագործվում էր ցեմենտ, մանրախիճ, քար ու պողպատ, որը համարվում էր ամենաամուրն ու կայունը: Երկրորդ. աղյուսե Դյաոլոուն կառուցվում էր մի քանի ձևով՝ ներսի կողմը՝ տիղմով, դրսի կողմը՝ աղյուսով; Ներսը ցեմենտապատվում էր, իսկ դրսի կողմը՝ աղյուսապատվում կամ ամրոցն ամբողջովին կառուցվում էր աղյուսով: Երրորդ. տիղմապատ Դյաոլոուն՝ կառուցվում էր տիղմաշեն աղյուսով կամ լյոսով: Չորրորդ. քարե Դյաոլոուն՝ կառուցվում էր ապառաժներով ու գետնաքարերով: Այս փոքր ու տեսքով կոպիտ ամրոցներն անառիկ ու տոկուն շինություններ են: Սակայն դրանք շատ հազվադեպ էին կառուցվում, այդպիսիք կարելի է գտնել միայն լեռնային տարածաշրջաններում:



26. Տուլոու կավե տները Ֆուցզյան նահանգում

Ֆուցզյանի գյուղական տների կարելի է հանդիպել Ֆուցզյան նահանգի Յոնգդին վարչատարածքի Լոնյան քաղաքում և Ճանկճոու վարչատարածքի Նանկին քաղաքում: Այդ տները կառուցվել են հաքքա ժողովրդի կողմից և խորհրդանշում են հաքքայի մշակույթը, այդ պատճառով դրանք կոչվում են նաև Հաքքա բնակատեղի: Յոնգդին և Ճանկճոու վարչատարածքների տուլոու տները Հաքքա տների յուրատիպ օրինակներ են: Ըստ

արտաքին ձևավորման՝ տուլոուները լինում են կլոր, քառակուսի և փյունիկաձև: Հրաշալի դիզայնով ու որակով տուլոուների կառուցման համար հողի և ավազի, կրաքարի, հնդկեղեգի ու փայտի խառնուրդները մի քանի անգամ հունցելուց, թակելուց ու ճզմելուց հետո օգտագործել են որպես շինանյութ, այդ պատճառով դրանք կոչվում են նաև հողե կառույցներ: Տուլոուի առանձնահատկություններն են՝ հողի ու փայտի հրաշակերպ համադրություն, գեղեցկատես արտաքին, վայելչագեղ դիզայն, տարածնություն: Դրանք ընդարձակ են ներսից, կայուն՝ դրսից; Օգտագործված շինանյութը ընտրված է ըստ տեղանքի պայմանների: Կլոր տուլոուները տարածված են Յոնգդին վարչատարածքում և համարվում են աշխարհի առաջին բնակավայրերը: Կլոր տուլոուների առանցքի շուրջ գտնվում է տոհմական սրահը, և նախագծով պահպանվում է սիմետրիկությունը: Համակենտրոն շրջաններով տները դրսից մեծ են, իսկ ներսից՝ փոքր, որովհետև ներսում գտնվում են կառույցներ, որոնք իրար շարունակելով՝ շրջան են կազմում: Տոհմական սրահները կենտրոնական կառույցերն են, որոնք շրջանաձև առանձնացվում են բակից. դեպի տոհմական սրահներ են ձգվում հատուկ միջանցքները: Տոհմական սրահներ կան նաև կողքի մասերում, որոնք դիմահայացով դեպի մուտքի դարպասն են ուղղված. դրանք կոչվում են վեհապանծ սրահներ: Կլոր տուլոուները սովորաբար ունեն չորս հարկ: Առաջին հարկում գտնվում են խոհանոցն ու

ճաշասենյակը, երկրորդ հարկում՝ պահեստարանը, երրորդ ու չորրորդ հարկերում՝ ննջասենյակները: Այսպիսի տները հաքքա ժողովրդին պաշտպանում էին թշնամիներից: Նրանց գործելակերպի մեջ երևում է հաքքա ժողովրդի ողջամտությունը:

Քառակուսի տուլոուները ամենատարածված բնակավայրերն են և՛ քանակով, և՛ բազմազանությամբ: Արտաքին կողմից դրանք շրջապատված են բարձր պատով՝ անկյուններում չորս հրեշտակների քանդակներով, որը շրջապատելով բնակատեղին, հանդիսանում է պաշտպանիչ պարիսպ: Քառակուսի շարքին պատկանող ուղղանկյուն տուլոուները կառուցված են ‹‹口››, ‹‹目››, ‹‹目›› չինարեն նիշերի ձևերով: Ներդաշնակորեն նախագծված՝ հասարակ, բայց և վեհասքանչ փյունիկածև տուլոուն ունի հնգաքիվ եզրերով տանիք՝ նման սավառնող փյունիկի, այդտեղից էլ եկել է նրա «փյունիկ» անվանումը: Իրենց դիզայնով այդ տները նման են պետական առանձնատներին ու կայսերական պալատներին: Փյունիկանման տուլոուները կառուցվել են անտիկ տների նախագծով, չինական հան ցեղի կողմից, ովքեր ապրում էին Դեղին գետի միջին հոսանքի ափին: Ճանկճոու վարչատարածքում գտնվող այս տուլոուները կառուցվել են հողի և կրաքարի, ավազի, հնդկեղեգի և փայտի խառնուրդից: Նրանք ունեն երեք կամ հինգ հարկ. առաջին հարկում գտնվում է խոհանոցը, երկրորդում՝ պահեստարանը, երրորդ ու դրանից վեր հարկերում հյուրասենյակներն են, որոնցում տեղավորվում են 200–700 մարդ: Ճանկճոուի տուլոուների առանձնահատկություններն են՝ մարդիկ ապրում են ընտանիքներով, պաշտպանված են հրդեհներից ու գազանների հարձակումներից, այստեղ բացառվում է գողությունը, դրանք սեյսմակայուն են, օդափոխման ու լուսավորման ճշգրիտ նախագծի շնորհիվ զերծ են խոնավությունից, այստեղ ամռանը զով է, ձմռանը՝ տաք: Ֆուջյանում գտնվող 46 տուլոու կավե տներ պաշտոնապես գրանցվել են Համաշխարհային մշակութային ժառանգության ցանկում, այդ թվում՝ Թիենլոուքը, Հենքընգ, Խըգուեյ, Խուայյուե տուլոուների խմբերը և այլն: Հաքքա ժողովուրդը հպարտանում է, որ հենց իրենք են Ֆուցզյանի ավանդական բնակավայրի՝ այդ անզուգական գանձի ճարտարապետները: Յուրաքանչյուր տուլոուի պատմություն մի գյուղական ընտանիքի պատմություն է և լիովին բացահայտում է հաքքա ժողովրդի ստեղծագործական գաղափարները:

27. Ուտաի լեռը

Ուտաի լեռը գտնվում է Շանսի նահանգի հյուսիս-արևելյան մասում, և չինական բուդդայականության մեջ չորս սուրբ լեռներից մեկն է. մյուս երեք՝ Ճոուշան քաղաքի Պուտուաշան, Սիչուան նահանգի Էմեիշան և Անհոյ նահանգի Ճըհուաշան սուրբ լեռներից Ուտաին համարվում է թիվ 1 սրբազան վայրը: Ուտաի լեռը, Նեպալի Լումբինի այգին, Հնդկաստանի Սարնաթ, Բոդհի Գայա, Կուշինագար վայրերը հանդիսանում են բուդդայական հինգ սրբավայրերը: Լեռն ունի հինգ գագաթ՝ Ուանխայը՝ արևելքում, Գուայուեն՝ արևմուտքում, Ծինսիոն՝ հարավում, Իդուն՝ հյուսիսում ու Ցուիյենը՝ կենտրոնական մասում: Այդ լեռնագագաթները հարթակի պես հարթ են, ըստ որի ծագել է լեռան անունը՝ “Wu-tai”, որը բառացիորեն նշանակում է «հինգ հարթակ» (չինարեն հնչողությամբ “wu” նշանակում է հինգ, “tai”՝ հարթակ): Հայելու նման հարթ Ուանխայ (բառացիորեն՝ օվկիանոս) գագաթը կարծես խրվում է արևի մեջ, այն հրաշալի վայր է արևի լույսը վայելելու համար: Հարթ գագաթով Գուայուե (բառացիորեն՝ կախելով լուսինը) լեռնակատարի վրա կարծես լուսինը նստում է՝ իր լույսն արտացոլելով ինչպես հայելի: Ծինսիո հարթ լեռնագագաթը նման է գլխիվայր շուռ տված նավի՝ 500մ շրջանագծով: Բազմաթիվ մեծ ու փոքր սարերով շրջապատված այս բարձր ու ուղղաձիգ լեռնագագաթը զարդարված է երփներանգ ծաղիկներով: Երբ ամպերը խունկի ծխի նման օղակում են նրան, մի անզուգական տեսարան է հեռվում ընդգծվում, այստեղից էլ հետևում է նրա անունը՝ Ծինսիո (բառացիորեն՝ «հրաշալի տեսարան»): 2000մ շրջանագծով Իդու հարթ լեռնագագաթը նման է մեծ շերեփի: Երբ մարդիկ երկինք են նայում, տեսնելով լեռը՝ կարծես երկնքում գտնում են Մեծ շերեփի համաստեղությունը: Այստեղից էլ ծագել է նրա

անունը՝ Իդու (բառացիորեն՝ գիշերը գտնելով Մեծ շերեփը): 2500մ շրջանագծով Ցուիյեն հարթ լեռնագագաթի հսկա ժայռերը մշտապես պատված են կանաչ մառախուղով. Ցուիյեն՝ բառացիորեն նշանակում է մշտադալար ժայռ:

Ուտաի լեռան ստորոտում գտնվում են 95 լավ պահպանված տաճար, որոնցից Ֆանչի վարչատարածքում գտնվող Նանչյան, Ֆոգուան, Ծիենքոն, Գուանծի, Ենշեն տաճարներն ու Դինգսյան վարչատարածքի Խոնֆու տաճարը ազգային մակարդակով պահպանված պատմական ու մշակութային տեսարժան վայրեր են: Ուտաիշան լեռներում տեղի է ունենում բուդդայական *գելու* աղանդի կողմից կազմակերպվող նշանավոր մի միջոցառում՝ *բուճա* պարը: Միջոցառման նախօրյակին քրմերը տաճարներում սուտրաներ են երգում և վաջրաներով պարում, այդպես նրանք բուդդայական տաճարներից վտարում են չար ոգիներին: 15-րդ օրը հարյուրավոր քրմեր տաճարներից դուրս են գալիս և մեծ խմբերով գնում Լոխաո տաճար՝ պարելու բուճա պարը: 16-րդ օրը գլխավոր քրմերն ու նրանց օգնականները հատուկ հանդերձանք են հագնում, որը նրանց տրվում է քրմապետների կողմից. հագնում են դիմակներ՝ ներկայանալով որպես չինական 28 համաստեղության ներկայացուցիչներ, և այդպես դուրս են գալիս փողոց: Շրջան կազմելով, հատուկ կեցվածքով ու ձեռքի շարժումներով՝ նրանք դուրս են քշում չար ոգիներին և երկրում հաստատում խաղաղություն ու երջանկություն:

28. Սունշան լեռան ստորոտում գտնվող Դենֆենի պատմական հուշարձանները

Հենան նահանգում գտնվող Դենֆենի պատմական հուշարձանները ընդգրկում են ութ պատմական հուշավայրերից բաղկացած 11 տեսարժան վայր՝ Շաոլին տաճարների համալիրը (Կենտրոնական տաճարը, Չյուծու տաճարը, Պագոդա տաճարը), արևելյան Հան դինաստիայի երեք դարպասները (Տայշի Ցյուե, Շաոշի Ցյուե, Ցիմու Ցյուե) Ճոնգյուե տաճարը, Սոնգյուե տաճար-պագոդան, Հուիշյան տաճարը, դասական կրթության Սոնգյան ակադեմիան և Դենֆենի աստղադիտարանը: Սրանք այն պատմական հուշարձաններն են, որոնք անցել են երկար ու փորձություններով լի ճանապարհ՝ Հան, Վեյ, Թան, Սուն, Յուան, Մին և Ցին դինաստիաների ժամանակշրջաններում, ներառելով բազմակերպ ճարտարապետություն, ստեղծելով հարուստ մշակույթ: «Երկնքի ու երկրի կենտրոն» հասկացությունը Չինաստանում այն գաղափարն է մատնանշում, որ գոյություն ունի երկնքի ու երկրի միջև ընկած թագավորություն, իսկ երկնքի

ու երկրի սիրտն էլ համարվում է Չինաստանի կենտրոնը: Ասում են՝ Չինաստանի կենտրոնը համաշխարհային փիլիսոփայության միջուկն է, հետևաբար վաղ դինաստիաների ճենճոու մայրաքաղաքում գտնվող Դենֆենը համարվում է մշակութային և կրոնական (դաոսականության, բուդդայականության, կոնֆուցիականության) կենտրոն: Այն կենտրոն է նաև աշխարհագրական դիրքով ու իր աստղադիտարանով: Վաղ Հան դինաստիայի օրոք կառուցված «Շաոշի Ցյուե դարպաս ու Ցիմու Ցյուե դարպաս» տաճարները զոհաբերությունների համար ամենահին սրբավայրերն են: Ճոնգյուե տաճարն ու «Ցիմու Ցյուե դարպաս»-ը ներկայացնում են որպես չինական յուրահատուկ ճարտարապետության դասական նախագիծ: Ճոուգոնի արևային էներգիայի հարթակն ու Դենֆենի աստղադիտարանը Չինաստանի ամենահին ասղագիտական հաստատություններն են: Դասական կրթության Սոնգյան ակադեմիան ամենահին կրթարանն է, որը սերմանել է կոնֆուցիականության սկզբունքները, զոհաբերություններ արել սրբերին, տարբեր հետազոտություններ կատարել; Այն համարվում է անտիկ մշակույթի ակադեմիայի ժառանգորդը, որն այսօր չի գործում: Սոնգյուե տաճար-պագոդան, Շաոլին տաճարների համալիրն ու Հուիշյան տաճարը տարբեր դարաշրջանների բուդդայականության զարգացման հիմնաքարերն են:

29. Արևմտյան Սիհու լիճն ու Հանչժոուի մշակութային լանդշաֆտը

Արեւմտյան Սիհու լիճն ու Հանչժոուի մշակութային լանդշաֆտը գտնվում են Ճըծյան նահանգի Հանչժոու քաղաքում և զբաղեցնում են 33 կմ^2 տարածք: Այդ գեղատեսիլ բնապատկերն ընդգրկում է «Երկու խճուղի և երեք կղզի» եզակի նախագիծը, գեղաշուք տարածք՝ «ամպերի առջև դասավորված երեք բլրով ու մի շինությամբ», 10 ամենագեղեցիկ բնատեսա-

րան ունեցող լճերից մեկը՝ Արևմտյան լիճն իր յուրահատուկ բնությամբ: «Բնությունն ու մարդը՝ մեկ միասնություն» փիլիսոփայական արտահայտությամբ՝ տեղանքը ցույց է տալիս չինական լանդշաֆտի գեղագիտությունը և իր դիզայնով մեծապես ազդում է չինական ու աշխարհի շատ կանաչապատ տարածքների նախագծման վրա: Արևմտյան լիճն ու Հանչժոուի մշակութային լանդշաֆտը Համաշխարհային մշակութային ժառանգության ցանկի մեջ ներառվել են 2011թ. հունիս ամսին:

30. Շանդու պատմական քաղաքը

Յուան թագավորության մայրաքաղաք Շանդու պատմական քաղաքը գտնվում է Չինաստանի՝ Ներքին Մոնղոլիայի Սիվինգոլ շրջանի Ույի ագարակի մոտ, որը տեղակայված է Լյուանխը գետի վերին հոսանքի հյուսիսային ափին: Չինաստանի հյուսիսային մասում կառուցված մայրաքաղաքում բնակվում էին երկրի կենտրոնական շրջանների՝ գյուղական և քոչվորական քաղաքակրթությունների միաձուլումից առաջացած էթնիկական խմբեր: Շանդու պատմական քաղաքը կազմված է, այսպես կոչված՝ երեք

ենթաքաղաքներից՝ պալատական, թագավորական ու արտաքին քաղաքներից: Պալատական քաղաքին յուրահատուկ տեսք են հաղորդում չորս ծայրերում կառուցված գեղատեսիլ շինությունները, ինչպիսիք են Շուիծին, Հոնգցի, Մուցին, Դաան սրահներն ու այլ կառույցներ, և աղյուսե ջրամբարը, որտեղ թափվում են երկրի միջնատարածքով հոսող գետերը: Պալատական քաղաքը երիզող՝ քարե պատերով թագավորական քաղաքն ունի լայն ու ուղիղ, հարթ ու մաքուր նրբանցքներ: Թագավորական քաղաքի հարավում գտնվում են պաշտոնական նստավայրն ու կառավարական կառույցները, հյուսիս-արևելքում՝ Թանյուեն տաճարը, հյուսիս-արևմուտքում՝ Լոնյուեն տաճարը: Թագավորական քաղաքի հյուսիս-արևմտյան մասում գտնվող արտաքին քաղաքն ամբողջովին կառուցված է հողից: Հարավում գտնվում են կառավարական տները, տաճարներն ու գործարանները, իսկ հյուսիսում՝ թագավորական այգին, որտեղ հաճախ էին այցելում կայսրերը: Շուկաները, կացարաններն ու խանութները տեղակայված են արտաքին քաղաքի արևելյան, հարավային ու արևմտյան արվարձաններում: Շանդու քաղաքը լքվել էր դեռ Մին դինաստիայի Յոնգլ կայսեր օրոք, սակայն պատերն ու սյուները մնացել են մինչև այսօր: Շանդուն Մոնղոլիայում անվանում են Ճաոնաման Սումու, որը կոչվում է «108 տաճար»: Մարկո Պոլոն, Շանդու պատմական քաղաքն ու Չինաստանը առաջին անգամ ներկայացնելով աշխարհին, իր ճամփորդորդություններ-ի մասին աշխատությունում մանրամասնորեն նկարագրել է Շանդուի ազգային ավանդությունները, պալատներն ու տաճարները, արքունական վարվելակարգը:

31. Հունհե Հանի բրնձե սանդղավանդները

Յուննան նահանգում գտնվող Հունհե Հանի բրնձե սանդղավանդները, որոնք ստեղծել է *հանի* ժողովուրդն՝ ըստ աշխարհագրական դիրքի ու կլիմայական պայմանների, գյուղատնտեսական լանդշաֆտ է և ունի 1300 տարվա պատմություն: Ընդարձակ սանդղավանդներն ընդգրկում են Հոնգհա գետի հարավային ափին գտնվող Ծինփին, Լյուչուը, Յուենյան շրջանները: Յուենյան շրջանի Հանի սանդղավանդները տեսարժան են երեք բնատեսարանով՝ 9,3 կմ^2 տարածություն ունեցող Դաբա բնապատկերով, որը զբաղեցնում է Ցինքաու, Ցյուենֆու, Մալի, Ճուլու գյուղերի տարածքները, 4 կմ^2 տարածությամբ Լախուծուեյ գեղատեսիլ վայրը, որն ընդգրկում է Բաոշան գյուղը, Մընփին, Դոնփու, Ամընքոն տեղավայրերը, 6,7 կմ^2 -ից ավելի տարածքով Տայիշու չքնաղ տեսարանը՝ Տայիշու, Այչը ու Դաուցի վայրերով: Այս տեսարժան լանդշաֆտում կարելի է ընդգծել

չորս առանձնահատկություն. առաջին՝ կես քառակուսի կիլոմետր տարածք զբաղեցնող վայրերը միասին ձևավորում են մի ընդհանուր սանդղավանդ: Երկրորդ՝ այս ուղղաձիգ սանդղավանդները գտնվում են 15–75 աստիճան թեքությամբ ժայռերի վրա, երրորդ՝ սանդղավանդներ հասնելու համար կառուցվել են աստիճաններ: Ամենաբարձր սանդղավանդն ունի 3000 աստիճան: Այս բարձրադիր բրնձե սանդղավանդները գտնվում են ծովի մակարդակից 2000մ բարձրության վրա և ձգվում են հովտից մինչև սարերը, որտեղ ամենաբարձր վայրն է բրինձ աճեցնելու համար:

32. Մեծ ջրանցքը

2014թ. հունիսի 22-ին ՅՈՒՆԵՍԿՕ-ի Համաշխարհային ժառանգության կոմիտեն, Քաթարի մայրաքաղաք Դոհայում կայացած հանդիպման ժամանակ, որոշում ընդունեց Չինաստանի Մեծ ջրանցքը համարել համաշխարհային մշակութային 32-րդ ժառանգություն և համաշխարհային բնական 46-րդ ժառանգություն:

Մեծ ջրանցքի մեջ ընդգրկվում են 10 հատված՝ Թոնգծի ջրանցքը, Ուեյ գետը (Յոնգծի ջրանցքը), Խուաիյան ջրանցքը, Ցիաննան ջրանցքը(ճեն-

ծիան-Հանչժոու հատվածը), Ճըդոն ջրանցքը (Հանչժոու-Նինբո հատվածը), Թոնխուեյ ու հյուսիսային ջրանցքները (Պեկին-Տյանցզին), Հարավային ջրանցքը(Տյանցզին-Լիաոչը), Հուիթոն ջրանցքն ու Միջին գետը (Թայերճոուն-Սուցիեն հատվածը): Ժառանգության այս շարքն աչքի է ընկնում հրաշալի դասավորվածություն ունեցող գետերով ու բազմանշանակ տեսարժան վայրերով՝ Մեծ ջրանցքի 27 հատվածների հետ, ներառյալ 58 ջրավազանների ավերակները, կից կառույցներով և այլ պատմական արժեքներով:

Մեծ ջրանցքը ձգվում է Պեկինից(հյուսիս) մինչև Ճըծիան նահանգը (հարավ): Ներքին ջրային համակարգը տարածվում է Չինաստանի միջին արևելյան շրջանի ութ նահանգով մեկ:

Ջրանցքի աշխատանքները մեկնարկել են Ք.ա. 5-րդ դարից և ավարտվել Ք.հ. 7-րդ դարում (Սույ դինաստիա). հատված առ հատված կառուցապատվելով՝ այն դարձել է առաջին միավորված ջրային համակարգը:

Թոնգծի ջրանցքը՝ Մեծ ջրանցքի Տույ-Թան հատվածը, գլխավոր ջրանցքն է, որի աշխատանքները սկսվել են 605թ.՝ իրար միացնելով Դեղին և Հուայհե գետերը. այն ձգվում է Լոյան քաղաքից մինչև Յանգճոու քաղաքը, և այդ ժամանակ համարվում էր «երթևեկության պողոտա»: Մեծ ջրանցքի երկայնքով տեղ գրաված Ճընծոու, Լոյան ու Քայոն քաղաքները Չինաստանի կենտրոնական տարածքի մեծ քաղաքների շարքում աչքի են ընկնում զարգացած տնտեսությամբ:

Հիմնական հատվածի՝ Խուաիյան ջրանցքի աշխատանքը ձեռնարկել է Ու թագավորության Ֆուչայ արքան, Ք.ա. 486թ.: Այն շարունակել են կատարելագործել Գարուն-աշուն դարաշրջանում (Ք.ա. 770-476թթ.)՝ միավորելով Խուաիյանի ու Յանգճոուի Մին-Ցին անտիկ ջրանցքները, ներկայիս Պեկին-Հանչժոու Մեծ ջրանցքն ու Դեղին գետը: Ջրանցքը սկիզբ է առնում Խուաիյան վարչատարածքի Յան գյուղից, դեպի արևմուտք հոսելով՛ անցնում է Ներքին ջրանցքն ու հասնում Խուաիյանի Չուչժոու շրջանում գտնվող ջրակարգավորման համակարգին, այստեղ միանալով Մեծ Ջրանցքի Պեկին-Հանչժոու հատվածին՛ հոսում է դեպի հարավ՛ մինչև Յանգճոու վարչատարածքի Գուանչին շրջանի Ուանթաո քաղաք, շրջվում դեպի արևմուտք՛ մինչև Յանգճոուի հին ջրանցքն ու Գուաճոու ջրանցքը և թափվում Յանցզի գետի հյուսիսային ափից ներս՝ կազմելով 183 կմ ընդհանուր երկարություն: Խուաիյան Ջրանցքի ջրատար ճանապարհը պահպանվում է դեռևս Մին ու Ցին դինաստիաների ժամանակաշրջանից, և նույնիսկ բոլոր ենթահատվածները պիտանի են օգտագործման համար:

Ճըդոն ջրանցքը(Հուանչժոու-Նինբո հատված), որը սկզբում կոչվում էր Շաոսին քաղաքի(Յու թագավորության մայրաքաղաք) Շյանին անտիկ

ջրանցք, Սահիշան վարչատարածքի Սիսին քաղաքից հոսում է դեպի արևմուտք՝ միանալով Ցաոը գետին, անցնում Շաոսին քաղաքի միջով, այնուհետև թեքվելով արևելք՝ թափվում Նինբո քաղաքով հոսող Յոն գետը՝ ձգվելով 239 կմ: Ջրանցքի Շաոսին հատվածը համարվում էր արքունական ջրատար ուղի, ինչպես նաև տվյալ ժամանակաշրջանի առևտրի առանցքային կենտրոն: Մեծ ջրանցքի չորս հատվածներն ընդգրկված են Համաշխարհային ժառանգության ցանկի մեջ: Դրանք են՝ Շաոսին հատվածը, Պածը կամուրջը, Պածը կամրջի պատմական բնակելի թաղամասն ու հինավուրց խծուծի արահետը՝ այդ տեղանքի տեսարժան վայրերից ամենաարժանիները:

33. Մետաքսի ճանապարհը



«Չյանղան-Տյանշան միջանցքի երթուղային ցանց»-ը, այսինքն՝ Մետաքսի ճանապարհը, Չինաստանի, Ղազախստանի ու Ղրղզստանի անդրազգային հայտի համաձայն, 2014թ. հունիսի 22-ին, ՅՈՒՆԵՍԿՕ-ի Համաշխարհային ժառանգության կոմիտեի՝ Քաթարի մայրաքաղաք Դոհայում անցկացված 38-րդ համաժողովում ընդգրկվեց Համաշխարհային ժառանգության ցանկի մեջ: Դա եղավ առաջին միացյալ համաշխարհային ժառանգությունը:

«Մետաքսի ճանապարհ» եզրույթն առաջին անգամ օգտագործել է գերմանացի աշխարհագրագետ Ֆերդինանդ ֆոն Ռիխտհոֆենը՝ իր «Չինաստան. Իմ ճանփորդության պտուղները» գրքում, որը հրատարակվել է 1877թ.: Մետաքսի ճանապարհը, ընդգրկելով առևտրային երթուղիների համալիր ցանց ու ձգվելով շուրջ 8700 կմ, հայտնի է նաև 33 պատմական օբյեկտներով, որոնցից 22 հնագիտական վայրեր ու անտիկ կառույցներ գտնվում են Չինաստանում՝ չորս տեսարժան վայր Հենան նահանգում(Հան-Վեյ դինաստիայի Լոյան քաղաքի ավերակները, Սույ-Թան դի-

նաստիաների Լոյանի Տինտին դարպասի ավերակները, Հան դինաստիայի Սինյան քաղաքում գտնվող Հանգու կիրճի գեղեցիկ տեսարանը, Սիաո Հանի հնագույն անցուղու քարե հատվածի տեսարանը), Շանսի նահանգի յոթ տեսարանները(Հան դինաստիայի Չյանղան քաղաքում գտնվող Ուեյան պալատի ավերակները, Ճան Ցիանի գերեզմանը, Թուն դինաստիայի Չյանղան քաղաքի Տամին պալատի ավերակները, Վայրի սագ մեծ պագոդան, Վայրի սագ փոքր պագոդան, Սինծիաո տաճար-պագոդան, Բինսիեն բուդդայական մեծ քարայրները), Գանսու նահանգի հինգ դիտարժան վայրերը(Յումենգուան կիրճը, Շյուենչուենշիի տեսարանը, Մայծի լեռնային քարանձավները, Բինգլին տաճարի այրերն ու Սուլյան քաղաքի ավերակները) և Սինցզյան Ույգուր ինքնավար մարզի վեց գեղատեսիլ տեսարանները(Գաոչան և Ծիաոխը հնագույն քաղաքների ավերակները, Քըծըրտահա փարոս-տաճարի ավերակները, Քըծըրի քարանձավները, Սուպաշի բուդդայական տաճարի ավերակները, Պեյթին անտիկ քաղաքի ավերակները): Մետաքսի ճանապարհի երկայնքով ձգվում են նաև ութ հրաշալի տեսարան Ղազախստանում, երեքը՝ Ղըրղըզստանում:

Մետաքսի ճանապարհը մեծ նշանակություն ունեցող նախաձեռնություն էր մարդկային քաղաքակրթության պատմության մեջ: Որպես ամենաերկար և հնագույն Արևելքն ու Արևմուտքն իրար միացնող միջազգային երթուղի՝ այն կառուցվել է գրեթե բոլոր ազգությունների ու էթնիկ խմբերի համատեղ ուժերով, այլ կերպ այն կոչվում է Բարեկամության ճանապարհ: Այն վկան է Ք.ա. 2-րդ դարից մինչև Ք.հ.16-րդ դարը Եվրասիա մայրցամաքում տեղի ունեցած տնտեսական, մշակութային ու հասարակական փոփոխությունների: Առևտրական երկար ճանապարհ լինելու շնորհիվ այն խթանել է բազմաթիվ մեծ ու փոքր քաղաքների զարգացումը և գետերի պահպանման համակարգի միջոցով աջակցել է առևտրին: Բացի դրանից, ուղղակիորեն կապ է ունեցել պատմական մեծ իրադարձությունների հետ, ինչպես, օրինակ, Հան դինաստիայի կայսերական պատվիրակ Ճան Ցիանի այցելությունները արևելյան շրջաններ, միևնույն ժամանակ մեծ ազդեցություն է ունեցել բուդդայականության, մանիքեության ու զրադաշտության տարածման գործում, ներգործել հին Չինաստանում ու Կենտրոնական Ասիայում քաղաքների հատակագծման ու կառուցապատման հարցերի վրա:

Հան-Վեյի Լոյան քաղաքը եղել է արևելյան Հան դինաստիայի, Վեյ դինաստիայի, արևմտյան Ջին դինաստիայի՝ ընդհուպ մինչև հյուսիսային Վեյ դինաստիայի մայրաքաղաքը: Լոյան քաղաքը, որպես քաղաքակրթության ու մշակույթի խորհրդանիշ, Մետաքսի ճանապարհի սկզբնակետն էր այդ ժամանակաշրջանի արևելյան երկրներում և վկայում է մի անզուգական քաղաքային մշակույթի մասին՝ ստեղծված հյուսիսային Վեյ դինաս-

տիայի քոչվորական ցեղերի ու տեղի գյուղացիական խմբավորումների կողմից, միաժամանակ վկայում է քաղաքների ձևավորման ընթացիկ փոփոխությունների և Չինաստանում բուդդայականության տեղայնացման ու տարածման մասին:

Հան դինաստիայի Լոյան քաղաքում գտնվող Ուեյան պալատը՝ արևմտյան Հան դինաստիայի վաղ կայսերական պալատը, Մետաքսի ճանապարհի արևելյան մասի սկզբնակետն էր: Այն ներկայացնում է արևմտյան Հան դինաստիայի կառավարման օրոք Մետաքսի ճանապարհի վաղ ժամանակաշրջանի մշակութային զարգացման առանձնահատկություններն ու քաղաքակրթական մակարդակը կայսրության մայրաքաղաքում: Վայրի սագ մեծ ու փոքր պագոդաներն ու Սինծիաո տաճար-պագոդան, որոնք կառուցվել են ի հիշատակ բուդդայական վանական Շյուենծանի, դարձել են հոգևոր աշխարհի կարևոր ժառանգություն: Դեմ դիմաց կանգնած Վայրի սագի մեծ ու փոքր պագոդաները խորհրդանշում են Թան դինաստիայի հնագույն մայրաքաղաք Չյանղանը: Վայրի սագի փոքր պագոդայից կախված է 1000 կգ կշիռ ունեցող երկաթածույլ զանգ, որը պատրաստվել է Չին դինաստիայի կայսր Մինչանի կառավարման 3-րդ տարում: Հսկայական զանգի ձայնն այնքան պարզ ու բարձր է, որ համարվում է Գունճոնի(Չյանղան) ութ հրաշալիքներից մեկը. այն հայտնի է որպես «Վայրի սագ պագոդայի առավոտյան զանգ»:

Գանսու նահանգի Յումեն կիրճը հյուսիսային մասի միակ անցակետն էր: Այստեղ կառուցված քառակուսի պատը, որին մինչ այսօր կարծես ձեռք չեն տվել, արևելքից արևմուտք ձգվում է 24մ երկարությամբ, հյուսիսից հարավ՝ 26,4մ, իսկ բարձրությունը կազմում է 9,7մ: 633 մ^2 մակերես ունեցող պատը պատրաստված է դեղին կավածեփով: Արևմտյան ու հյուսիսային մասերում կան 2 դարպաս: Հյուսիսային դարպասներից բացվող լանջի՝ արևելքից արևմուտք ձգվող լայն նրբանցքը ծառայում է որպես երթևեկության ու փոստային առաքման համար նախատեսված ճանապարհ Չինաստանի ու արևմուտքի երկրների միջև: Թան դինաստիայում նշանավոր պոետ Ուան Ճիխուանի հայտնի տողերում կարդում ենք՝ «Գարունը երբեք չի շրջանցում Յումենի կիրճը»:

Գաուչան հնագույն քաղաքը հիմնադրվել է Ք.ա. առաջին դարում: Որպես անփոխարինելի անցում Մետաքսի ճանապարհի վրա, այն կառուցվել է Հան դինաստիայի Չըշիցիեն թագավորության ռազմական ուժերով: Քաղաքի ավերակները գտնվում են անկանոն քառակուսու ձև ունեցող հարթության վրա, և ըստ նախագծի՝ այն բաժանված էր 3 մասի՝ Արտաքին քաղաքի, Ներքին քաղաքի ու պալատի: Արտաքին քաղաքը պահպանվել է գրեթե անթերի կերպով՝ իր ամբողջական կառույցներով ու շքեղությամբ:

ՄԱՍ 2. ՀՐԱՇԱԼԻ ԲՆԱԿԱՆ ՏԵՍԱՐԱՆՆԵՐ

Համաշխարհային բնական ու կրկնակ՝ և՛ մշակութային, և՛ բնական ժառանգությունը Չինաստանում

Գլուխ 1. Համաշխարհային բնական ժառանգությունը

1. Ուլինյուան բնական արգելոցը

Յունան նահանգի հյուսիս-արևմուտքում գտնվող ճանգծիաժիե քաղաքի Ուլինյուան բնական արգելոցն ընդգրկվել է ՅՈՒՆԵՍԿՕ-ի Համաշխարհային ժառանգության ցանկում 1992 թվականին:

Ձգվելով Ուլին լեռնաշղթայով և զիգզագաձև անցնելով Յուան ու Լի գետերի կողքով, Ուլինյուան գիտապատմական վայրը զբաղեցնում է 23.490 կմ^2: Նրա կենտրոնական տեսարժան վայրը գրավում է 369 կմ^2 տարածք, որն ընդգրկում է 13,34 կմ^2 մակերեսով ճանգծիաժիե քաղաքը, Սուոսիյու հովիտն ու Երկնային որդի լեռը: Այս կենդանաբանական, բուսաբանական, նաև երկրաբանական այգին առանձնանում է իր արտասովոր լեռնագագաթներով, առեղծվածային քարայրներով, վճիտ վտակներով ու խիտ անտառներով: Այս հրաշավայրը առաջին ազգային անտառն է Չինաստանում արտասովոր լեռնածերպերով, արտառոց քարաժայռերով,

աղբյուրներով ու սահանքներով, դարավոր ու ընտիր ծառերով, հազվագյուտ թռչուններով ու գազաններով: Ահա այն հինգ բնատեսարանները, որոնցով պարծենում է Ուլինյուան արգելոցը. 1. Դեղնաքար լեռնային ցանկապատը, որը ներառում է Երկնային գիրք, Ծովային անդորր, Գրական աստղ ժայռերը և այլն, 2. ժայռերով ու սահանքներով թափվող «ոսկեզօծ վտակները» (լավագույն տեսարանն այս տարածքի), 3. զառիթափ գահավեժի «երիկամաձև ցանկապատնեշի գեղատեսիլ վայրը», որն ուղղակի ձգում է արկածներ որոնող մարդկանց ու հետազոտողներին, 4. հին ծառերով ու արտասովոր լեռներով շրջապատված «ավազախառը հովիտը», որը հմայում է իր վայրի գեղեցկությամբ, 5. «քառալար ջնարի տեսքով վտակների» շքեղությունը կատարյալ են դարձնում հոծ անտառները, ուղղաձիգ քարափներն ու ինքնատիպ լեռները: Հիմնական դիտարժան տեսարաններից են՝ Իննհարկ աշտարակը, Ամուսնուն հսկող լեռնագագաթը, Երկնային աղոթքի դասյան տաճարը: Խորհրդավոր ու հմայիչ Ամուսնուն հսկող լեռան երեք գագաթներն ունեն այնպիսի տեսք՝ կարծես աղջիկը դառնում է օրիորդ, օրիորդը՝ տիկին, տիկինը՝ ծեր կին:

Սըվի վարչատարածքային քաղաքի արևմտյան մասում գտնվող Սյուոսի հովիտը զբաղեցնում է 200կմ^2, որի տեսարժան վայրը թելի նման ձգվում է արևմուտքից արևելք: Հետաքրքիր աշխարհագրական դիրքով առանձնացող տարածքը հայտնի է որպես «բնական ծաղկամանում աճեցված լանդշաֆտ»: Հողի ցածրադիր շերտը կազմված է դեղնավուն կանաչ ու մուգ կանաչ թերթաքարից, իսկ 600մ հաստությամբ վերին շերտը՝ մանուշակագույն ու մոխրագույն կվարցից՝ շերտավորված որոշ թերթաքարերի հետ: Երկրաբանական ուժի պատճառով հողում առաջացել են բազմաթիվ ուղղահայաց ծերպեր՝ ստեղծելով կիրճային տարածք: Այս գողտրիկ կիրճում գտնվող Դեղին վիշապի ու Չորս դասի ապառաժոտ ու ջրային քարանձավները խիստ տպավորիչ ու ազդեցիկ են:

93կմ^2 ընդհանուր տարածքով Երկնային որդի լեռը գտնվում է Սանգճի վարչատարածքային քաղաքում: Նրա Կունլուն լեռնագագաթը ծովի մակարդակից բարձր է 1.262մ: Լեռան շուրջը կենտրոնացված են հետաքրքիր վայրեր՝ ջրվեժներ, անցուղիներ, կրաքարային քարանձավներ, քարե անտառներ և այլն: Ծովի մակերևույթից 900մ բարձրության վրա գտնվող ժայռաճեղքերից ջրեր են ծորում՝ թափվելով կարմրավուն ժայռերն ի վար՝ փոքրիկ առուների կամ փրփրաբաշ ջրվեժների նման, շողշողալով ոսկեզօծ ճառագայթների ներքո: Զբոսաշրջիկների այցելած վեց ամենաշատ վայրերից են՝ Շի ընտանիքի տունը՝ գրավիչ քիվերով, Թեյի սկուտեղ պագոդան, Հին ագարակ տունը, Փյունիկի ժամանակավոր կացարանբլուրը, Դեղին վիշապի աղբյուրն ու Կունլուն լեռնագագաթը: Թանձր

մշուշը, պայծառ արևը, լուսնկա գիշերն ու ձմեռնաբույր ձյունը չորս ուշագրավ բնական տեսարաններն են այս տարածքում: Մյուս ուշարժան տեսարաններից են փարթամ մերձարևադարձային մշտադալար անտառները, երփներանգ ծաղիկները, հազվագյուտ թռչուններն ու կենդանիները:

2. Ցզյուչժաիգոու ազգային պարկը

1992թ. ՅՈՒՆԵՍԿՕ-ի կողմից Համաշխարհային բնական ժառանգություն հաստատված Ցզյուչժաիգոու (Ինը գյուղերի կիրճ) ազգային պարկը փռված է Սիչուան նահանգի ցյան-տիբեթյան ազգությունների ինքնավար մարզի Նանփին վարչատարածքում:



Սիչուանի գավառական մայրաքաղաք Չենգդուից ավելի քան 400կմ հյուսիս գտնվող զբոսայգին ձգվում է 80կմ և զբաղեցնում 60.000 հեկտարից ավելի տարածք: Վեց հիմնական տեսարժան վայրերն են՝ Չանխայ ծովը, Ծիեն Յեն սուր ժայռը, Նուո Ռի Լանգ սահանքը, Շու ճըն, ճա Ռու, Խեյ Խայ (Սև ծով) լճերը: Կանաչավուն լճերով, շերտ առ շերտ թափվող ջրվեժներով, բազմերանգ անտառներով, ձյունածածկ կատարներով հրաշագեղ տարածքը համաշխարհային համբավ ունի:

Թովիչ, պարզունակ ու բնական Ցզյուչժաիգոու ազգային զբոսայգին հայտնի է նաև «Հեքիաթային երկիր» անվանումով: Ծովի մակարդակից 1980–3100մ բարձրության վրա գտնվող լեռներն ունեն արտասովոր տեսք և ընդգրկում են ինչպես փարթամ, փշատերև անտառներ, այնպես էլ լայնատերև անտառներ: Ցզյուչժաիգոուն տարվա չորս եղանակներին փոփոխական ու արտակարգ տեսք է ունենում. այն ուղղակի զմայլելի է աշնանը, երբ գույնզգույն անտառներն օրորվում են հանց լճերի գունեղ ալիքներ, մինչ լճերը, գետերն ու վտակները պար են բռնում նազանքով:

Ցզյուչժաիգոու ազգային զբոսայգու կենտրոնական բնապատկերը ամփոփվում է Շուճեն լճերի գեղեցիկ տեսարանի մեջ: 3 կմ^2 տարածքում գտնվող 40 լճերը, որոնք ձգվում են ավելի քան 10 լի հեռավորության վրա, ունեն մաքուր ու վճիտ ջրեր և գույների տարբեր երանգներ՝ կախված ափերում աճող բույսերից ու ջրերում գտնվող տարբեր նստվածքներից: Եղեգան ծովը ջրային թռչունների համար կատարյալ բնակատեղի է: Շուճեն ջրվեժը շերտ-շերտ թափվում է անտառի ուղիղ մեջտեղը: «Կայծկլտացող ծով» լիճն այնքա՜ն հմայիչ է ծփում, իսկ Քնած վիշապի լիճը նման է սուզվող վիշապի: Ռնգեղջյուր լիճը բավականին խորն է ու մուգ կապույտ և հարմար է նավարկության, լաստանավով զբոսնելու, լողալու համար:

Նուո Ռի Լանգ սահանքի բնական տեսարանը զբաղեցնում է մոտավորապես 3 կմ^2 տարածք: 320մ լայնությամբ ու 20մ բարձրությամբ Նուո Ռի Լանգ ջրվեժը Չինաստանի ամենալայն լեռնային ջրվեժն ու Ցզյուչժաիգոու ազգային պարկի խորհրդանիշն է: Հայելու պես հարթ ու հանգիստ «Հայելի ծով» լիճն այնպիսի տպավորություն է թողնում՝ կարծես ափին անտառներ կան: 310մ լայնությամբ ապշեցուցիչ Ջրվեժի ջրերը հեղեղում են մարգարտահատ ծանծաղուտը: Թավ անտառում գտնվող Հնգագույն լճակը նման է պոչը բացած սիրամարգի:

Կարապի լիճը, Սուր ժայռը, Ջյան բլուրն ու Նախնադարյան անտառը գտնվում են 1 կմ^2 տարածք ընդգրկող Ծիեն Յեն տեսարժան վայրում: Հաջողակ այցելուները այստեղ կարող են նաև պանդաներ տեսնել: Ցզյուչժաիգոուի ամենաերկար ու ամենաբարձր հովիտը 17,8 կմ երկարությամբ Ցիուան է, որից հետո հիասքանչ տեսարանը շարունակում է Ցզյուչժաիգոուի ամենաերկար՝ 8 կմ երկարությամբ Չան խայ (Երկար ծով) լիճը: Ձմռանն այս լիճը պատվում է 60 սմ հաստությամբ սառույցով:

3. Հուանլուն բնական հանգստավայրը

Սիչուան նահանգի Սոնգփայն վարչատարածքում ընկած Հուանլուն (Դեղին վիշապ) գեղատարած պատմական վայրը ՅՈՒՆԵՍԿՕ-ի Համաշխարհային բնական ժառանգության ցանկի մեջ է մտել 1992թ.:

Սիչուանի հյուսիս-արևմտյան բարձրավանդակում գտնվող Հուանլուն, ընդգրկելով 700 կմ^2 տարածք, բաղկացած է երկու՝ Հուանլուն ու Մոունիգո բնապատկերներից: Հուանլուն վայրը առանձնանում է կարծրացած հողի մակերևույթով: Հուանլունի բնապատկերն իր գունավոր կարծրացած ավազաններով ու ծանծաղուտներով, որոնց ավելի ցայտուն են դարձնում շրջապատող լեռները, հովիտները, ձյունածածկ լեռնագագաթ-

ները, ջրվեժները, լճերն ու անտառները, կարծես մի անիրական գեղանկար լինեն, որն աչք է զարնում իր արտասովոր շքեղությամբ, գահավեժներով ու վայրի գեղեցկությամբ:

Մին լեռնաշղթայի Ձյունե բարձրակատար լեռան ստորոտում ընկած Դեղին վիշապի ընդարձակ հովիտն ունի 3,6կմ երկարություն ու 30-170մ լայնություն: Ֆու Յուան կամրջից մինչև Ձեյդ Բաս լճակը (ծովի մակարդակից 3.160-3.574մ բարձր) ընկած տարածությունը, որի մակերևույթն ունի հաստ, դեղնավուն կարծրացած շերտ, նման է գալարվող, կարծես հսկա անտառի վրայով թռչող վիշապի,- այս պատկերից էլ առաջացել է նրա անվանումը՝ Դեղին վիշապի հովիտ:

Ինչպես նշեցինք, հովիտն ունի զարմանահրաշ կարծրացած տեսարաններ՝ լճակներ, ծանծաղուտներ, սահանքներ, քարայրներ ու բլուրներ, որոնցից ամենագեղեցիկը տարբեր չափերի ու ձևերի բազմագույն, կարծրացած լճակներն են: Ավելի քան 3400 արտասովոր ու շողշողուն, երփներանգ, կարծրացած լճակները դասակարգված են ութ խմբերի մեջ:

4. Երեք զուգահեռ գետերի գեղատեսիլ տարածքները

Այս տարածքներն ընկած են Յուննան նահանգում, Հընգդուան լեռների հյուսիս-արևելքում գտնվող հովտում: Ծիշա, Լյանցան ու Նյուծյան գետերը, զուգահեռ կազմելով, դառնում են աշխարհի եզակի բնական տեսարաններից մեկը: Հոսելով Դանդանլիքա, Գաոլիգոն, Նուշան ու Յունլինգ սարերով, անցնելով Լիցզյան քաղաքի, Դիցին և Նյուծյան ինքնավար մարզերի միջով, այդ ջրային հոսքերը գրավում են այսպիսի աշխարհագրական դիրք՝ «գետերը զուգահեռ են և ոչ զուգամիտված»: Լինելով լեռնային լանդշաֆտի էվոլյուցիայի վառ օրինակներ, դրանց միջոցով փաստացի տվյալներ են ձեռք բերվել կենսաբանության, մասնավորապես գենետիկայի ոլորտում: Երեք զուգահեռ գետերի տարածքները բաժանված են վեց շրջանի՝ Կարմիր սար, Հազար լճի սար, Յունլինգ սար, Լաոծյուն

սար, Լայովո սար, Գաոկոնլի սար, Հապա և Մեյվի ձյունածածկ սարեր: Կարմիր սարը, որտեղով հոսում է Ծիշա գետը, աչքի է զարնում հարթ մակերեսով, անտիկ սառցադաշտային մնացորդներով՝ կարստով, բուսական աշխարհի բազմազան էկոլոգիական համակարգով, սարահարթերով ու լճերով, և իր բնական ռեսուրսներով կարեւոր դեր է խաղացել՝ երեք զուգահեռ գետերի գեղատեսիլ տարածքները Համաշխարհային բնական ժառանգության ցանկի մեջ գրավելու հարցում:

Նիրու գյուղում գտնվող Հարավային Նանպաո մարգագետնի ու Սակավածյուն սարի Յաքոու սարահարթի բնատեսարաններն ունեն այս տարածաշրջանի առավել բնորոշ հատկանիշները: Հազար լիճ սարն ընդգրկում է 100-ից ավելի մեծ ու փոքր սարահարթեր ու լճեր, որոնք իրենց բուսականության հետ մինչ օրս գոյություն ունեն իրենց նախածին տեսքով: Լյանցան գետի ու Լյանփին վարչատարածքով հոսող Լյանցան գետի Թոնդիեն վտակի միջև գտնվող Յունլինգ սարի տարածաշրջանում ապրում են կճատ քթով սև կապիկների չորս խմբեր: Դրանք ամենահարավային ցեղատեսակներն են, որոնց կարելի է հանդիպել միայն Չինաստանում: Այստեղ ապրում են աշխարհում գոյություն ունեցող կապիկների մեկ տասերորդը(1500–2000): Լառծյուն սարով հոսող Ծիշա գետից առաջացած լեռնային սառցե լճերի միջև ընկած է կրաքարի պարարտանյութ պարունակող Դանսիա հողատարածքը, որը հաճախակի է ներկայացվում որպես Ծիշա գետի շրջակայքի լավագույն բնապատկեր: Այստեղ լեռնավարդի թփուտները, լեռներն ու լճերը միասին կազմում են մի հրաշալի գեղանկարչական պատկեր: Գաոլիգոն սարը համարվում է «երկրի վրա կենսաբանական բազմազանության հետազոտման համար մեծ նշանակություն ունեցող վայր» և «կենսաբանական այլ տեսակների ստեղծման անհրաժեշտ աղբյուր» Չինաստանում: Այս տարածաշրջանը կարելի է դիտել որպես թանգարան, որը ներկայացնում է Նյուծյան գետին բնորոշ առանձնա-

հատկությունները: Նյուծյան գետի շրջակայքում փռված սարահարթի կարստային քարանձավների լավագույն օրինակ է Քարե լուսնի բնատեսարանը, որը տոպոլոգիական ուսումնասիրությունների համար նպաստավոր տարածք է՝ լինելով Նյուծյան գետի ու նրա թափառող վտակների թիվ 1 ջրավազանը: Երեք զուգահեռ գետերի տարածքների առաջատար շրջաններից մեկը՝ Մեյվի ձյունածածկ սարը, կճատ քթով սև կապիկների ծննդավայրն է: Հապա ձյունածածկ սարի շրջանում են գտնվում հարավային՝ ժամանակակից ծովային սառցադաշտերը Չինաստանում, իսկ նրա հորիզոնական լեռների կատարյալ ու յուրահատուկ բնական տեսարանը, որն ամբողջանում է սարահարթերի փշատերև անտառների պաշտպանիչ տարածքներով, իրոք, արժանի է լինել համաշխարհային բնական ժառանգություն:

5. Պանդաների բնակավայրերը Սիչուանում

Պանդաների բնակավայրերը, ավելի որոշակի՝ Ուոլոն ազգային արգելոցը, Չորս քույրերի սարերն ու Ծիածին լեռնաշղթան գտնվում են Սիչուան նահանգում: Պանդայի՝ աշխարհի ամենաընդարձակ ու ընդգրկուն բնակավայրերն ունեն բուսական մեծ բազմազանություն, և Բնության պահպանության միջազգային կազմակերպության կողմից այն համարվում է կենսաբանական բազմազանության ուսումնասիրման համար ընտրված 25 վայրերից մեկը: Աշխարհի վայրի պանդաների ավելի քան 30%-ը գտնվում են այստեղ: Այս թանգարան-տեղավայրում բնակվում են անհետացման եզրին գտնվող կենդանիների այնպիսի ցեղատեսակներ, ինչպիսիք են պանդաները, կճատ քթով կապիկները, այծքաղները: Այստեղ աճում են 10.000 տեսակից ավելի ցամաքային բույսեր:

6. Հարավային Չինաստանի կարստային գոյացությունները

Հարավային Չինաստանի կարստային գոյացությունները ներառում են սրածող, սյունաձև, պագոդաձև տեսակները, որոնք գտնվում են Յուննան նահանգի Շիլին ինքնավար մարզում, անտառային կարստի տեսակը, որը գտնվում է Գուիչոու նահանգի Լիբո վարչատարածքում, եռատարած կարստային գոյացությունները, բնական կամուրջներ, հովիտներ ու քարայրներ, որոնք գտնվում են Չոնգցին քաղաքի Ուոլոն ազգային արգելոցում: Տեղագրության համաձայն՝ կարստը ապառաժների քայքայումից առաջացած կրաքար ու դոլոմիտ նստվածքային ապարների լուծույթից ձևավորված գոյացություն է: Չինաստանում կարստային գոյացությունները աչքի են ընկնում իրենց բազմազանությամբ, յուրահատկությամբ, բեղուն կենսաբանությամբ ու էկոլոգիայով: Յուննան նահանգի Շիլին ինքնավար մարզի կարստային գոյացությունները ապշեցուցիչ, զավեշտական, ամուր, գեղեցիկ, մեկուսացված, առեղծվածային ու լայնածավալ են, այդ պատճառով այստեղ դրանք կոչվում են «կարստային երևույթների մարմնավորում»: Ունենալով եզակի բնապատկեր, կարստը, ըստ տեղագրության, հանդես է գալիս նաև որպես հատուկ բնական երևույթ: Նախաանտառը, ջրային անտառն ու «ձագար» անտառը Գուիչոու նահանգի Լիբո վարչատարածքի երեք ամենագեղեցիկ



կարստային բնատեսարաններն են: Նախաանտառային լանդշաֆտը ներառում է ձագարաձև, ճահճային, ջրային ու սառցադաշտային անտառներ: Ջրային անտառները հատկանշվում են հետևյալ տեսարանով՝ «ժայռերը, որոնց վրա աճում են ծառեր, ողողվում են ջրերով»: Չոնգցին քաղաքի Ուոլոն ազգային արգելավայրն առանձնանում է իր՝ Ֆուրո աշխարհի թիվ 1 կարստային քարանձավով, ամենամեծ բնական կամուրջներով ու Հոուփին լեռնագոգով: Ֆուրո քարանձավի ստալակտիտներն ուղղակի շլացուցիչ ու չնաշխարհիկ են:

Հավերժահարս սարի հարավում գտնվում են երեք աշխարհահռչակ բնական՝ Երկնային վիշապի, Փիրուզագույն վիշապի ու Սև վիշապի կամուրջները: Չոնգցինի քարանձավային ժայռերի վրա գտնվող լայնարձակ Հոուփին կիրճը ծածկված է մացառուտներով ու բամբուկյա անտառներով: Ընդհանուր առմամբ հինգ տակառաձև հովիտներից յուրաքանչյուրն ունի 300մ տրամագիծ ու 300մ խորություն: Արտառոց զգացողություն ներշնչող այդ կիրճերը բարձր են գնահատվել հետազոտությունների ընթացքում:

7. Սանցին լեռը

Խուայյու լեռնաշղթայի ամենաբարձր գագաթ ունեցող Սանցին լեռը գտնվում է Ցիանգսի նահանգի Յուշան վարչատարածքի Շանգրաո քաղաքում, Դըսին քաղաքի հարևանությամբ: Սանցինշան լեռան երեք ամենաբարձր՝ Յուծին, Յուխուա ու Յուշյու կատարները խորհրդանշում են երեք դասական սուրբերը՝ Յուցինը, Շանցինը, Թայցինը: Սանցինշանը

ոչ միայն դասական սրբավայր է՝ հռչակված որպես «Աստծո կողմից օրհնված դրախտավայր» և թիվ 1 լեռը հարավարևմտյան Չինաստանում, որը խոյանում է ամպերն ի վեր, այլև այն մանրամասնորեն ներկայացնում է առկա գրանիտի, բուսականության ու տեղագրության էվոլյուցիան և ինքնաբերաբար ստեղծում գրանիտի ու տեղագրության իրական մի թանգարան:

8. Դանսիա պատմական տարածքը

Դանսիա պատմական տարածքն ընդգրկում է Հունան նահանգի Լանգշան լեռը, Գուանդուն նահանգի Դանսիա հողատարածքը, Ֆուցզյան նահանգի Թայնին վարչատարածքը, Գույչժոու նահանգի Չիշուե քաղաքը, Օիանգսի նահանգի Լոնգհու սարը, Չժեցզյան նահանգի Օյանլյան լեռը, և հայտնի է իր ժայռերով ու հովիտներով: Դանսիա տարածքը գրավիչ են դարձրել բազմաթիվ առանձին բնապատկերներ՝ հետաքրքիր լեռնակատարները, կարմիր ժայռերը, ապառաժե միջանցքներն ու քարանձավները, հսկա ու կարմիր քարերը, բնական կամուրջները, քարե պատերն ու սյուները, լեռների սուր ծերպերը, քարե ամրոցները: Չիշուե քաղաքի Դանսիա տարածքի բնական տեսարանն ամբողջացնում են տարբեր ձևերի ու ծավալի

ջրվեժները, կարմիր լեռները, վճիտ ջրերն ու կանաչ անտառները: Այս պատմական վայրում պահպանվում են ավազաքարե տարածություններ ու հովիտներ, կուսական անտառներ, զարգանում ու պահպանվում են բազմապիսի բուսատեսակներ ու գետային էկոլոգիան:

Հունան նահանգի Սիննին վարչատարածքում գտնվող Լանգշան սարը լավագույնս ներկայացնում է Դանսիա տարածքն իր հինգ դիտարժան վայրերով՝ Զըսիա քարանձավ, Ֆույի գետ, Լյուտոու լեռնագագաթ, Նիուպի և Պածիաո գյուղեր, որոնց սարերը, ջրերը, անտառներն ու անձավները, ներդաշնակորեն լրացնելով իրար, ստեղծում են մի աննկարագրելի բնապատկեր:

Ֆուծիեն նահանգի Թայնին վարչատարածքում գտնվող «Ոսկե մեծ լիճ» երկրաբանական այգին իր մեջ նույնպես պարփակում է Դանսիա տարածքը. հյուսիսային մասում, սկիզբ առնելով Վիշապի լճի Ճընտիանչըն ժայռից՝ այն ձգվում է մինչև հարավում գտնվող Մաոըր լեռն ու Լոնգան գյուղը, ինչպես նաև ընդգրկում է չորս կարմիր ավազաններ՝ Շանցին վտակը, Ոսկե լիճը, Վիշապի և Ութ անմահների ժայռերը: Այս տարածքը հայտնի է որպես Դանսիայի քարանձավների թանգարան՝ իր մեծաքանակ ու ընդարձակ քարայրներով և յուրահատուկ ուրվագծերով:

Չիշուեի Դանսիա տարածքը գտնվում է Գույչժոու նահանգի Չիշուե քաղաքում: «Չիշուե ջրվեժի» շրջանը հրաշագեղ են դարձնում բազմաթիվ բնական ու ձեռակերտ տեսարաններ՝ 30-ակի ջրվեժը, որը լինելով Յանցզի գետի ավազանը, հանդիսանում է Դանսիա տարածքի ամենամեծ ջրվեժը՝ 76 մետր բարձրությամբ ու 80 մետր լայնությամբ, «Միջին քարանձավի» ջրվեժը, «Հաղթանակած մարտիկի» հինավուրց արահետը, քարեղեն ուշագրավ բնապատկերները, «Բուրումնավետ» լիճը, հազարավոր քառակուսի մետրեր ձգվող թեյի ծաղիկները, Ստալագմիթի ծերպը, Անմահ Գանոդերման, Հուիշուե տաճարի քարե քանդակները, Կարմիր բանակի կարգախոսները և այլն:

Լոնգհու սարը, որն ունի Դանսիա տարածքին յուրահատուկ տեղագրություն, գտնվում է Ցիանգսի նահանգի Յինթան քաղաքում: Լեռն անվանվել է ի պատիվ Զընգյի դաոսական շարժման հիմնադիր Ժանգ Դաոլինի ալքիմիայի, ըստ որի՝ Լոնգհուն (բառացիորեն՝ վիշապ ու վագր) հայտնվում է սոսկ այն ժամանակ, երբ ալքիմիան հաջողությամբ է կիրառվում: Լոնգհու սարը կարծես մարմին ու հոգի է ստանում իր կարմիր լեռներով ու կապույտ ջրերով և հայտնի է որպես Դաոյի դրախտային հովիտ: Այս սարի ուղղաձիգ ժայռերում տեղակայված են յու անտիկ ցեղին պատկանող գերեզմաններ, իսկ թե ովքեր են գերեզմանոցներում և ինչպես են հայտնվել այնտեղ՝ մինչ օրս անվերծանելի ու անբացատրելի է:

Չժեցզյան նահանգի Ծիանգշան վարչատարածքի Ծյանլյան գյուղում գտնվող Ծյանլյան լեռան տարածքում դիտարժան են այնպիսի բնական տեսարաններ, ինչպիսիք են Սանփան ժայռը, Սիպա արահետը, Թաշան լեռը, Նյուպի գագաթը, Սյունու լիճն ու Սինծյու տաճարը: Սանփանի Լանգ, Յա, Լին երեք ժայռածերպերը համարվում են Դանսիա տարածքի թիվ 1 լեռնակատարները, և այդ անձեռակերտ հսկա ծերպերը, որոնք ներկայանում են որպես հարավ-արևելյան Չինաստանի գեղեցկուհիներ, աշխարհահռչակ են իրենց Յիսիթիեն չնաշխարհիկ բնատեսարանով:

9. Չենդզյան բնական արգելոցը

Չենդզյան արգելոցը գտնվում է Յուննան նահանգում և համարվում է վաղ քեյմբրիյան (պալեոզոյան դարաշրջանի առաջին երկրաբանական) ժամանակաշրջանի ծովային պալեոնտոլոգիական լավագույն հնագիտական արգելոցը: Այստեղ արձանագրված է բարդ անդրջրյա կյանքի էկոլո-

գիան. գրանցվել են 160 կենսաբանական տաքսոնոմիական կատեգորիաններ, բազում առեղծվածային ու այլ՝ 196 ցեղատեսակներ: Այս արգելոցը համարվում է որպես պալեոնտոլոգիայի կարևոր նախամատույց:

10. Տյանշան լեռնաշղթան



Սինծյան ինքնավար մարզում գտնվող Տյանշան լեռնաշղթան սկիզբ է առնում Սինծյանի կենտրոնական մասից և ձգվում մինչև Ղազախստան: Նրա բարձր լեռնագագաթների մեծամասնությունը գտնվում է Չինաստանում: Այստեղ խոյացող Հաղթանակի պիկ ամենաբարձր գագաթն ունի 7.439մ բարձրություն: Տյանշան լեռնաշղթայից սկիզբ են առնում Սինծյանի երեք՝ Սիրդարյա, Չու և Իլի հիմնական գետերը: Բոգըդա գագաթի ձյունը չի հալչում ողջ տարվա ընթացքում: Ձյունածածկ կատարներն ու կանաչով զուգված շրջակայքն արտացոլվելով վճիտ երկնային լճի մեջ՝ ստեղծում են մի անզուգական պատկեր, որն այդ վայրը դարձնում է գրավիչ ոչ միայն տեղի բնակիչների, այլև բոլոր զբոսաշրջիկների համար:

Գլուխ 2. Բնական և մշակութային ժառանգությունը

1. Տաիշան լեռը

Տաիշան լեռն իր գեղատեսիլ շրջակայքով պաշտոնապես համարվել է ՅՈՒՆԵՍԿՕ-ի Համաշխարհային բնական և մշակութային ժառանգություն 1987թ.:

Շանդուն նահանգում գտնվող, Տայ կամ Տայծոն պատմական անվանումով Տաիշան լեռը ձգվում է Ցզինան քաղաքով, Տայան վարչատարածքով, Վիչը ու Չանգցին շրջաններով և ունի 80 կմ տրամագծով 426 կմ^2 տարածք: Նրա գլխավոր՝ Նեֆրիտե կայսրության կատարը, որը ծովի մակարդակից բարձր է 1.545մ, գտնվում է Տաիշան քաղաքում: Տայ լեռը մեծաշուք ու նրբագեղ է իր 72 վեհ ծերպերով, տպավորիչ ջրվեժներով ու աղբյուրներով, դարավոր սոճիներով ու կնձիներով, ապշեցուցիչ ժայռերով ու լեռնագագերով: Տարածքում առանձնացվում է հինգ վայր, որտեղ զբոսաշրջիկներն ավելի հաճախակի են այցելում: Կան լեռնագագաթ տանող երկու ուղիներ՝ արևելյան ու արևմտյան, որոնք հատվում են գագաթնակետում՝ Կենտրոնական երկնային բակամուտքում: Ուղիների ընդհանուր երկարությունը կազմում է 9 կմ կամ 6293 քայլ (առավելագույնը՝ 7000 քայլ): Տարածքի տեսարժան վայրերից են Վիշապի ջրամբարը, Կենտրոնական երկնային բակամուտքը, Հինգ պաշտոնյաների սոճիները, Զույգ սոճիների բլուրը, Տասնութ ոլորանները, Հարավային երկնային բակամուտքը, Կանաչ ամպի տաճարը, Ժամապահ Լյուի դիտակետը, Արեգակը դիտելու գագաթը, Լուսինը դիտելու գագաթը և այլն: Այցելուները լեռնածերպը հասնելու ճանապարհին կարող են վայելել ևս չորս հրաշալի տեսարան՝ Արևածագը, Դեղին գետի ոսկե շղթան, Արևի լուսարձակումը երեկոյան ու Նեֆրիտի ամպե սկուտեղը:



Տաիշան լեռան ամենավտանգավոր վայրը Տասնութ ոլորաններն են: Զույգ սոճիների բլրի ստորոտի ու գագաթնակետին մոտ գտնվող Հարավային երկնային բակամուտքի միջև գտնվող հատվածը կոչվում է Երկինք տանող սանդուղք կամ՝ Տասնութ ոլորաններ: Այնտեղ հասնելու համար պետք է կտրել 1 կմ տարածություն կամ՝ 594 աստիճան (400մ) վեր բարձրանալ: Այդ բոլոր աստիճանները պատրաստված են Տաիշան լեռան գաղձաքարի հաստ կտորներով: Այժմ Կենտրոնական երկնային բակամուտքից գագաթ կարելի է հասնել ճոպանուղիով:

Տաիշան լեռը ներկայանում է ոչ միայն որպես լեռնային զբոսայգի, այլև որպես բնական՝ պատմական ու արվեստի թանգարան: Հենց միայն լեռնային ուղու վրա կարելի է տեսնել 1800 քարե քանդակ, որոնցից առավել հայտնիներն են՝ անգին Ցին քարե քանդակը, Ծիշի հովտում գտնվող գեղեցիկ, մեծ ձեռագիր տառերով փորագրված առաջին թանկարժեք սուտրան, հավերժ հանելուկ մնացած դատարկ հուշատախտակը, Թան դինաստիային պատկանող՝ մի բլրի վրա ոսկետառ մակագրված Տաիշան լեռան հուշատախտակը և ուրիշներ:

Տաիշան լեռան վրա գտնվող Տայ տաճարի Երկնային օրհնություն սրահը դասվում է Չինաստանի երեք ամենամեծ պալատական սրահների դասին՝ Պեկինի Գերագույն ներդաշնակության սրահի եւ Ցձույֆու վարչատարածքային քաղաքի Տաչընն սրահի կողքին: Երկնային օրհնություն սրահում կան բազմաթիվ, աստվածային թեմայով, նրբաճաշակ ու հոյակապ զարդաքանդակներ, որոնք հավանաբար նկարվել են Սուն դինաստիայի ժամանակաշրջանում՝ նկարագրելով, թե ինչպես էին ֆեոդալական կայսրերը որսորդություն անում և աղոթում Աստծո առաջ: Լին Յան տաճարի Հազար-Բուդդա սրահում կան քառասուն Անհատների արձաններ՝ քանդակված Սուն դինաստիայի արհեստավարժ վարպետների ձեռքով: Այս բոլորը ցույց են տալիս հնագույն ժամանակաշրջանում ապրող չինացիների՝ փորագրության, գեղագրության ու քանդակագործության կարկառուն արվեստին տիրապետելու հմտությունները:

2. Հուանշան լեռ-արգելոցը

Հուանշան ու Հուիճոու վարչատարածքային քաղաքների, Անհոյ գավառի Շը, Ի և Սյունին գավառների մոտ գտնվող Հուան քաղաքից սկիզբ առնելով և ձգվելով 40 կմ՝ հյուսիսից հարավ, 30 կմ՝ արևելքից արևմուտք, Հուանշան լեռը գրավում է 1200 կմ^2, իսկ բնական արգելոցը՝ 154 կմ^2 տարածք: «Երկնային պատկեր» անունով Հուանշան բնական լեռ-արգելոցը համարվում է բանալի-արգելոց: Ավելի քան 1000մ բարձրություն ունեցող

36 մեծ ու 36 փոքր լեռնակատարներից երեքը համարվում են գլխավոր գագաթներ, որոնք գտնվում են ծովի մակարդակից 1800մ բարձրության վրա. դրանք են՝ Լոտոսի, Երկնային կապիտալի, Պայծառափայլ լեռնագագաթները:

Հուանշան լեռ-արգելոցը աշխարհահռչակ է իր չորս «հրաշքներով»՝ արտասովոր սոճու ծառերով, զվարճալի ժայռերով, ծով ամպերով ու տաք աղբյուրներով: Տարածված լինելով ամբողջ լեռնագագաթներով ու լեռնագոգերով մեկ՝ Հուանշան լեռան սոճիներն ոչ մի բուսաբանական տեսակի չեն պատկանում: Սոճիների 31 տեսակ շատ հայտնի են, որոնցից են Ողջույնի, Ճանապարհելու և Քնած վիշապի տեսակները: Հուանշան լեռան վրա գրեթե ամենուր կարելի է տեսնել զվարճալի ժայռաբլուրներ՝ քարեղեն անտառների, բամբուկե պուրակների կամ յուրահատուկ՝ խճճված, արտասովոր ձևերով, որոնցից ամենահայտնիներն են՝ «Երկնային դարպասի ոսկե աքաղաղը», «Թիենտու գագաթի սկյուռը», «Կապիկի հայացքը ծովին»-ը: Բարձրաբերձ ծերպերի, խոր կիրճերի, խիտ անտառների ու առատ անձրևների պատճառով, Հուանշան լեռանը նայելիս, ասես՝ ամպերի հիանալի ծով է ծփում երկնքում, իսկ երբ կիտվում են մռայլ ու բիրտ ամպերը, երկնքում ձևավորվում են հետաքրքիր պատկերներ: Հուանշան լեռան տաք աղբյուրների մաքուր եւ խմելու ջրերում կարելի է նաև լողալ:

Լեռ-արգելոցը կենդանաբանական ու կենսաբանական այգի է 56% անտառային ու 82,6% բուսական ծածկույթներով, որտեղ կան 1452 բուսական ու 552 կենդանական տեսակներ. դրանցից շատերը հազվադեպ հանդիպող տեսակներ են:

Տարածքը հարուստ է նաև պատմական ու մշակութային մասունքներով: Ավելի քան 200 պատմական հուշատեղիներից բաղկացած համալիրը ներառում է տաճարներ, տաղավարներ, սրահներ, գալարուն արահետներ, հինավուրց կամուրջներ, ժայռաքանդակներ, որոնք յուրահատուկ

հմայք են հաղորդում լանդշաֆտին: Հուանշան լեռան ստորոտում գտնվող Շի և Թուոնսի վարչաշրջաններում ևս կան բազմաթիվ պատմական հուշավայրեր՝ կառուցված Մին դինաստիայի կառավարման ժամանակաշրջանում, Անհոյ՝ դասական ոճի ճարտարապետությամբ:

3. Էմեիշան լեռը

Էմեիշան լեռն ու Լեշանի Բուդդայի հսկայական արձանը միասին գրանցվել են ՅՈՒՆԵՍԿՕ-ի Համաշխարհային բնական և մշակութային ժառանգության ցանկի մեջ 1996թ.:

Սիչուան նահանգի Էմեիշան քաղաքից 7 կմ դեպի հարավ-արևմուտք գտնվող բուդդայական ամենահայտնի չորս լեռներից մեկը՝ 200 կմ երկարությամբ տարածք ընդգրկող Էմեիշան լեռն ունի չորս բարձր կատար, ըստ այդմ՝ լեռը ստացել է Առաջին, Երկրորդ, Երրորդ և Չորրորդ Էմեիշան սարեր անվանումները: Ամենաբարձր գագաթը՝ Տաս-Հազար-Բուդդայի-Կատարը, ծովի մակարդակից բարձր է 3099մ: Այդ վիթխարի ու վեհաշուք, կանաչապատ ու ապառաժոտ լեռը անտիկ ժամանակներում կոչվում էր «աշխարհահռչակ պերճաշուք Էմեիշան»: Արևելյան Հան դինաստիայի կառավարման ժամանակ արդեն մի քանի տաճարներ կային Էմեիշան լեռան վրա, Չին դինաստիայի օրոք լեռն արդեն բուդդայականության հենակայանն էր. Չին, Թան, Մին և Ցին դինաստիաների ժամանակաշրջաններում բազմաթիվ բուդդայական տաճարներ էին կառուցվել այստեղ: Հատկապես Մին և Ցին դինաստիաների կառավարման ժամանակ կառուցվել են ավելի քան 150 տաճար, որտեղ երկրպագում էին Սամանթաբհադրա Բոդհիսատվային: Ներկայումս մնացել են տասից ավելի տաճար ու տեսարժան վայրեր՝ Բաո Գուո, Ուան Նիեն ու Վագրի որոգայթ տաճարները, Ցին Յին սրահը, Սև վիշապի՝ գետի վրայով տախտակապատ արահետը, Հոնգ Չուն հար-

թավայրը, Սիեն Ֆոնգ տաճարը (Ինը ավագների քարանձավ), Փիղ լողացնելու ջրավազանը, Ոսկե գագաթնակետը և այլն: Տարբեր բարձրությունների պատճառով այստեղ կլիման խիստ փոփոխական է: Բարձր լեռնային շրջանները գտնվում են կիսացուրտ կլիմայական գոտում, ցածրադիր լեռնային տարածքները՝ մերձարևադարձային: Լեռնագոգի ու լեռնակատարի միջև կա 15^0-ի տարբերություն, ըստ այդմ էլ՝ տարբեր են և՛ բուսականությունը, և՛ կենդանական աշխարհը: Բուսականության 3000 ու կենդանիների 2000 տեսակներով «բնակեցված» էմեիշան լեռը թանգարան է բաց երկնքի տակ:

Բաո Գուո տաճարից 15 կմ վեր բարձրանալով՝ հասնում ես Ուան Նիեն տաճար: Այն կառուցվել է Չին դինաստիայի Լոնգյեն կայսեր օրոք եւ կոչվել է Սամանթաբհադրա: Այժմ տաճարն ունի երկու սրահ: «Անփայլ սրահում» տեղադրված է վեցժանիքանի սպիտակ փղի վրա նստած Սամանթաբհադրա Բոդհիսատվայի արձանը: 7,3մ բարձրությամբ, 62տ զանգվածով պղնձե այդ արձանը ձուլվել է 5-րդ դարում, հյուսիսային Սուն դինաստիայի Թայ կայսրի օրոք:

Ինը ավագների լեռնագագաթի ստորոտում է կառուցված Սիեն Ֆոնգ տաճարը, քիչ աջ գտնվում է Ինն ավագների քարանձավը, որի հարևանությամբ կապիկներ են ապրում: Բաո Գուո տաճարից մոտ 1 կմ հեռավորության վրա, Ֆու Հու լեռնագագաթի ստորոտում տեղակայված է Վագրի որոգայթ տաճարը՝ 13.000 $մ^2$ տարածքով, որը էմեիշան լեռան ամենամեծ տաճարներից մեկն է:

Էմեիշան լեռան Ոսկե գագաթնակետ անենաբարձր լեռնածերպը գտնվում է ծովի մակերեւույթից 3065մ բարձր: Այստեղ գտնվում է Ոսկե գագաթնակետ տաճարը, որը կառուցվել է արևելյան Հան դինաստիայի օրոք և սկզբնական անունը եղել է Պու Կուան: Դա էմեիշան լեռան ամենահին տաճարներից մեկն է: Ոսկե գագաթնակետում շատ հաճախ են լինում կայծակ ու ամպրոպ: Այստեղից կարելի է տեսնել չորս հրաշք երևույթներ՝ «արևածագը», «ամպերի ծովը», «Բուդդայի լուսապսակը», «սուրբ ճրագը»: Սրանցից ամենատպավորիչը Բուդդայի լուսապսակն է՝ ցերեկվա ժամը 3-ի սահմաններում, երբ արևի ճառագայթները բեկվում են գոլորշու մեջ, եւ օդում ձևավորվում է հրաշափայլ լուսե օղակ, որը և կոչվում է «Ոսկե գագաթնակետի Բուդդայի լուսապսակ»:

Սիչուան նահանգի Լեշան քաղաքի մոտ խոյացող Բուդդայի հսկայական արձանը քանդակված է Լինգյուին սարի արևմտյան ժայռի վրա, Մին գետի արևելյան ափին՝ Մին, Ցին Ի և Տատու գետերի միախառնման վայրում: Դա Չինաստանում Բուդդայի (նստած դիրքով) ժայռաքանդակ ամենամեծ արձանն է: Այն ունի 70,7մ բարձրություն և ուսից ուս՝ 24մ լայնու-

թյուն: Համաչափորեն քանդակված ապշեցուցիչ աշխատանքում չի անտեսվել ջրահեռացման համակարգը. այն թույլ է տալիս հեռացնել ջրերն ու մեղմացնել քամիները: Բուդդայի արձանի քանդակագործման աշխատանքը սկսվել է Քայյուեն դարաշրջանում (713-741թթ.), Թան դինաստիայի Սյուեն կայսեր կառավարման առաջին տարում(713թ.) և ավարտվել 90 տարի անց՝ Ճենյուեն դարաշրջանում (785-805թթ.), Թան դինաստիայի Դըծոն կայսեր կառավարման 19-րդ տարում (803թ.): Երբ քանդակումն ավարտվեց, արձանը ներկվեց կարմիր գույնով ու զարդարվեց նեֆրիտով, ապա 60մ լայնությամբ, 7 հարկ ունեցող շենքի բարձրությամբ, 13 շերտանոց քիվերով Բուդդայի տաճար կառուցվեց: Միաժամանակ ժայռի աջ կողմում կառուցեցին ինը ոլորանով խճուղի:

4. Ուիշան լեռները

Ուիշան լեռների բնական արգելոցը ՅՈՒՆԵՍԿՕ-ի Համաշխարհային բնական և մշակութային ժառանգություն է դարձել 1996թ. դեկտեմբերի 1-ից:

15 կմ ձգվելով Ֆուցզյան նահանգի Ուիշան քաղաքի հարավ-արևմտյան մասով՝ 50 կմ տրամագծով Ուիշան լեռնազանգվածը ծովի մակարդակից բարձր է 750մ: Այն ձևավորված է կարմիր ավազաքարից: «Նրա վտակները նեֆրիտի նման ջինջ են, իսկ կատարները՝ երկնաքերի պես»: Շրջակա տեսարժան վայրերն են՝ ինը ոլորաններով վտակը, 36 գագաթները, 99 արտասովոր ժայռերը, Հան դինաստիայի հինավուրց քաղաքի ավերակները, Սուն դինաստիային պատ-

կանող՝ ճենապակու համար նախատեսված թրծավառարանի մնացորդները և այլն:

Ըստ լեգենդի՝ Շան դինաստիայի ամենատարեց մարդը՝ Պեն Ճյուն, մի անգամ հայտնվելով Ուիշանում, այնքան է զմայլվել ինը վտակների ջրերով, որ որոշել է երկար ժամանակ մնալ այդտեղ, իր մոտ բերելով նաև Ու և Ի երկու որդիներին: Նրա որդիների անուններով էլ այդ լեռը կոչվել է Ուիշան:

Ուիշան լեռն ընկած է մերձարևադարձային գոտում: Արևելյան, արևմտյան ու հյուսիսային մասերում լեռնազանգվածն ունի շատ ծերպեր, իսկ միջին ու հարավային մասն ավելի շատ բլրոտ ու հարթավայրային է: Նրա հողատարածքը տափակ է և հյուսիս-արևմուտքից իջնում է հարավարևելք: Ամենաբարձր լեռնաշղթան Խուանգանն է, որը ծովի մակարդակից բարձր է 2158մ և հայտնի է որպես «արևելյան Չինաստանի լեռնաշղթաների կտուր»: Ամենացածր վայրը՝ Սինթիեն փոքր քաղաքը, ծովի մակարդակից բարձր է 165մ: Ուիշան լեռն ունի միջազգային նոր անվանում՝ Ուիշան լեռների տեսարժան վայրեր կամ Ուիշան լեռների բնական արգելոց:

Ուիշանի բնական պայմանները բազմազան են, դրանք նպաստում են բույսերի ու կենդանիների զարգացմանը: Այստեղ աճում են 3000-ից ավելի բուսատեսակներ: Բնական արգելավայրը կոչվում է նաև «օձերի թագավորություն» և «մերձարևադարձային կենդանիների գազանանոց»:

ՄԱՍ 3. ԱՆՏԻԿ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ԲՐԱՇՈՆԵՐԸ

Ոչնյութական ժառանգությունը Չինաստանում

Ոչնյութական ժառանգությունը մշակութային ժառանգության կարևոր մասն է, վկան՝ Չինաստանի պատմության, որը փոխանցում է չինական քաղաքակրթությունը՝ չին ժողովրդի ոգին, մտածելակերպը, երևակայությունն ու մշակութային գիտակցությունը, նրա կենսունակությունն ու ստեղծարարությունը: Ոչնյութական ժառանգությունը ներառում է սերնդեսերունդ փոխանցված ավանդական մշակույթի տարբեր տեսակներ՝ կապված ժողովրդի կենսակերպի, այսինքն՝ ժողովրդական գործունեության, արվեստի, ավանդական գիտելիքների ու արհեստի, մշակույթը ներկայացնող այլ օբյեկտների հետ:

Չինական կառավարությունը միշտ մեծ ուշադրություն է դարձնում ոչնյութական ժառանգության պահպանման ու ներառման վրա: 2005թ. Չինաստանի պետական խորհրդի գլխավոր վարչության կողմից հրապարակվել է ոչնյութական ժառանգության պահպանման նախագիծ: 2006թ. մայիսին կառավարությունը պաշտոնապես ստեղծել է նախագիծն իրականացնող վարչական ստորաբաժանումներ ու նախարարություններ, որոնք պետք է, առաջին հերթին, հոգ տանեն ժառանգության պահպանման ու ապահովման մասին, այնուհետև նպատակայնորեն կիրառելով սերնդեսերունդ փոխանցվող ավանդույթները, զարգացնեն ոչնյութական ժառանգությունը: Հետագայում ստեղծվեցին ավելի շատ խմբեր, որոնց ներկայացուցիչները պատասխանատվություն են կրում՝ իրագործելու հոգևոր-մշակութային ժառանգության պահպանման ու զարգացման ծրագրերը ոչ միայն ազգային մակարդակով, այլ՝ նահանգային ու վարչատարածքային:

Ոչնյութական ժառանգությունը կարելի է բաժանել երկու խմբի՝ հոգևոր մշակույթի ավանդություններ, որոնց մեջ մտնում են ժողովրդական արարողությունները, արվեստը, ավանդական գիտելիքներն ու արհեստը, և մշակութային մթնոլորտը, այսինքն՝ ժառանգությունը պահպանելու համար պետք է բավական ժամանակ տրամադրել ու հասարակական վայրեր հատկացնել պարբերաբար տեղի ունեցող ավանդական մշակութային միջոցառումների համար: Չինաստանի պետական խորհրդի գլխավոր վարչության կողմից հաստատված ոչնյութական ժառանգության պահպանման ծրագրի մեջ սահմանված են հետևյալ վեց կարգերը՝ 1. բանա-

վոր ավանդույթներ, այդ թվում՝ լեզուները, որոնք համարվում են մշակույթը հետնորդներին փոխանցող միջոց, 2. ավանդական արվեստներ, 3. ժողովրդական միջոցառումներ, նիստուկաց, փառատոներ, 4. ավանդական գիտելիք, բնական գիտությունների կիրառումը, տիեզերաբանությունը, 5. ավանդական արհեստագործություն, 6. վերը նշված ոչնյութական ժառանգությունների գործնական կապը: Պաշտոնապես հրատարակվել է նաև ոչնյութական ժառանգության կատալոգ, որում ներկայացված 518 պաշտոնական անվանակարգերից 31-ը ժողովրդական գրականություն է, 72-ը՝ ժողովրդական երաժշտություն, 41-ը՝ ժողովրդական պարեր, 92-ը՝ ավանդական օպերաներ, 46-ը՝ ցյուլիներ, այսինքն՝ բալլադներ, երգիծական երկխոսություններ և այլն, 17-ը՝ ակրոբատիկա կամ սպորտ, 51-ը՝ կերպարվեստ, 89-ը՝ ավանդական արհեստագործություն, 9-ը՝ ավանդական բժշկություն, 70-ը՝ բանահյուսություն:

1. Մյաոների *գուգը*

I-1 համարի քաղվածքում տեղ գտած՝ մյաոներ ժողովրդի գրականությունը օգտագործվում է այն վայրերում, որտեղ բնակվում են մյաոները. այն ներկայացվում է բանաստեղծական սագայի տեսքով, որի հիմքում ընկած է ծագումնաբանությունը: Ստեղծագործական այս ժանրը նրանց մոտ հայտնի է *գուգը* կամ *կուկըկուցը* անվանումով: Մյաոներ ժողովրդի *գուգը,* որը ներկայանում է որպես բանավոր գրականություն, մի հանրագիտարան է՝ ներառած պատմություն, բարոյականություն, ժողովրդական բանահյուսություն, տարազ, ճարտարապետություն, կլիմա: Այն կազմված է չորս բաժիններից՝ *քայթիենփիտի, ֆընմունգը, հոնգշիթաոթիեն և պաշենշըշուե:* Ամբողջ սագան սերնդեսերունդ փոխանցվել է բանավոր խոսքով՝ մյաո լեզվով: Հանգավորված ասքի յուրաքանչյուր տողում ներկայացված են հինգ կերպար, ընդհանուր առմամբ այն ունի 15000 լիրիկական տող,

որոնցում հրամցված են 100 վառ կերպար: Այս ստեղծագործության մեջ կիրառված են շատ մետաֆորներ, չափազանցություններ, համեմատություններ, անձնավորում, հռետորական ճարտասանություններ և այն: Իդեալիզմով ու ռոմանտիզմով շաղախված ասքում հաճախ, թմբուկի հարվածների ներքո, գովերգվում են զոհաբերությունները, ամուսնության ու թաղման արարողությունները, խնջույքներն ու փառատոները:

Ոչնյութական ժառանգության I-7 քաղվածքում ընդգրկված է Լյան Շանպո և Ճու Ինթայ Սիրահար-թիթեռների լեգենդը, որը տարածված է Նինբո, Հանչժոու, Չժեցզյան նահանգի Շանգյու, Ցզյանսու նահանգի Իսին, Շանդուն նահանգի Ծինին քաղաքներում ու Հենան նահանգի Ռունան վարչատարածքում. այն միակ չինական ժողովրդական բանահյուսությունն է, որն ուրույն տեղ ունի միջազգային ասպարեզում և համեմատվում է Ուիլյամ Շեքսպիրի «Ռոմեո և Ջուլիետ» ողբերգության հետ: Ռունան վարչատարածքը համարվում է Լյան և Ճու սիրահար զույգի հայրենիքը:

2. Ծուոչյուենի ճոխ հանգավորումը

Ծուոչյուեն վարչատարածքում տարածված՝ ճոխ հանգավորում ունեցող ժողովրդական երաժշտությունը /II-1 քաղվածք/ ստեղծվել է հան ժողովրդի կողմից և առավել հայտնի է Շանսի նահանգում: Այն լայնորեն տարածված է Ծուոչյուեն, Հըշուեն ու Սիանյուեն վարչատարածքներում: Երգի այս ժանրի թեման ընդգրկում է բողբոջից մինչև ծաղիկներ գովաբանությունը, որից էլ բխում է անվանումը: Երգերը ոչ միայն ծաղիկների հետ կապված բույսերի, պտուղների մասին են, այստեղ ծաղիկները կարող են օգտագործվել նաև փոխաբերական իմաստով՝ կապված առօրյա կյանքի հետ: Ամենահայտնի երգերն են՝ Կամիր դեղձ, Ծիրանի սպիտակ ծաղիկ, Դանդաղ մտածում, Հուի եղբայր, Միայնակ ծնողներ, Կույր ժամանակ, Հողատարածքը:

3. Առյուծի պարը

III-5 քաղվածքով՝ Առյուծի պարը նշանավոր ժողովրդական ավանդական արվեստ է Չինաստանում: Կենդանիների արքա առյուծը բարեհաջողության խորհրդանիշն է: Փառատոների ժամանակ առյուծապարը համարժեք է վիշապապարին և կոչվում է «Խաղ առյուծների հետ»: Ռազմական արվեստի հմտություն պահանջող այս պարը լինում է երկու տեսակի՝ մեծ առյուծների պար, որը պարում են երկուսով, և փոքր առյուծների

պար, որը պարում է մի դերասան: Ներկայացումը ուղեկցվում է կոչնազանգերի, թմբուկների ձայներով: Պարահանդեսի մասնակիցները դիմակներ են հագնում և նկարազարդած գնդակներով փորձում են հրապուրել առյուծին՝ սիրախաղով, քծնելով, ցատկոտելով, դոփելով, թռչկոտելով, գալարվելով: Հեբեյ նահանգի Սյուշուեյ վարչատարածքը, որտեղ ևս կարևորում են զվարճալի առյուծապարը, համարվում է հյուսիսային առյուծի ծննդավայրը: Կլոր ու մեծ գլխով, աստղափայլ աչքերով, ճկուն բերանով հզոր ու ազդեցիկ առյուծը, միաժամանակ, բարի ու սիրալիր է: Հմուտ դերասանները կարողանում են իրական առյուծի նման կանգնել, քայլել, վազել, ցատկել, գալարվել, շարժել մարմինը, նույնիսկ քնել առյուծի նման, ցատկոտել ցցերի վրայով, թաթով հարվածել, օդում գլուխկոնծի տալ, գլուխկոնծի տալ ցցերի առջևում ու հետևում, ժամանակակից կեցվածք ընդունել և այլն: Այդ պարը պարում են Գարնանային փառատոնի կամ գարնանը տաճարում կայացող տոնավաճառի ժամանակ: Առյուծի կերպարանք ընդունում են երկու դերասան՝ մեկը առջևից ձեռքերով պահում է գլուխը, մյուսը, մեջքը կորացնելով, բռնում է ընկերոջ գոտկատեղից՝ միասին ստեղծելով առյուծի ընդհանուր կերպարը, որը կոչվում է Թայ: Թայ առյուծի գլուխը զարդարված է յակի մազերով: Եվս մեկ ուրիշը հագնելով առյուծի դիմակ ու մորթի, ստանձնում է փոքր առյուծի՝ Շաոի դերը, ով նկարազարդ գնդակով փորձում է զվարճացնել մեծ առյուծին: Այդ առյուծ-տղան ոչ միայն շատ ուժեղ, այլև ռազմավարժ դերասան է, այնպես որ՝ կարողանում է առաջ գալ ու գլուխկոնծի տալ առյուծի վրայով, թաթով հարվածել ցիցերին: Առյուծ-տղայի հետ հրաշալի թիմային առյուծապարով ներկայացվում են հյուսիսային առյուծին բնորոշ առանձնահատկությունները: Շանսի նահանգի Սիենֆեն քաղաքում տարածված «Երկնային հարթակի» առյուծապարը, որը կազմակերպվում է

դասական տաճարում, աչքի է ընկնում իր յուրահատկությամբ, վտանգավորությամբ, ապշեցուցիչ ու բարձրարվեստ շարժումներով: Աչքերի, լեզվի ու պոչի փութկոտ շարժումներով առյուծ-դերասանները վեր ու վար են անում բարձր հարթակի վրա, երբեմն էլ լեզուները հանելով՝ զվարճացնում են հանդիսատեսներին: Յուրահատուկ ուժով ու ճարպկությամբ օժտված՝ նրանք ներկայացվող պարը գլուխգործոց են դարձնում: Հունշանյանի առյուծապարը հայտնի է Հունշանյան քաղաքում և նրա հարևան շրջանի Պայշուիյան քաղաքում, որոնք գտնվում են Ճըծիան նահանգի Լինիայ քաղաքից դեպի հյուսիս-արևմուտք ընկած վայրերում: Նրանք առանձնանում են ժողովրդական ռազմարվեստի ու ավանդական առյուծապարի ճարտար համադրությամբ: «Ութ անհասանելի սեղանի» վրա գլուխկոնծի տալուց բացի, դերասանները պետք է նաև առյուծի նման ուտեն, սողան, հետևի ոտքերի վրա կանգնեն, Բուդդայի կեցվածք ընդունեն և այլն: Բոլոր շարժումներից ամենադժվարը սեղանների վրայով ցատկելն է: Ավելի քան 40 սեղան բլուրների նման իրար վրա դարսվում են. ամենաբարձր սեղան-բլուրն ունի 11մ բարձրություն, որը կազմված է ինը սեղանից: Առանց գուլպայի ու կոշիկի դերասանը պետք է բարձրանա ամենավերևում գլխիվայր շուռ տված սեղանի վրա և քայլի նրա չորս ոտքերով. դա, իրոք, աննախադեպ ճարպկություն է պահանջում:

Գուանդուն ոճի առյուծապարը, որը հայտնի է որպես հարավային առյուծի չինական առյուծապար, ծագել է Թան դինաստիայում, այնուհետև հանրահայտ դարձել Գուանդուն նահանգի Ֆոշան, Սուրսի Կուանճոու վարչատարածքներում, Գուանսի նահանգում և հարավ-արևելյան Ասիայի չինական սփյուռքում: Ռազմարվեստը, պարն ու երաժշտությունը միավորվելով՝ ստեղծում են մի հրաշալի արվեստ: Ներկայացման ժամանակ, կոչնազանգերի ու թմբուկի հնչյունների ներքո ընթացող հարավային բռնցքամարտից հետո երկու դերասան սկսում են առյուծապարը, իսկ Ամիթաբհա դիմակով մեկ ուրիշը զվարճալի հնարքներով առաջնորդում է առյուծին: Հարավային բռնցքամարտում դիտարժան է դերասանների՝ ձիու կեցվածքի ընդունումն ու առյուծի իրական շարժումը՝ շողացող աչքերի զավեշտական խաղը, լորձունքի ծորումը, մարմնի լիզումը, գլխի թափահարումը և այլն: Հարավային առյուծի առավել տարածված բեմադրություններից է միրգ բռնելը, բարձր հարթակից ջուր խմելը, զարդանախշ գնդակով խաղը, սյուների վրայով ցատկոտելը: Սուրսիի հարավային առյուծը սկզբում եղել է գետին-առյուծ, ապա դարձել է նստարան-առյուծ, հետո՝ բարձրահարթակ-առյուծ, և վերջապես՝ սյուն-Առյուծ: Կուանճոու վարչատարածքում Շաքըն հարավային առյուծի արտաքին առանձնահատկություններն են՝ լայն ճակատ ու նեղ դեմք, շարժուն ու մեծ աչքեր,

մեծ բերան, կճատ քիթ, թմբլիկ այտեր ու քողարկված ատամներ: Նրանց կարելի է դասել վարժեցված ու հանգիստ, վայրի ու պարող առյուծների շարքին: Հմուտ դերասանների խաղը՝ առյուծին բնորոշ քայլքը, խորաթափանց հայացքը, ձգվելը, ճարպկորեն շրջանցելը, վրա թռչելը, գլուխկոնծի տալը, գետնին կամ սյուների վրա ցատկոտելը, հագեցած է երջանկությամբ, զայրույթով, ողբով, բերկրանքով, հանգստությամբ ու անակնկալ արարքներով:

4. Քուեն օպերան

Ավանդական Քուեն օպերան, որի քաղվածքի համարն է IV-1, Չինաստանի ամենահին օպերան է: Այն ստեղծվել է 14-րդ դարում, Սուչժոու վարչական շրջանում գտնվող Քուենշան քաղաքում և հայտնի է Քուեն դրամա, Քուեն կամ Քուենշան երգ անվանումներով: Քուեն օպերան չինական օպերայի չորս՝ *չանգ, նիեն, ծո, տա* կատարումների, բեմադրության ու ռազմական արվեստի համադրություն է, և հանրահայտ է իր գեղեցիկ բառերով, բարեհունչ երգով, նրբաճաշակ ներկայացմամբ. այն կարելի է անվանել չինական օպերայի նախահայր: Քուեն օպերայի ժամանակ, ռիթմը պահելու համար, օգտագործում են ծնծղաներ ու թմբուկներ, որոնք ուղեկցվում եմ ֆլեյտայով ու սանսիեն եռալար լյուտնյայով. այդ մեղեդին կոչվում է *ճունճոուի* ռիթմ: Բարեհնչուն Քուեն օպերայի *շուիմո* երգեցողությունը ամբողջովին ներկայացնում է երգեցողության *լարգո* տեմպի ոճը, որը տարածված է հարավային Չինաստանում: Ռիթմը հարստացնող գեղգեղաձայնությունը հաճախ ճոխացնում է մեղեդին: Մեկ կամ երեք ռիթմային ծափից բացի, չորս քառորդ ռիթմը դանդաղեցնելով, դարձնում են ութ քառորդ, և երգը դառնում է ավելի մեղմ ու քաղցրահնչուն: Օպերայում մեծ ուշադրություն է դարձվում տեքստի բառերին, դրանց արտասանության վրա: Յուրաքանչյուր բառ պետք է արտասանվի ըստ ձայնի բարձրության, ուժգ-

նության, տևողության ու տեմբրի՝ հնչյունը պարզ արտաբերելով, երկարացնելով ու եզրափակելով ճշգրիտ ձևով: Այսկերպ երգվող քնարերգությունը հարստացնում է մեղեդու բովանդակությունը՝ հաղորդելով բերկրավառ ու *լարգո* տեմպ:

5. Ար-րեն ճյուան

Ար-րեն ճյուան /քաղվածք V-35/ ժողովրդական արվեստի տեսակը տարածված է Լիաոնին, Ծիվին, Հեյլունցզյան նահանգներում, Երեք դաշինքներում ու Ներքին Մոնղոլիայի մեկ քաղաքում: Պատմականորեն այն կոչվում էր Սիաո Յան Կը, Շոն Ուան Յի, Պըն Պըն, Գուո Քաո, Շուանթիաոբիենցյու, Ֆընգյոու, Չյուն Կը, Պանպանսի կամ հյուսիս-արևելյան տեղական օպերա: Այն ներկայացվում է մի քանի ձևերով. մենակատար դերասանով, ով ամբողջ ստեղծագործությունը մենախոսում է, երկու դերասանով, ովքեր միասին պատմություն են ոգում, երգում են, պարում, բեմադրում (դա ար-րեն ճյուանի ստանդարտ ձևն է), խմբային, երբ դերասանները խմբով երգում ու պարում են, դրամայի ձևով, որը կոչվում է նաև զուգաօպերա, երբ ողջ բեմադրությունն ընկած է միայն երկու դերասանի ուսերին: Ներկայացումն ընթանում է երգով, արտասանությամբ, բեմականությամբ, պարով, ինչպես նաև օգտագործվում են թաշկինակներ, հովհարներ, բամբուկներ. այս ամենն ուղեկցվում է բուռն ծափերով կամ կոչնազանգերով: Դերասանները սովորաբար աջ ձեռքին պահում են ծնծղաներ, իսկ ձախ ձեռքին՝ Բուդդայի արձանիկը՝ բեմադրելու «պարող ուռենին», «անմահների քաղաք ոլոռը», «ոսկեգույն վիշապի կողմից շրջապատած տարածքը», «ազատության մեջ գտնվող սև վագրը», «տուն վերադարձող ոսկեգույն առնետը», «սրբիչով ծածկելով սեփական գլուխը», կամ երկու ձեռքով բռնելով բամբուկից պատրաստված ծնծղաները՝ ապշեցուցիչ շարժումներ են կատարում: Վերջին քառորդ տարիներին հաճախ էր ար-րեն ճյուանը

ներկայացվում ժամանակակից շոուներում կամ ժամանցներին, երբ գյուղատնտեսական աշխատանքներն ավարտվում են: Առավել հեղինակություն վայելող աշխատանքներից են «Մեծ արևմտյան պալատ», «Փրկություն», «Դաժանություն», «Լիան Սայծինի դեմքը», «Չիու առջև ճողփող ջուրը», «Թագուհու բաժին» ներկայացումները:

6. Ուցիաո ակրոբատիկա

VI-1 քաղվածքով՝ ուցիաո ակրոբատիկան ներառում է սպորտ, ակրոբատիկա ու *շաոլին* ռազմարվեստը: Այն ունի երկար պատմություն, և ըստ բալլադի՝ «Ուցիաո ակրոբատիկա պետք է սովորեն բոլորը՝ դեռ նոր քայլող մանուկներից մինչև 99 տարեկան ծերունիները»: Կան ուցիաո ակրոբատիկայի երեք ձևեր՝ ցինծըխուո, լիծըխուո և քուածըխուո: Ցինծըխուոն, որը կոչվում է նաև ակրոբատիկական ներկայացում, ընդգրկում է *ֆիթնես,*

վարժանք, հավասարակշռությունը պահելու տեխնիկա, ակրոբատիկական շարժումներ, շարժումներ բարձր դիրքում, բալլադի երգեցողություն, զվարճալի ներկայացումներ, *ցիգոն*,* ձիասպորտ, կենդանիների վարժեցում, կենդանիների նմանակում և այլն: Չինաստանի վարչապետ Ճոու Ընլայը, 1950թ. 14 արևմտյան եվրոպական երկրներ այցելելուց հետո, երբ հանդիպել է ուցիաո ակրոբատների հետ, ասել է՝ «Ուցիաոն ակրոբատիկայի հայրենիքն է»: Այդ ժամանակից սկսած ուցիաոն աշխարհահռչակ է՝ որպես ակրոբատիկայի հայրենիք:

**Ցիգոն – հանդիսանում է մարմնի դիրքի ու շարժումների, շնչառության ու ներհայեցության ամբողջական համակարգ, գործածվում է համոզմունքով, որ այն օգնում է ամրապնդել առողջությունն ու ոգեկան ուժը (թարգմ. ծանոթագր.):*

7. Շաոլին մարտական արվեստը

Շաոլին մարտական արվեստը, որի քաղվածքի համարն է VI-7, ծնունդ է առել Սոնգշան լեռան Շաոլին վանքում, Զեն իմաստության դպրոցի վանականների կողմից կիրառված ռազմարվեստի հիման վրա, *կիննարա* հավատքով, և խորհրդանշում է բուդդայական ավանդական մշակույթի ուրույն մի ձև: Շաոլին ռազմարվեստի նպատակը ոչ թե չինական *կունգ ֆու* սպորտաձևը սովորեցնելն է, այլև ճանապարհ բացելն է դեպի բուդդայականություն ու Զեն իմաստություն: Շաոլինի վանականների գերագույն նպատակն անձի ինքնահաստատումն է: Կանոնավոր ավանդման մեջ համատեղվում է և՛ հոգևոր, և՛ ֆիզիկական ուսուցումը: Ռազմարվեստի կարգախոսն է՝ «Մարտական արվեստը հայտնի է ոչ միայն Շաոլին տաճարով, այն նաև ներկայացնում է Շաոլին տաճարը»: Շաոլինում ձեռքբերված կարողությունները թույլ են տալիս տիրապետել ժամանակակից մարտարվեստին. բռունցքի հարվածը պետք է լինի ուժեղ ու դիպուկ, ոտքի հարվածը՝ ճակատագրական, այնպես որ՝ տապալի թշնամուն, հարձակումն ու պաշտպանումը պետք է լինեն միաժամանակ: Դարավոր ջանքերից հետո, մարտական արվեստն ու Զենը համատեղվելով՝ զարգացել են Շաոլին տաճարում որպես մի արվեստ, որը հետագայում աննախադեպ է դարձել և ընդգրկվել ազգային մակարդակով ոչնյութական ժառանգության առաջին խմբի մեջ:

8. Տիբեթյան թանքա

Չինական կերպարվեստի մեջ Տիբեթյան թանքան /քաղվածք VII-14/ և Շուի մարդկանց՝ ձիու պոչով կատարած ասեղնագործությունը /քաղվածք VII-23/ էթնիկ փոքրամասնության՝ ոչնյութական ժառանգութուն հանդի-

սացող փայլուն աշխատանքներ են: Տիբեթյան թանքան գույնզգույն կտավի վրա արված հոգևոր զարդանկար է, որը կախում են պատերից՝ որպես զոհաբերություն: Տիբեթյան մշակույթի այս յուրահատուկ գեղանկարը կարող է ընդգրկել նաև այլ թեմաներ՝ պատմական, քաղաքական, մշակութային, սոցիալական և այլն: Թանքան կարող է լինել տարբեր ձևերի ու տարբեր գործվածքների վրա, մեծամասամբ նկարում են թղթի կամ կտորի վրա, կան դիպակների կամ կաշվի վրա ասեղնագործված զարդանախշեր, ապլիկացիաներ ևս: Ճիքոնի թանքան ունի ավելի քան հազար տարվա պատմություն և առ այսօր սերնդեսերունդ փոխանցվել է Փինգցո Քանգզան ընտանիքի կողմից: Տիբեթյան մշակույթը ներկայացնող այս սրբապատկերը յուրատիպ արվեստի գործ է, որը լայն տարածում ունի միջազգային ասպարեզում: Հոգևոր թեմաները հաճախ ընդգրկում են Բուդդայի պատկերը կամ բուդդայական պատմություններ, այդպիսով թանքաները մեծապես ողջունելի են Վաջրայանա տաճարի կողմից:

9. Ձիու պոչամազով ասեղնագործությունը

Գույչժոու նահանգի Սանդոու ինքնավար համայնքում բնակվող շուի ազգագրական խմբի կանանց կողմից ժառանգաբար փոխանցված՝ ձիու պոչամազով ասեղնագործությունը հատուկ տեխնիկայով արված յուրահատուկ աշխատանք է: Այն տարածված է շուի ցեղի մարդկանցով բնակեցված Սանդոն, Ճոնխը, Թինփայ, Թանճո, Շուիլոն և Սանդոու մարզում

գտնվող այլ գյուղերում: Ասեղնագործության տեխնիկան ներառում է ասեղնագործություն, ասեղնագործություն ձիու պոչամազով, անցքերի վերանորոգում ասեղնագործությամբ և այլն: Կարելի է ընդգծել երեք յուրահատկություն. առաջին՝ ձիու պոչամազով ասեղնագործած գործվածքը և՛ հեշտ է, և՛ դժվար հաստատուն ձև տալու համար, երկրորդ՝ ձիու պոչի մազն ունի հակաքայքայիչ առանձնահատկություն, հետևաբար ձիու պոչամազով ասեղնագործած իրն երկար է գործածվում, երրորդ՝ ասեղնագործության ժամանակ օգտագործված բրոնզե զարդանախշերը հեռացնում են չար աչքը: Գեղեցիկ պատկերներով զարդանախշեր հաճախ արվում են երեխաների կախակապերի՝ *տայծիեների* վրա, որպեսզի դրանք ամուր լինեն, նուրբ կոշիկների՝ *ճըծիեների* վրա, կանացի գոտիների ու կրծքանշանների, մանկական գլխարկների, դրամապանակների ու շապիկների վրա:

10. Ծինգդըճեն խեցեգործական արհեստագործությունը

Ծինգդըճեն ավանդական արհեստագործությունն /քաղվածք VIII-7/ ու սյուան թղթի տեխնիկան /քաղվածք VIII-65/ ամենայուրահատուկ ձեռքի աշխատանքներն են Չինաստանում: Ծինգդըճենը համարվում է խեցեղենի մայրաքաղաքը. Ծինգդըճենի խեցեղենը նեֆրիտի պես սպիտակ է, հայելու պես՝ թափանցիկ, թղթի պես բարակ, զրնգուն՝ ինչպես զրնգում է հարվածային գործիքների ափսեն: Դրանց հռչակը տարածված է ողջ երկրով մեկ: Ծինգդըճեն քաղաքի խեցեգործության արհեստը ծագել է դեռ հինգ դինաստիաների կառավարման ժամանակաշրջանում, այն արագ զարգացել ու տարածվել է Սուն և Յուան դինաստիաներում: Մին և Ցին դինաստիաների կառավարման ժամանակ արդեն կառուցվել են գործարան-

ներ և դարձել խեցեղեն իրերի արտադրության առաջատարը: Չինաստանի Հանրապետության ստեղծումից հետո խեցեղենի արդյունաբերությամբ զբաղվողներից շատերը, արտագաղթելով Ծինգդըճեն քաղաքից, իրենց գործը շարունակել են այլ վայրերում, այդպիսով զարգացրել ու ընդլայնել կերամիկայի արդյունաբերությունը: Խեցեգործական արհեստագործությունը չափազանց մասնագիտացված է Ծինգդըճենում, իսկ արտադրանքը՝ բավականին տարածված: Արտադրման գործընթացում կան հինգ հիմնական յուրահատկություններ՝ իրերի տարաձև լինելը, զարդանախշերը, կերամիկայի գրաֆիտո ձևավորումը, հախճապակու պատրաստումն ու թրծավառարանի օգտագործումը:

11. Սյուան թղթի պատրաստման տեխնիկան

Հին Չինաստանում չորս մեծ գյուտերից մեկը թղթի արտադրությունն է: Անհոյ նահանգի թղթարտադրությունը ավանդական թղթի պատրաստման լավագույն օրինակն է և չինական գյուտարարական չորս գոհարներից առաջինը: Սյուա անունն առաջացել է Անհոյի Սյուանչեն քաղաքային շրջանի անվանումից: Թղթի հումքը պատրաստվում է Ծին վարչատարածքի Շաթիեն քաղաքից ու նրա մոտակա տարածքից բերված ծղոտից, *պտերոցելտիս տատարինովա* ծառատեսակից ու *կարամբոլայի* հյութից: Սյուան թղթի ստացման գործընթացը բաղկացած է 140 մեթոդներից, որոնց հիմքում ընկած է պտերոցելտիս տատարինովա ծառի կեղևի ու Շաթիենի ծղոտի խառնուրդը: Սյուան թուղթը բյուրեղի պես մաքուր է, նուրբ, փափուկ ու հարթ, ծալելուց չի պատռվում, ողորկ է, բայց ոչ սայթաքուն, ունի թանաքը ներծծելու հատկություն, շատ հարմար է գրելու և նկարելու համար, մնայուն է, կարճ ասած՝ հավերժական թուղթ է կամ թղթերի թագավորն է: Սյուան թուղթը բազմատեսակ է. ըստ օգտագործված հումքի՝ այն կարելի է բաժանել երեք խմբի՝ բամբակե, կաշվե ու առանց որևէ խառ-

նուրդի: Այն սիրված է բազմաթիվ նկարիչների, գրասեր ու վայելչագրությամբ զբաղվող մարդկանց կողմից:

12. Ավանդական չինական ախտորոշում ու ասեղնաբուժություն

Չինական բժշկության մեջ մեծ նշանակություն ունեցող ավանդական ախտորոշումը նշված է IX-2 քաղվածքում, իսկ ասեղնաբուժությունը՝ IX-5: Ավանդական չինական ախտորոշման մեջ մտնում են ախտանիշների հայտնաբերումն ու հիվանդության մասին տվյալները: Չինական բժշկության տեսության համաձայն՝ կան հիվանդության ախտորոշման չորս մեթոդ՝ զննում, լսում, հարցաքննում ու զարկերակի ստուգում: Այդ մեթոդների կիրառումից հետո պետք է իմանալ հիվանդության ի հայտ գալու պատճառը, հիվանդի վիճակը, հիվանդության հատկանիշներն ու տևողությունը: Ըստ այդմ՝ կարող են հայտնաբերվել տարբեր ախտանիշներ, սակայն պետք է որոշել կոնկրետ հիվանդությունն ու հետո նշանակել բուժումը: Նշանավոր բժիշկ Պիեն Քընն, ով ապրել է Պատերազմական դարաշրջանում, կարողանում էր ճշգրիտ ստուգել զարկերակը, հետազոտել ու լսել հիվանդին և բացահայտել հիվանդությունը: Հաշվի առնելով *ին* և *յան* հին չինական բնափիլիսոփայության հիմնական հայեցակարգը, հինգ տարերքները, ավանդական չինական բժշկության համակարգը՝ Դեղին կայսրի սրբագրած օրենքում մանրամասնորեն նկարագրված են շատ ախտորոշումներ, ներկայացված են դրանց բացահայտման սկզբունքները և առաջ են քաշված հիվանդությունների ախտորոշման չորս հիմնական մեթոդներ: Բժիշկները պետք է օգտագործեն տեսողությունը, լսողությունը, հոտառությունն ու շփումը, որպեսզի կարողանան հաղորդակցվեն հիվանդների կամ մարդկանց հետ՝ իմանալու հիվանդության հետ կապված ամբողջ տեղեկությունը, այնուհետև համապատասխան բուժում նշանակեն: Ասեղնաբուժությունն արտաքին գործողություններով ներքին հիվանդությունների բուժում է ասե-

ղային տեխնիկայով ու մոքսաթերապիայով: Այս բժշկությամբ կարելի է բուժել մարմնի տարբեր մասերում առկա հիվանդությունները՝ կիրառելով մերիդիան համակարգն ու տարբեր մեթոդներ, որոնք արձանագրված են Դեղին կայսրի վաղ օրենքներում: Ասեղնաբուժության ժամանակ բարակ ասեղը մտցնում են հիվանդի մարմնի մակերևույթի կենսաբանորեն ակտիվ խիստ որոշակի կետերի մեջ, և այն պտտելով կամ տարբեր շարժումներ անելով, ապաքինում են հիվանդին: Մոքսաթերապիայի ժամանակ օշինդր ցեղատեսակին պատկանող *Mugwort* հոտավետ բույսը վառվում ու դրվում է մարմնի որոշակի մասերում՝ հատուկ կետերում, և ջերմության շնորհիվ բուժվում է հիվանդությունը: Յուրահատուկ տեսությամբ, մաշկի վրա գտնվող կենսակտիվ կետերով, հատուկ տեխնիկայով ու համապատասխան գործիքներով ասեղնաբուժությունը պատկանում է հան ժողովրդի մշակույթին և անգնահատելի ժառանգություն է՝ հիմնված չինական քաղաքակրթության ու ավանդական գիտության վրա:

13. Գարնանային փառատոնը

Գարնանային փառատոնը /քաղվածք X-1/ չինական ավանդական փառատոների մեջ առանձնահատուկ տեղ է գրավում: Այն ունի 4000 տարվա պատմություն և չինական օրացույցով համարվում է Նոր տարի, որովհետև այն լուսնային առաջին ամսվա առաջին օրն է, երբ մուտք է գործում նոր տարին: Գարնանային փառատոնը սկսվում է ընթացիկ տարվա 12-րդ լուսնային ամսվա 23-րդ օրը և ավարտվում հաջորդ տարվա առաջին լուսնային ամսվա 19-րդ օրը, որը կոչվում է Գարնանային փառատոնի երեկո, սակայն փառատոնի գագաթնակետը համարվում է առաջին լուսնային ամսվա առաջին օրը: Տարբեր դարաշրջաններում Գարնանային փառատոնը տարբեր անուններ ուներ. Ցին դինաստիայի կառավարման դարաշրջանից առաջ այն կոչվում էր *Շանրի, Յուենրի, Գայսուեյ կամ Սիենսուեյ,* Արևելյան ու Արևմտյան Հան դինաստիաներում՝ *Սանչաո, Սըիտան, Ճընգդան, Ճընգրի,* Վեյ, Ջին, Հյուսիսային ու Հարավային դինաստիաներում՝ *Յուենչեն, Յուենրի, Յուենշըու, Սուեչաո,* Թան, Սուն, Յուան ու Մին դինաստիաներում՝ *Յուենտան, Յուեն, Սըիրը, Սինճըն, Օսինյուեն,* Ցին կայսրությունում՝ *Յուենտան, կամ Յուենրի:* 1911թ. հեղափոխությունից հետո, երբ Գրիգորյան օրացույցն ընդունվեց Չինաստանում, հունվարի 1-ը կոչվեց Յուենտան (Նոր տարի), իսկ լուսնային առաջին ամսվա առաջին օրը՝ Գարնանային փառատոն: Գարնանային փառատոնի ժամանակ հան ժողովուրդն ու շատ էթնիկ փոքրամասնություններ զոհաբերություններ են մատուցում աստվածներին ու նախահայրերին, տարբեր մի-

ջոցառումներ են կազմակերպում՝ հրաժեշտ տալով հին տարվան և բարի ցանկություններով դիմավորելով Նոր տարին, աղոթելով լավ բերքի համար: Կան շատ ավանդույթներ, որոնք փոխանցվել են սերնդեսերունդ, օրինակ, փոշին մաքրելը, քանի որ հին ասացվածքն ասում է. «Սրբիր տան փոշին ավլով 12-րդ լուսնային ամսվա 24-րդ օրը»: «Փոշի» բառը չինարենում արտասանվում է այնպես, ինչպես «հին» բառը, հետևաբար, փոշին սրբել՝ նշանակում է դուրս քշել հին տարին և ընդունել նորը: Գարնանային տոնի երեկոյի օրը մինչև կեսգիշեր մնալն ու նվերներով փոխանակվելը կոչվում է *կուիսուեյ,* հյուրերին ուտելիք ու գինի հյուրասիրելը՝ *բիեսուեյ,* ալկոհոլային խմիչքներ խմելն ու գովասանքի խոսքեր ասելը՝ *ֆենսուեյ,* ամբողջ գիշեր արթուն մնալն ու լուսաբացը դիմավորելը՝ *շոուսուեյ:* Այցելելով ընկերներին ու բարեկամներին, ծրարի վրա գրում ես քո անունն ու հասցեն և դնում նրանց դռան մոտ. երկտող գրության մեջ կարող ես հակիրճ նկարագրել ինչ-որ անցած պատմություն, գրել բարեմաղթանքներ ու հաճելի մեծարանքի խոսքեր: Տարբեր վայրերում օգտագործվում են տարբեր գրություններ: Երջանիկ մթնոլորտ ստանալու համար պատուհաններից կպցնում են տարբեր ձևերով թղթից կտրած ֆու 福 հիերոգլիֆը: Ֆու՝ նշանակում է հաջողություն, լինել երանելի, իսկ շուռ տված 福-ն նշանակում է «քո հաջողությունն արդեն եկել է»: Նոր տարվա նկարներ կպցնելը չինական ժողովրդական հին ավանդույթ է. նկարներն արտացոլում են նրանց կուսական սովորույթներն ու հավատալիքները:

Հրավառությունը նշանակում է շնորհավորանք ու բարգավաճություն:

Գարնանային փառատոնը նշվում է մի քանի փուլերով: Փոքր Նոր տարին, որը տոնում են լուսնային 12-րդ ամսվա 23-րդ ու 24-րդ օրը, խոհանոցին զոհ մատուցելու օրն է: Այդ օրը փոշիներն են սրբում և զոհ մատուցում: Գարնանային փառատոնի երեկոն լուսնային 12-րդ ամսվա վերջին օրվա գիշերն է, ավանդաբար այն կոչվում է Մեծ Ամանորի 30-ը: Այդ գիշեր ընտանիքի բոլոր անդամները հավաքվում ու միասին սեղան են նստում: Ըստ սովորույթի՝ այդ օրը հաջողություն բերող փող են իրար տալիս և հացկերույթից հետո նստում են մինչև կեսգիշեր: Լուսնային առաջին ամսվա առաջին օրը Նոր տարվա առաջին օրն է, ուստի այն կոչվում է նաև երեք առաջինների օր: Այդ օրն ունի բազմաթիվ այլ անվանումներ՝ երեք Չաո /գերազանց/ օր, Յուենշուո, Շանրի, Ճընգչաո, Սանշուո, Սանշի և այլն, որոնք նշանակում են առաջին տարվա առաջին ամսվա առաջին օրը: Մարդիկ առավոտյան հրավառություն են անում՝ դիմավորելու հաջողությունը: Երկրորդ օրը ամուսնացած աղջիկներն իրենց ամուսինների ու երեխաների հետ այցելում են ծնողներին: Հինգերորդ օրը, որը կոչվում է «ջարդված հինգ», ցզյաոցզի (մսով ու բանջարեղենով լցոնված խմոր) են ուտում՝ հուսալով, որ այդ տարի գանձեր կունենան, որովհետև ցզյաոցզին ունի ոսկու մետաղածույլի տեսք: Հարավային Չինաստանում մարդիկ զոհաբերություններ են անում հարստության աստծուն: Նրանք բացում են դռներն ու պատուհանները, խունկ են վառում, հրավառություն անում, մինչև կեսգիշեր բաց են պահում խանութները, որպեսզի հարստության աստծվածը իրենց այցելի: Յոթերորդ օրը համարվում է մարդկության ծննդյան օրը: Այդ օրը ուտում են գարնանային բլիթներ, ցիպաո շիլա, բակերում յուղաբլիթներ են պատրաստում, որպեսզի ծուխը երկինք բարձրանա և հրաժեշտ տան կրակի աստծուն: Ութերորդ օրը համարվում է հացահատիկի ծննդյան օր. մարդիկ գնում են տաճար՝ խունկ վառելու և զոհ մատուցելու տիեզերքին: Նրանք այդ օրը բաց են թողնում վանդակում պահվող թռչուններին ու ձկնավազանի ձկներին՝ հավատալով, որ աշխարհի բոլոր արարածները կբարգավաճեն: Տասներկուերորդ օրը նախապատրաստվում են Լապտերների փառատոնին և տասնհինգերորդ օրը նշում այն, որն անվանում են Շանգյուենծիե: Փառատոնի ժամանակ ամբողջ փողոցներն ու ճանապարհները զարդարված են լինում վառված լապտերներով, մարդիկ հետաքրքրաշարժ հանելուկներ են ասում լապտերների առնչությամբ, ուտում *յուենսիաո** և պարզապես վայելում լիալուսնի լույսը:

**Յուենսիաո - բրնձի ալյուրով պատրաստված խմորի գնդիկներ՝ լցոնված սև քնջութի սերմերով (թարգմ. ծանոթագր.):*

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 5
Մաս 1. Հրաշալի մշակույթ
Համաշխարհային մշակութային ժառանգությունը Չինաստանում 7
1. Կայսերական պալատը 7
2. Պեկինի Ամառային պալատը 9
3. Երկնային տաճարը 10
4. Մեծ պատը 12
5. Մոգաոյի քարանձավային տաճարները 14
6. Ցին դինաստիայի առաջին կայսեր դամբարանն ու թրծակավե բանակը 15
7. Սինանթրոպոսը Չժոուկոուդյանում 18
8. Կայսերական գերդաստանի ամառանոցը հարակից տաճարներով ... 19
9. Կոնֆուցիոսի ընտանեկան կալվածքը, տաճարն ու գերեզմանը 20
10. Ուդանշան լեռների հնագույն շինությունները 23
11. Պոտալա պալատական համալիրը Լհասայում 24
12. Հնագույն քաղաք Պինյաոն 25
13. Լուշան լեռը 27
14. Լիցզյան անտիկ քաղաքը 28
15. Սուչժոուի դասական չինական այգիները 30
16. Դացզուի ժայռաքանդակները 30
17. Ցինչենշան լեռն ուԴուցզյանյան ոռոգման համակարգը 31
18. Լունմեն բուդդայական անձավային տաճարը 32
19. Մին և Ցին դինաստիաների կայսերական գերեզմանները 33
20. Սիդի և Հոնցուն անտիկ գյուղերը 36
21. Յունգան քարայրները 37
22. Կայսերական քաղաքն ու Կոգուրյոյի դամբարանային համալիրը ... 39
23. Մակաո քաղաքի պատմական կենտրոնը 40
24. Յինսյուն՝ Շան կայսրության մայրաքաղաքը 41
25. Կաիպին քաղաքի Դյաոլոու բազմահարկ ամրոցներն ու գյուղերը ... 43
26. Տուլոու կավե տները Ֆուցզյան նահանգում 44
27. Ուտաի լեռը 46
28. Սունշան լեռան ստորոտում գտնվող Դենֆենի պատմական հուշարձանները 47
29. Արևմտյան Սիհու լիճն ու Հանչժոուի մշակութային լանդշաֆտը 48
30. Շանդու պատմական քաղաքը 49
31. Հունհե Հանի բրնձե սանդղավանդները 50
32. Մեծ ջրանցքը 51

33. Մետաքսի ճանապարհը 53

Մաս 2. Հրաշալի բնական տեսարաններ
Համաշխարհային բնական ու կրկնակ՝ և՛ մշակութային,
և՛ բնական ժառանգությունը Չինաստանում 56

Գլուխ 1. Համաշխարհային բնական ժառանգությունը 56
1. Ուլինյուան բնական արգելոցը 56
2. Ցզյուչժաիգոու ազգային պարկը 58
3. Հուանլուն բնական հանգստավայրը 59
4. Երեք զուգահեռ գետերի գեղատեսիլ տարածքները 60
5. Պանդաների բնակավայրերը Սիչուանում 62
6. Հարավային Չինաստանի կարստային գոյացությունները 63
7. Սանցին լեռը 64
8. Դանսիա պատմական տարածքը 65
9. Չենդզյան բնական արգելոցը 67
10. Տյանշան լեռնաշղթան 68

Գլուխ 2. Բնական և մշակութային ժառանգությունը
1. Տաիշան լեռը 69
2. Հուանշան լեռ-արգելոցը 70
3. Էմեիշան լեռը 72
4. Ուիշան լեռները 74

Մաս 3. Անտիկ մշակույթի կենցաղային բրածոները
Ոչնյութական ժառանգությունը Չինաստանում 76
1. Մյաոների գուգը 77
2. Ցուոչյուենի ճոխ հանգավորումը 78
3. Առյուծի պարը 78
4. Քուեն օպերան 81
5. Ար-ռեն ճյուան 82
6. Ուցիաո ակրոբատիկա 83
7. Շաոլին մարտական արվեստը 84
8. Տիբեթյան թանքա 84
9. Ձիու պոչամազով ասեղնագործությունը 85
10. Ցինգդըճեն խեցեգործական արհեստագործությունը 86
11. Սյուան թղթի պատրաստման տեխնիկան 87
12. Ավանդական չինական ախտորոշում ու ասեղնաբուժություն 88
13. Գարնանային փառատոնը 89

ՍՅՈՒԸՆ ՈՒԵՅՍԻՆ, ՃՈՒ ՍՅՈՒՆ

ՉԻՆԱՍՏԱՆԻ ՅՈՒՐԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Չինաստանի համաշխարհային ժառանգությունը

Անգլերեն տարբերակից թարգմանությունը՝
Քրիստինե ԲԱԼԱՅԱՆԻ

Հեղինակներ

Սյուընն Ուեյսին

ՉԺՀ Ժողովրդական ազատագրական բանակի միջազգային հարաբերությունների ինստիտուտի նախկին պրոֆեսոր Սյուընն Ուեյսինը այժմ աշխատում է Չինաստանի կոմունիստական կուսակցության Ցզյանսու նահանգային կոմիտեի կուսակցական դպրոցում, որպես գիտաշխատող: Նա վաղուց զբաղվում է հասարակական մշակույթի ու գրականության ուսումնասիրությամբ: Տպագրել ու լույս է ընծայել մի շարք առանցքային գրքեր և հրապարակել բազմաթիվ հոդվածներ չինական գլխավոր պարբերականներում:

Ճու Սյուն

Ավարտել է Ժողովրդական ազատագրական բանակի/ԺԱԲ/ օտար լեզուների ինստիտուտի չինարենի բաժինը: Աշխատել է ԺԱԲ-ի միջազգային հարաբերությունների քոլեջում, որպես չինարեն լեզվի ու գրականության դասախոս: Ճու Սյուն զբաղվում է հասարակական մշակույթի ու գրականության ուսումնասիրությամբ: Հրատարակել է տասնյակ գրքեր և հրապարակել բազմաթիվ հոդվածներ Չինաստանի գլխավոր ազգային ամսագրում:

Հրատ. խմբագիր՝ Հ. Ալեքսանյան
Սրբագրիչ՝ Թ. Մաթեւոսյան
Էջադրումը՝ Թ. Հարությունյանի
Կազմի ձեւավորումը՝ Մ. Սայիյանի

Թուղթը՝ օֆսեթ, չափսը՝ 70x108 $^{1}/_{16}$: Ծավալը՝ 6,25 տպ. մամուլ:
Տպաքանակը՝ 500:

Տպագրվել է «Դիզակ պլյուս» հրատարակչության տպարանում
ԼՂՀ, Ստեփանակերտ, Հ. Հակոբյան, 25

«ԳԵՂarm» հանդեսի մատենաշարով լույս են տեսել

«Թատերախաղեր Արեւմտյան գրականությունից» - 2010
Իոսիֆ Բրոդսկի. «Տեղատարափի շաչյունը» - 2011
Մ. Բախտին. «Դոստոեւսկու պոետիկայի խնդիրները» - 2012
«Սիրիուսի սրնգահարները»/Վ.Խլեբնիկով, Ն.Գումիլյով,
Վ.Խոդասեւիչ/ - 2012
Սերգեյ Դովլաթով. «Միայնակների երթը» - 2012
Յուրի Լոտման. «Սիֆ.Անուն.Մշակույթ» - 2012
Վառլամ Շալամով. «Կոլիմյան պատմվածքներ»- 2012
Ժարկո Միլենիչ. «Լեոնը՝ հրաշագործի աշակերտը»- 2013
Պավել Ֆլորենսկի. «Իկոնոստաս» - 2014
Ռուս կոնցեպտուալ պոեզիա/ Դ.Պրիգով, Վ.Նեկրասով,
Լ.Ռուբինշտեյն/ - 2014
Հենրիխ Սապգիր. «Զուգահեռ մարդը» - 2014
Վասիլի Գրոսման. «Կյանք եւ ճակատագիր» - 2014
«Կամուրջների խոռվությունը.
մետամետաֆորիստներ» - 2015
Ալեքսանդր Սոլժենիցին. «Մատրյոնայի կալվածքը»- 2015
Անդրեյ Պլատոնով. «Չեւենգուր. Գուբը.
Պատմվածքներ» - 2015
Արդի ռուսական վերլիբռ (անթոլոգիա) - 2015
Չինաստանի մշակույթի քրեստոմատիա - 2015
Ջիդի Մաջիա. «Հրեղեն խոսքեր» - 2015
Մա Քայ. «Սրտի արձագանքներ» - 2015
Եվգենի Վոդոլազկին. «Լավր» - 2015

Քայ Տյանսին. «Խաղաղ կյանքի երգը» - 2015
Ռուս այլախոհական պոեզիա (անթոլոգիա) - 2015
Չինական մտքի եւ մշակույթի հիմնական
հասկացություններ(հատոր 1) - 2016
Յու Ջիան. «Անձրեւից պատսպարվող թռչունը» - 2016
Պավել Բասինսկի. «Լեւ Տոլստոյ.
Փախուստ դրախտից» - 2016
Չժան Ցզի-յան. «Երազ ծովի մասին» - 2016
Վան Զենչկի. «Երիտասարդ վանականի սիրո
պատմությունը» - 2016
Լյուդմիլա Պետրուշեւսկայա. «Սեր. երջանկություն.
ռեքվիեմ» - 2016
Անդրեյ Բելի. «Պետերբուրգ» - 2016
«Դիկոռոսներ. Անհայտ պոետների ապաստան»
(անթոլոգիա) - 2016
Ռուս մինիմալիստներ (անթոլոգիա) - 2016
Իձյե Թան. «Կոնֆուցիականությունը, ուդդայականությունը,
դաոսիզմը, քրիստոնեությունը եւ չինական
մշակույթը» - 2016
Սյուն Շի-ի. «Երկնային կամուրջը» - 2016
Չինական մտքի եւ մշակույթի հիմնական
հասկացություններ (հատոր 2 եւ 3) - 2016
Դոնգ Քիանգ. «Ամուսնություն» - 2017
Դոնգ Քիանգ. «Կացարաններ» - 2017
Ինգեբորգ Բախման. «30-րդ տարին» - 2017
Ջիդի Մաջիա. «Ընձառյուծից մինչեւ Մայակովսկի» - 2017

Չինական մտքի եւ մշակույթի հիմնական
հասկացություններ(հատոր 4) - 2017
Անդրեյ Վոլոս. «Վերադարձ Փանջիռուդ» - 2017
Դոնգ Քիանգ. «Թաղում» - 2017
Դոնգ Քիանգ. «Փառատոներ» - 2017
Դոնգ Քիանգ. «Ուտեստներ» - 2017
Սյաո Ցյան. «Վիշապի մորուքներն ընդդեմ
նախագծերի» - 2017
Ուան Ցուոլիան. «Մերձակցության աստիճաններ» - 2017
Ֆյոդոր Սոլոգուբ. «Ընչաղեւը» - 2018
Չինական մտքի եւ մշակույթի հիմնական
հասկացություններ (հատոր 5) - 2018
Ու Չուն. «Չինական մշակույթ. փիլիսոփայություն» -2018
Մարտիրոս Ոբն. «Մոմերն իզուր են այրվել մեղքերիս համար» - 2018

Ոգի-Նաիրի
Vogi-Nairi

էլ. հասցե՝ vogi.nairi@mail.ru
հեռ.: +37497252323